



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆԱՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



ԱՇԽԵՍՍՈՒՄԵՆ

ՏՐԱՐԱՆ ԵՄՔՈՒԹՅԱՆ ՏԵՏԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՁՄԻՐՈՒՄ


ՅՊԱՐԱԿՈՒՄ ԵՒ ԲԻՅՈՒՄ

1869

4568

~~W. J. B. & Co.~~


~~641~~



~~No 1667~~

2728


041. 7. 11. 11.



№ 1667

2728

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ




ԱՇԽԱՏԱԾԻՒՆՑ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐԱՌԹԻՒՆ ՏԷՏԷՆՄ



ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ




4568



ԶՄԱՐՔԵՐԱԾ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆՄ

1868



1890

...

...

...

...

...

...

1890

ՅԱԳՓԿՍԻ ԿՅՈՒՄՆԱՆՔԻ
 ՅԱԳՓԿՍԻ ԿՅՈՒՄՆԱՆՔԻ
 60 հիւրանոց



Ազգային վարժարաններու մէջ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՍ
 գտած չա. ընդունելու թիւնք քաջանկերեց զիս անոր եր-
 կրորդ տպագրութիւնք առելի մեծ խնամքով 'ի լոյս ըն-
 ծայելէ եւ քանի մը կարեւոր փոփոխութիւններ եւս ը-
 նելչ ըստ խնդրոյ դատաւորաց :

Ընթերցարանիս շեզուն ջանացի առելի պարգել , որ-
 պէս զի առայք կարդացածնին դիւրաւ հասկընալով՝ շու-
 տով վարժութիւն ընթերցանութեան :

Ատիկանաւարար առելի փոքր տատերու սովորեցընե-
 լու համար՝ իւրաքանչիւր մասը իրարմէ տարբեր մե-
 ծութեամբ գրելով տպագրել տուի :

Ընթերցարանս դարձեալ պատկերացարդ տպել ար-
 ժան համարեցի . քանզի պատկերները ընթերցանութիւ-
 նք զուարեանլի ընելէ զստ՝ ուսումնք կը դիւրացընեն ,
 եւ պատմութիւնները առելի աղէկ եւ առելի շուտ կը
 տպաւորեն առայոց մտքին մէջ : Այս նպատակաւ առա-
 ջին տպագրութեան պատկերներէն առելի փոքր եւ ա-
 ռելի ընտիր պատկերներ բերել տուի յատկապէս :

Վերջապէս այս տպագրութիւնք թէեւ առելի ըն-
 դարձակ եղաւ , բայց առելի դիւրագիծ ընելու աշ-
 խատեցայ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ



Թո՛ղջ տուք մանկաւոցդ եւ մի արգելուք զդոսս զաչ առ իս ,
զի պղտխակացդ է արքայոթիսնն երկնից: (Մատթ. ԺԹ. 14):

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Գ Ա Ս Ա Ռ Ա Զ Ի Ն

Մարդս ինչպէս կը թնի :

Ամենքնիս ալ աշխարհք եկած ա-
տեննիս տղէտ կը ծնինք . ոչ խօսիլ դի-
տենք , ոչ կարդալ և ոչ գրել :

Ի՛նչ պիտի ըլլայինք արդեօք թէ որ
այնպէս մեծնայինք , և մեր ծնողքը ու
վարժապետները մեզ բան չսորվեցընէին :

Մշուշտ անբանի պէս պիտի մնայինք
և այն վայրենի ազգերուն պիտի նմանե-
ինք , որոնք կարդալ ու գրել չեն գիտեր
և անասունի պէս կ'ապրին :

Մեր ծնողքը զմեզ կը խնամեն , կը
մեծցընեն , և սկզբնական կըթութիւն-
ներ կու տան . բայց կարդալ գրելը և
գիտութիւնները դպրատան մէջ կը սոր-
վինք :

Դպրատան էջնայն հպատակը :

Դպրատունը կարդալու, գրելու, բան սորվելու, միտքերնիս լուսաւորելու, բարքերնիս ուղղելու, և հաւատոյ ճշմարիտ սկզբունքը սորվելու տեղ մ'է :

Փոքր տղայք բան չեն գիտեր, անոր համար իրենց ծնողքը զիրենք դպրոց կը դրկեն, որ կարդալ ու գրել սորվին, ուսման և գիտութեան պարապին, աղէկ կրթութիւններ ստանան, և լաւ ճանչնան թէ որոնք են մարդուս առ Մատուած, առ ընկերն և առ անձն ունեցած պարտքերը :

Խոհեմ տղան յօժարութեամբ դպրոց կ'երթայ, ծնողաց և վարժապետին հնազանդ կ'ըլլայ, անոնց խրատները մտիկ կ'ընէ, առած դասերը աղէկ կը սորվի, և իր ատենը ամենեին պարապ չանցընէր :

Իւր պարտքերը աղէկ կատարող տղան իւր ծնողաց և վարժապետին սիրելի կ'ըլլայ, շուտով ամեն բան կը սորվի և խելացի ու կրթեալ կ'ըլլայ :

ԳԼՍ Գ.

Գիողիմէոսի աշակերտութիւնը:

Գիողիմէոս փիլիսոփայան Անտիատենէս փիլիսոփայէն դաս առած ատենը՝ իր ընկերակիցները այնչափ ծոյլ էին և ուսմունք սորվելու այնչափ սէր չունէին, որ Անտիատենէս օր մը զամենքն ալ վարնատեց, և չուզեց մէկ մ'ալ անոնց դաս տալ:

Բայց Գիողիմէոս որ դիտութիւն սորվելու մեծ իղձ մը ունէր, անոր յանդիմանութիւնները և սպառնալիքը բանի տեղ չզնելով, քովէն չէր զատուեր, այնչափ որ Անտիատենէս օր մը բարկահալով, զան աղէկ մը ծեծեց:

Բայց Գիողիմէոս առանց վհատելու և նեղանալու՝ այսպէս պատասխանեց անոր. « Արչափ կ'ուզես՝ ծեծէ՛, պիտի չկրնաս գտնել այնպիսի խիստ դաւադան մը, որ զեա քեզմէ զատէ »:

Անտիատենէս այս խօսքը լսելով, հասկըցաւ որ Գիողիմէոս բան սորվելու հաստատ միտք ունի, և օր մը խիստ դի-

տուն մարդ մը պիտի ըլլայ, իւր քովը
ընդունեց զան, և սիրով խմաստութիւն
սորվեցուց անոր :

ԴԱՍ Դ.

Ուսման սորվելու ժամանակը :

Տղայութեան մէջ կրնանք ամեն ուսում
և գիտութիւն սորվել. երբ մեծ-
նանք, ուրիշ գործեր կամ զբաղմունքներ
կ'ունենանք, և ժամանակ չենք ունենար
բան սորվելու :

Տղայութեան մէջ ամեն բան դիւրաւ
և շուտ կը սորվենք. եթէ այս հասակիս
մէջ ուսմանց հետեինք, մտքերնիս կը
լուսաւորի, կ'ընդարձակուի և գիտուն
կ'ըլլանք :

Եւայց թէ որ մեր ժամանակին յար-
գը չգիտնանք, և տղայական անօգուտ
խաղերու հետեւելով, դպրոցին մէջ մեր
ուսման ժամերը շատախօսութեամբ և
պարծապ տեղը վատնենք, մեծցած ժա-
մանակնիս տգէտ և անպիտան մարդիկ
կ'ըլլանք և ամենուն ծաղրելի :


ԴԱՍ Ե.

Ե-կղերանի աների-զո-մի-նը

Աթենացիք ու Մեգարացիք իրարու
այնպէս թշնամացեր էին, որ արգելք
դրեր էին որ եթէ Մեգարացի մը Ա-
թենք քաղաքը ոտք կոխէ՝ մահապարտ
համարուի:

Աւկղիտէս անունով Մեգարացի մը
այս արգելքէն ետև՝ Մոկրաստ փիլիսո-
փայէն գիտութիւն սորվելու համար չե-
կրնալով յայտնի Աթենքի մէջ կենալ,
կնոջ հազուատ հազած և գլուխը քօղով
ծածկած՝ իրիկուան դէմ Մեգարայէն
կ'ենէր, քալելով մինչև Աթենք կու-
գար և Մոկրասէն դաս առնելէն ետև՝
առաւօտեան դէմ վերստին իւր քաղաքը
կը դառնար:

Այս կերպով շարունակելով և իւր
կեանքը վտանգի մէջ դնելով, Աւկղիտէս
երեւելի փիլիսոփայ մը եղաւ:



ԴԱՍ 2.

Ժամանակ, աշխատողին :

Ժամանակը թեևս որ անխի կը նմանի, որ շարունակ դառնալով կը թռչի կ'երթայ :

Աորսուած ժամանակը վերատին ձեռք չանցնիր, ուստի և ետքէն զղջայն ալ օգուտ չըներ :

Մնործ կենալով աւելի շատ կը ձանձրանանք քան թէ աշխատելով :

Մյսօրուան ընել կրցած դործդ բնաւ վաղուան մի թողուր :

Ժամանակը դրամի կը նմանի. փուճ տեղը մի վատներ զայն որ ետքը չզղջաս :

Ինքզինքդ աշխատութեան վարժեցուր, աշխատէ միշտ ու Մասուած կ'օգնէ քեզի :

Պմանք չեն աշխատիր և կ'ըսպասեն որ բազմը իրենց ժպտի . այնպիսիները անօթի կը մնան :

Մշխատութեան առջև դժուար բան չկայ ամենեին :

ԴԱՍ Ե.

Ժամանակին յարգը :

Մէքրէտ թագաւորը, որ ըրած էրէւելի գործերովը Մեծն Մէքրէտ կոչուեցաւ, իւր ստացած փառքին մէկ մասը իւր ժամանակը աղէկ գործածելուն կը պարտաւորի :

Մէքրէտ ուզեց օրուան քսան և չորս ժամերը զանազան մասերու բաժնել, որպէս զի իւր ամեն մէկ զբաղման, հանդրատութեան, կերակրոյ և քնոյ համար զանազան ժամեր որոշէ :

Սակայն որովհետև իւր ժամանակը զեռ ժամացոյցները հնարուած չէին, մեծ դժուարութիւն կը կրէր իւր փափաքը 'ի գործ դնելու :

Օդը պարզ եղած օրերը արևուն քնթացքէն դիւրին էր իւր ատենը վեր 'ի

վերոյ որոշել, բայց զիշերները և արևը
ամպով պատած օրերը անկարելի էր գիտ-
նալ թէ ժամը քանի է :

ԴԱՍ Ը.

Ուտի երկար մտածելէ և զանազան
փորձեր ընելէ ետև՝ հրաճայեց որ հա-
ւասար հաստութեամբ և երկայնու-
թեամբ այնպիսի մոմեր թափեն, որոնց
վեցը հատը հետոհետէ վառելով մէկ
օր դիմանան :

Այս կերպով յաջողեցաւ օրուան
քսան ու չորս ժամերը վեց մասի բաժնե-
լով՝ իւր ամեն օրուան գործերուն համար
զանազան ժամեր որոշել :

Ամեն մէկ մոմը չորս ժամ կը վառէր,
և տասներկու բաժանում ունէր, և ա-
մեն մէկ բաժանումը քսան վայրկեան կը
նշանակէր :

Այս մոմերը պալատին դրան վրայ
դրուած լապտերի մէջ կը վառէին, և
երբ մոմին մէկը հատնէր, կու գային
կ'իմացընէին իրեն :

ԳԼՍ Թ.

Աշխատութեան պատուը :

Ասկէ գրեթէ երկու հարիւր տարի առաջ Ռուսաց ազգը դեռ բարբարոսութեան և անկրթութեան մէջ կը գրտնուէր :

Մեծն Պետրոս Ռուսիոյ թագաւորը Աւրուսիոյ արուեստները իւր երկրին մէջ մտցընելու և իւր ժողովուրդը քաղաքակրթելու համար ամեն աշխատութիւն յանձն առաւ :

Իւր գահը և արքունիքը թողուց, Հոլանտա գնաց, և երկու տարի օգտակար արուեստներ սորվելու պարապեցաւ :

Այս արուեստներուն մէջ ամենէն երևելին է նաև շինելու արուեստը . թագաւորը գործաւորի զգեստ հագած՝ սղոց, մուրճ և կարկին կը գործածէր և նաև շինողներուն հետ հաւասար կ'աշխատէր :

ԳԼՍ Ժ.

Գործաւորները իրենց մէջ թագաւոր մը տեսնելով, ՚ի սկզբան կը շուա-

րէին , բայց քիչ քիչ սովորելով սկսան
անոր հետ ընտանենալ :

Մեծն Պետրոս իւր ձեռքը վաճառն
թնդանօթով նաւ մը շինեց :

Երկաթ ձուլելու արուեստն ալ սոր-
ված ըլլալով , իւր երկիրը դառնալէն քա-
նի մը օր առաջ՝ երկաթի ձողեր ձուլեց
և իւր նշանը անոնց վրայ դրոշմեց :

Այս երկաթեայ ձողերը իրենց բուն
արժէքովը ձուլարանին տիրոջը ծախեց ,
և անոնց ստակովը մուճակներ գնեց , դո-
րոնք հագնելով կ'ըսէր . « Ահա այս մու-
ճակները իմ ճակտիս քրտինքովը շա-
հեցայ » :

ԴԱՍ ԺԱ.

Չանսպան սպիտակ բարեկալ - առջորտ - Նի - ննէր :

Քաղաքակրթեայ ազգերը զերար բա-
րեկու համար դիտարկնին կը բանան ,
դուխնին ու բոլոր անձերնին քիչ մը կը
ծռեն , իրարու աջ ձեռքը կը բռնեն և
կը թոթվեն :

Չինացիք բարե տալու ատեն կերպ

կերպ շարժումներ կ'ընեն և կը կտրր-
տուին . երկու ձեռքերնին կուրճքերնուն
վրայ կը տանին և գլուխնին կը ծռեն :

Երկու բարեկամներ երբ երկար ատե-
նէ 'ի վեր զերար տեսած չեն, իրարու
հանդիպած ժամանակնին՝ ծնկան վրայ
կու դան, գլուխնին մինչև գետինը կը
ծռեն, և այսպէս երկու երեք անգամ կը
կրկնեն :

Ճարոնցիք բարեւելու համար իրենց
մուճակներէն մէկը ոտքէն կը հանեն :

Փիլիպեան կղզիներուն բնակիչները
իրենց բարեկամը տեսած ատեննին մէկ
կամ երկու ձեռքերնին մէկէն երեսնուն
վրայ կը տանին, և մէկ ոտքերնին վեր
կը վերցընեն. եթէ մէկը պատուել ու-
ղեն, անոր ձեռքը կամ ոտքը կը բռնեն
և իրենց երեսին կը քսեն :

Հնդկաստանցիք իրարու մօրուքը բրո-
սելով զերար կը բարեւեն :

Մսիայի հարաւային կղզիներուն մե-
ծագոյն մասին մէջ և հիւսիսային բեւե-

ուին մօտ բնակող ազգերը քիթ քիթ
քսելով զերար կը բարեեն :

Մյանիս ըսուած ազգը բարե տուած
մարդուն ականջը կը փչէ :

Մփրիկէի Սօքօթօրա կղզիին բնա-
կիչները իրարու ուար համբուրելով կը
բարեեն :

Հօրն կղզիներուն բնակիչները բարե-
ւելու համար փորերնուն վրայ գետինը
կը փրուին կը պառկին :

ԴԵՍ ԺԲ.

Մարտի 18-ին Տարսիս ըլլալու համար ինչ պէտք է ստիպել :

Դպրատան մէջ սորվելու բաներնիս
միայն կարգալ, գրել, գիտութիւններ
և լեզուներ սորվելը չէ, այլ պէտք է սոր-
վիլ նաև թէ որո՞նք են մարդուս առ Մս-
տուած, առ ընկերն և առ անձն ունե-
ցած պարտքերը :

Քանզի ուսմունքը և գիտութիւնները
մեր միտքը միայն կը լուսաւորեն, այլ
մենք պէտք ենք անոնց հետ սորվիլ նաև
մեր բարքն ալ ուղղել, բարին ու չարն

ճանչնալ մոլութիւններէ ետ կենալ, և
առաքինութեանց ետէք ըլլալ :

Պէտք ենք սորվել թէ ինչպէս պիտի
ապրինք աշխարհիս մէջ, ինչպէս պիտի
վարուինք ծնողաց, եղբարց, մեծերու,
ընկերներու և թշնամիներու հետ :

ԳԼՍ ԺԳ .

Մասնակ սոլան :

Մասնակ սոլան ուղերով իւր հայրե-
նիքէն հեռու ուրախ կեանք մը անցընել,
իւր ժառանգութեան բաժինը առաւ,
հեռու քաղաք մը դնաց, ու հոն այն-
պիսի անասակ կեանք մը վարեց որ բո-
լոր ունեցած ստակները փճացուց և խեղճ
մնաց :

Ուստի դնաց ուրիշ մարդու քով ծա-
ռայութեան մտաւ, ու յետին թշուա-
ռութեան մէջ անոր խոզերը կ'արածէր,
և այս դարշելի անասուններուն կերած
այծեղջիւրին ալ կարօտ կը մնար :

89-54





Այս խեղճութեան մէջ՝ իւր հօրը
 ծառաները միտքը բերաւ, որոնք հան-
 դիստ կեանք կը վարէին և բանի մը
 կարօտ չէին. ուստի նորէն հօրը տունը
 դարձաւ աղաչելով որ զինքը իբրև ծա-
 ռայ ընդունի :

Յիսուս այս առակը պատմեց ցուցը-
 նելու համար որ Աստուծոյ հեռացող
 տղան թշուառութեան մէջ կ'իյնայ :
 Քայց պէտք չէ յուսահատիլ. Աստուծ
 դարձի եկող մեղաւորին յանցանքը կը
 ներէ :

ԴԸՍ ԺԴ.

Արեւելեան Կրօնաբանական Գիտություններ :

Հէմսթիտ զիւղը բնակող ազնուա-
կան մը իւր Խրչանտացի ծառային հետ
Ղոնտոն բնակող բարեկամի մը կենդանի
նապաստակ մը ընծայ կը զրկէ :

Գիւղը Ղոնտոնէն զրեթէ հինգ մղոն
հեռու ըլլալուն՝ ծառան կէս ճամբան
պանդոկ մը կը մտնէ, որ յողնութիւնը
անցընէ ու գաւաթ մը գարեջուր խմէ :

Քանի մը կատակասէր մարդիկ, ո-
րոնք նոյն պանդոկին մէջ կը խմէին,
Խրչանտացիին պարկին մէջ եղածը իմա-
նալով, և անոր կատակ մը ընել ուզե-
լով, զան խօսքի կը բռնեն, ու իրենցմէ
մէկը կ'երթայ նապաստակը պարկէն կը
հանէ և անոր տեղը կատու մը կը դնէ :

Խրչանտացին գարեջուրը խմելէն ետեւ
պարկը կ'առնու և կը մեկնի : Արբ Ղոն-
տոն կը հասնի, ընծան բարեկամին կը
տանի . « Պարոն, կ'ըսէ անոր, տէրա-
ձեզ կենդանի նապաստակ մը զրկեց :

— Եստ աղէկ, կ'ըսէ բարեկամը, բաց
 նայիմ" :

Ծառան պարկը կը բանայ, և ապ-
 շած կը մնայ երբ անոր մէջ կատու մը
 կը տեսնէ : « Տէր Եստուած, կ'ըսէ,
 ճշմարիտ՝ Հեմսթրիտի մէջ նապաստակ
 էր այս, պարկիս մէջ դնելնին տեսայ :

— Գնա՛ բանդ, կ'ըսէ բարեկամը,
 գ.քեզ ծաղր ընել ուզեր են" :

ԳԱՍ ԺԵ.

Իրլանտացին պարկը վերատին կռնա-
 կը կը զարնէ և դէպ 'ի զիւզը վերա-
 դառնալու ատեն՝ դարձեալ նոյն պան-
 դոկը կը մտնէ և պատահաճառ այն կա-
 տակը ընողներուն կը պատմէ :

Ետնք խաղը կատարեալ ընելու հա-
 մար՝ պարկին մէջէն կատուն կը հանեն
 և տեղը վերատին նապաստակը կը դնեն :

Իրլանտացին անկասկած անկէ մեկ-
 նելով՝ իւր տունը կը համնի և տիրոջը
 կ'ըսէ. « Տէր իմ, գիտէ՞ք որ զրկածնիդ
 նապաստակի տեղ կատու է եղեր :

— Ի՞նչ կ'ըսես, յիմար ծառայ, կը պատասխանէ ազնուականը: — Ա՛հա, ձեր աչքովը տեսէք”:

Ա՛յս ըսելով պարկը կը բանայ և նա պատակը դուրս կը ցատկէ: Իրլանտացին հազիւ կրնար իւր աչաց հաւատալ և քիչ մը ատեն ապարան կը մընայ, քանզի կը կարծէր որ Հէմսթիտի մէջ նապաստակը Սոնտոնի մէջ կատու մը եղեր էր:

”Ա՛ռ նապաստակը շուտով, կ'ըսէ տէրը, դիր պարկիդ մէջ և դրկած տեղս տար վերստին:

— Ա՛չ, տէր իմ, կը պատասխանէ ծառան, ալ չեմ երթար հոն. քանզի եթէ Սոնտոնի գէշ օդը կրնայ նապաստակ մը կատուի փոխել, կարելի է զիս ալ էշի մը փոխէ և մի կարծէք որ ինքզինքս այնպիսի վտանգի մէջ դնեմ, որ բոլոր կենացս մէջ չորս ոտքով քայլեմ:

ԴԱՍ Ժ. Զ.

Ի՞նչ է ճարտարագիտական Լուստուած :

Մարդու առաջին պարտքն է իւր արարիչը ճանչնալ, սիրել և պաշտել :

Օ՛ Լուստուած սիրելն ու պաշտելը միայն խօսքով պիտի չլլայ, այլ գործքով ու արդեամբ :

Պիտի սիրես քու Տէր Լուստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգւովդ և բոլոր կարողութեամբդ :

Լուստուած կուզէ որ իրմէ վախնանք, իր պատուիրանները պահենք, և արդարութեան ճամբան քալենք :

Այլ ի՞նչ Լուստուածմէ չվախնանք, իր պատուէրները չպահենք և չարութեան ետեւէ ըլլանք, Լուստուած այլ զմեզ կը պատժէ :



ԴԱՍ ԺԷ.

Առաւելան աղօթի :

Հայր իմ երկնաւոր, որ ամեն վայրկեան մեր վրայ կը հսկես, գոհանամ զքէն որ այս զիշեր առանց վտանգի և առանց փորձանաց անցընել տուիր, ու արժանի ըրիր զիս այսօր ալ քու շնորհքներդ վայելելու :

Օրհնեալ ես դու տէր իմ Աստուած, որ քու առատ ողորմութեամբդ մեր վրայ կը զթաս : Տուր ինձ քու շնորհքդ որ այսօր առանց մեղաց և սրբութեամբ անցընեմ :

Օրացուր զիս որ սատանային ամեն որոգայթներուն դէմ դնեմ, և չըլայ թէ անորմէ խաբուելով քու կամքիդ դէմ գործեմ, ու զքեզ բարկացընեմ :

Օրհնէ իմ ծնողքս և վարժապետներս,
որոնք զիս քու շնորհացդ մէջ կը մեծ-
ցընեն և կը կրթեն, ու երկար և երջանիկ
տարիներ շնորհէ անոնց:



Ի Ա Ս Ժ Ը .

Արեւոյեան աղօթք :

Արկրպագելով Արքայ Արքորդութեանդ,
շնորհակալ եմ, ո՛վ ամենակալ Աստուած,
որ այսօր անվտանգ անցընելով, զմեզ
այս գիշերուան հասուցիր:

Ողորմէ մեզ և նոյն գութը ունեցիր
որ այս գիշեր ալ ամեն տեսակ գիշերային
փորձութիւններէ ազատ ըլլանք. քան
զի եթէ քու ողորմութիւնդ մեր վտայէն
վերցընես, մենք կ'ոչընչանանք:

Ներէ իմ այսօրուան դործած կամայ
և ակամայ մեղքերուս, և տո՛ւր ինձ քու
շնորհքդ, որով ամեն տեսակ մեղքերէ հե-
ռու կենայով՝ արժանի ըլլամ քեզի:

ԴԵՍ ԺԹ.

Օ՛նոողացաւիրոս-նիւն:

Աստուածային և մարդկային օրէնքը
կը հրամայեն մեզ որ մեր ծնողքը սի-
րենք, պատուենք և անոնց հնազանդ
ըլլանք:

Քանզի աստուծմէ ետքը անոնց կը
պարտաւորինք մեր կեանքը և երջան-
կութիւնը:

Մերկ և տկար կը ծնինք, բայց մեր
ծնողքը մեծ խնամքով ու նեղութիւն-
ներով մեր ամեն պէտքը կը հոգան,
խանդաղատանօք և զգուշութեամբ զմեզ
կը մեծցընեն, և մեր հաւատքը մեզ կը
տորվեցընեն:

Աստուծմէ ետքը մէկը չկրնար ըլլալ
որ մեր ծնողաց պէս զմեզ սիրէ, ու մեր
վրայ գլխայ:

Որչափ մեր բարեկամները մեր վրայ
սէր և համակրութիւն ցուցընեն, կրնան
օր մը զմեզ երեսի վրայ թողուլ. բայց

մեր ծնողքը ամենևին զմեզ չեն թողար, երբէք զմեզ չեն մոռնար, այլ միշտ մեր վրայ կը գլխան, և միշտ մեր բարութիւնը կ'ուզեն:

Պատուենք ուրեմն մեր հայրն ու մայրը, սիրենք զանոնք ու անոնց անհնազանդութիւն չընենք:

Մեծ ապերախտ պիտի ըլլանք մանաւանդ թէ Մատուածային և մարդկային օրինաց դէմ գործած պիտի ըլլանք եթէ այս պարտաւորութեան դէմ մեղանչենք:

ԻՅՍ Ի .

Արեւոյն համբ ողբ-ոյն յանկարծ իօտիլ:

Պարսից Աւերոս թագաւորը երբ Ալեքսանդրոց Արեւոս թագաւորին Վարդիկէ մայրաքաղաքին սիրեց, իւր զօրքերը քաղաքին մէջ ցրուած սկսան կողոպտել:

Մտնցմէ մէկը Արեւոսի պալատը մտնելով, երբ սուրը վերցուցած անոր գլխուն պիտի զարնէր: Արեւոսի համբ աղան տեսնելով որ իւր հայրը պիտի

սպաննուի, իւր սրտին անհնարին ցաւէն
լեզուին այնպիսի ոյժ մը կու տայ, որ
ձայնը կը բացուի և կը պռուայ. «Վա՛ր
առ սուրդ, Արեւոս հայրս կը սպաննու»:

Չինուորը տղուն ցաւալի ձայնին վրայ
սուրը վար կ'առնու, ու Արեւոս մահուա
նէ կ'ազատի, և իւր որդւոյն հետ Աբերտաի
կը տարուի:

ԻԱՍ ԻԱ.

Օ՛նուղասիրտ-Նի-ն Հարձասորեալ:

Փրետերիկոս Տրուսիոյ թագաւորը
օր մը քանի մը անգամ զանգակը զար
նելէն ետե՛ տեսնելով որ մարդ մը չգար,
գուրս կ'ելնէ կը նայի որ իւր սենեկա
պանը աթոռի մը վրայ խօրտանկ կը քը
նանար:

Անոր կը մօտենայ որ արթնցընէ,
բայց զրպանէն գուրս ելած թղթի մը
ծայրը տեսնելով, հետաքրքրութեամբ
կ'ուզէ անոր ինչ ըլլալը գիտնալ: Աւտի
կամաց մը կը քաշէ զայն և կը տեսնէ
որ երիտասարդին մայրէն գրուած նա
մակ մ'էր:

Մայրը շնորհակալ կ'ըլլար զամբակէն որ իւր կարօտութեան օգնելու համար՝ առած ամսականին կէսը իրեն կը գրկէր, և նամակը կը վերջացընէր անոր օրհնութիւններ տալով :

Թագաւորը նամակը կարդալէն ետե՛ առանց ձայն հանելու իւր սենեակը կը մտնէ, ոսկիով լեցուն քսակ մը կ'առնու և զգուշութեամբ նամակին հետ անոր գրպանը կը դնէ :

Ատքը իւր սենեակը կը դառնայ, և զանգակը այնպէս սաստիկ կը հնչեցընէ, որ երիտասարդը քունէն ցատկելով ներս կը վազէ: « Ա'երևի թէ անուշ կը քնանայիր », կ'ըսէ անոր թագաւորը :

ԴԱՍ ԻՐ .

Խեղճ սենեկապանը վախնալով կը ջանայ ինքզինքը արդարացընել և իւր շփոթութեանը մէջ յանկարծ ձեռքը գրպանը կը տանի, և մէջը քսակ մը զգալով՝ դուրս կը հանէ զայն, և ոսկիները տեսնելով՝ գոյնը կը նկատէ, թագաւորին կը նայի և առանց բերանէն

խօսք մը հանել կարենալու կ'ըսկսի արտասուք թափել :

“ Ի՛նչ է այն, ի՛նչ ունիս, կը հարցընէ թագաւորը: — Ա՛հ, տէր իմ, կը պատասխանէ երիտասարդը անոր ոտքն իյնալով, անշուշտ թշնամի մը պիտի ունենամ որ իմ կորուստս կ'ուզէ, վասն զի չեմ գիտեր ի՛նչ կը նշանակէ այս գրպանիս մէջ գտած ստակս :

— Ա՛նհոգ եղիք, տղաս, կը պատասխանէ թագաւորը, Աստուած շատ անգամ իւր բարիքը քնացած ժամանակնիս մեզ կը զրկէ : Ա՛յդ քսակը մօրդ զրկէ, իմ կողմանէս ալ ողջունէ զինքը և ըսէ որ այսուհետեւ իրեն և քեզ ես խնամք պիտի տանիմ” :

Ա՛յս խօսքերուն վրայ ծնողասէր երիտասարդին տրամութիւնը ուրախութեան փոխուեցաւ :

ԴԱՍ ԻԳ.

Տղա՛ս պարտին հնազանդիւ իրենց ծնողաց :

Եւ անկան չէ որ մեր ծնողքը սիրենք

միայն, այլ պէտք ենք հնադանդ ըլլալ
և անոնց կամքին դէմ բան չընել:

Մտնք մեզմէ աւելի փորձառու են,
մեզ ինչ հարկաւոր ըլլալը գիտեն, ա-
դէկն ու դէշք, օգտակարն ու մնասակարը
մեզմէ ադէկ կը ճանչնան:

Ծնողք իրենց զաւակները սիրած չեն
ըլլար, եթէ անոնց պակասութիւնը կամ
յանցանքը տեսնեն և ձայն չհանեն:

Եւ եթէ ծնողք մեր պղտիկութենէն
մեր պակասութիւնները չուզեն և զմեզ
չխրատեն, անկիրթ կը մեծնանք և ա-
նառակ կ'ըլլանք:

Ուստի երբ մեր պակասութեան հա-
մար զմեզ խրատեն, յորդորեն, յան-
դիմանեն և պատժեն իսկ, պէտք ենք
առանց տրանջելու և ուշադրութեամբ
մտիկ ընել անոնց, և շտրհակալ ըլլալու
ենք որ մեր բարւոյն համար զմեզ կը
խրատեն:

ԴԱՍ ԻԴ .

Ճարոնցի այլի կողմ իր զաւակաց շնորհասիրութեանը :

Ճարոնցի կին մը երեք զաւակով այլի մնալով, իւր ապրուստը կը հողար, թէպէտև իւր ընտանեաց ծախքը չափաւոր էր, սակայն իւր փոքր զաւակաց աշխատութեան արդիւնքը միշտ բաւական չէր ըլլար իրեն և որդւոցը :

Մայրասէր զաւակները իրենց մայրը այսպիսի կարօտութեան մէջ տեսնելով, յուսահատութեան մէջ էին և ինչ բներնին չէին գիտեր :

Այն օրերը իրենց քաղաքին մէջ գողութիւն մը պատահելով, ոստիկանութիւնը խիստ մեծ գումար մը խոստացեր էր յանցաւորը գտնողին :

Արեք եղբայրները կ'որոշեն որ իրենցմէ մէկը գողը համարուի, և միւս երկուքը զան ոստիկանութեան մատնեն, մէջերնին վիճակ կը ձգեն, և կրտսեր եղբայրը կը մատնուի :

Քատաւորը հարց ու փորձ կ'ընէ,

տղան իւր կեղծ գողութիւնը կը խոստովանի, և բանտ կը դրուի, իսկ միւս երկուքը խոստացուած վարձքը կ'ընդունին:

ԴԼՍ ԻԵ .

Նայց իրենց եղբօր վտանգը տեսնելով, սիրտերնին ցաւով կը լեցուի, հնարք կը գտնեն իրենց եղբօր բանտը կը մրանեն, և խանդաղատանօք զան դրկելով, երեքնին միատեղ դառն արուստաւք կը թափեն :

Դատաւորը դիպուածով զանոնք տեսնելով, այս մատնութեան գաղտնիքը իմանալու համար մատնիչները բանտէն դուրս ելած ատեն՝ ետեւէն ծառայ մը կը զրկէ որ նայի թէ ո՛ւր պիտի երթան:

Ծառան իրեն հրամայուածը կը կատարէ, և կը պատմէ դատաւորին թէ այն երկու տղաքը տուն մը մտնելով իրենց ըրած կեղծ մատնութիւնը մայրերնուն պատմեցին, և խեղճ կիներ այս ըրածնին լսելով, աղիողորմ ձայներ հանեց և հրամայեց անոնց որ երթան ա-

ուած ստակնին ետ դարձնեն ու իրենց եղբայրը ազատեն, ըսելով թէ աւելի լաւ կը համարի անօթութենէ մեռնիլ, քան թէ իւր սիրելի որդւոյն մահուամբ իւր ապրուստը հոգալ:

Դատաւորը այս դիպուածին վրայ դարմացած՝ բանտարկեալը վերստին իւր առջևը բերել կու տայ, կ'ըսպառնայ անոր, բայց տղան մօրը սիրոյն համար իւր խոստովանութեան վրայ հաստատ կը մնայ:

Այն ատեն դատաւորը անոր ճնողասիրութեան վրայ հիանալով, չկրնար իր արտասուքը բռնել, ու զան զգուելով ազատ կը թողու և իւր ողորմելի մօրը թողակ մը կը կապէ:

ԴԵՍ ԻԶ.

Արտասն:

Արբ փոքր մանուկ մ'էիր, ու դեռ ոչ խօսիլ կրնայիր և ոչ ուրիշին խօսքը հասկընալ, այսպէս որորոցին մէջ կը



դնէին զքեզ, ու մայրդ կամ դայեակ
մը քու վրայդ կը հսկէր :

Մայր մը շատ անգամ իւր ամեն
զուարճութիւնները կը թողու, իւր զա-
ւակին քովը կը նստի, շարունակ անոր
վրայ կը հսկէ, և անոր ամեն պէտքերը
կը հոգայ :

Արչափ երախտագէտ ըլլալ պէտք ենք
մեր ծնողաց, որոնք մինչև մեծնալնիս
այնչափ նեղութիւն կը կրեն մեզի համար :



ԴԱՍ ԻԷ.

Տղան աղօթի ընել էր սարձի :

Արք Մատուծոյ ողորմութեամբք և ծնողաց խնամքովք տղան աւելի էր մեծնայ, կ'ըսկսի քիչ քիչ իւր հօրն ու մօրը խօսքերը հասկընալ, ու կամաց կամաց ինքն ալ խօսիլ էր սորմի :

Ծնողք մեծ ուրախութիւն կ'ըզգան էրք էր տեսնեն որ իրենց զաւակնին էր խօսի, ու ամենէն առաջ էր սորմեցընեն անոր ամեն առտու և իրիկուն ծնկան վրայ գալ և աղօթք ընել Մատուծոյ և գոհանալ անորմէ որ զինքը և իւր ծրնողքը ամեն փորձութենէ էր պահպանէ :

ԴԵՍ ԻԸ .

Օ՛ւնապանք :

— Յիմար մը գետէն անցնել ուզելով, կ'ըսպասէր որ բոլոր ջուրը անցնի, գետինը ցամքի, որպէս զի ինքն ալ կարենայ հանգիստ անցնիլ: Այս յիմարին կը նմանի այն մարդը, որ գործի մը չսկսիք մինչև որ բոլոր դժուարութիւնները չվերնան:

— Անտիգոնոս թագաւորին զինուորներէն ոմանք իւր վրանին խիստ մօտ կեցած զինքը կը բամբասէին. թագաւորը անոնց խօսքերը լսելով, վարագոյրը կը բանայ և կ'ըսէ անոնց. «Գոնէ քիչ մը հեռու դացէք որ թագաւորը չսէ»:

— Յիմար մը լսելով որ ազուաւր երկու հարիւր տարի կ'ապրի, հատ մը ծախու կ'առնու և կը սլահէ, որպէս զի փորձով ստուգէ:

— Ազահ մարդու մը ծառաները իրենց տիրոջը կ'իմացընեն որ շապիկնին հինցած է և նոր շինելու պէտք ունին: Տէրը իւր գործակալը կը կանչէ և կը

հրամայէ որ երթայ իւր դաշտը կանեփ
ցանել տայ. երբ ծառաները կ'ըսկսին
ծիծաղել, «Այ անիրաւներ, կ'ըսէ,
ինչպէս կ'ուրախանան որ նոր շապիկ
պիտի ունենան»:

ԴԱՍ ԻՅ.

Պէտք է ճշտել յարգել:

Տարի տղայ մը իւր ծնողքը սիրելէն
ու յարգելէն ետե կը պարտաւորի նաև
իրմէ մեծերը յարգել:

Պէտք չէ որ անոնց հետ հրամայա-
կան կերպով խօսի, և դուռողութեամբ
վարուի անոնց հետ:

Ժողովքի մը մէջ քեզմէ մեծէն վեր
մի նստիր, ու երբ ան կը խօսի՝ դուն լռէ:

Մի՛ ծաղրեր, մտիկ ըրէ անոնց խե-
լացի խրատները, վասն զի անոնք շատ
բան տեսած ըլլալով, քեզմէ աւելի փոր-
ճառու են:

Մի՛րէ և պատուէ քու վարժապետ-
ներդ ծնողացդ պէս. քանզի անոնք ալ

դ.քեզ իրենց զաւակին պէս կը սիրեն ,
մեծ հոգ և խնամք կը տանին զ.քեզ
կրթելու , և տեսակ տեսակ գիտու-
թիւններով և առաքինութիւններով
միտքդ կը լուսաւորեն :

Հնազանդ եղեր միշտ անոնց և մի
բարկացըներ երբէք քու գէշ վարքովդ :

Պատուէ՛ նաև Ազգին մեծերը , որոնք
ազգին սիրոյն համար մեծ զոհողու-
թիւններ կ'ընեն . յարգէ՛ դպրատան հո-
ղաբարձուները , որոնք աշխատութեան
չեն խնայեր դպրատունը բարեկարգ
պահելու համար :

ԴԼՍ Լ .

Չինաց կայսեր իւր վարժապետներուն ըրած պատիւը :

Չինաց Քան կայսրը կ'ըսէր թէ
բաւական չէ միայն երախտագէտ ըլլալ
վարժապետներուն , այլ և պէտք է յար-
գել և մեծարել զանոնք :

Որ մը երբ իր վարժապետաց մէկուն
տունին առջևէն կ'անցնէր , և ըստ սո-
վորութեան խոնարհութիւն կ'ընէր , իւր

հետը եղող աւագանիներէն մէկը զարմանք մը ցուցուց . « Ինչո՞ւ կը զարմանաք, պատասխանեց կայսրը, իմ յարգանքս այնպիսի անձի մը կը մատուցանեմ, որ իւր արժանաւորութեամբը երևելի է, իսկ ես միայն իմ ունեցած երկիրներովս երևելի եմ: Ի՞նչ փոխարէն կրնամ հատուցանել այն դիտունին, որ զիս մինչև իրեն բարձրացուց և ինձ ճշմարիտ մեծութիւնը սորվեցուց, որ է Եւաքիսութիւնը »:

ԴԸՍ ԼԵ.

Յարոյցական առասկներ :

Տուներու մէջ ամենէն գեղեցիկ հայելին և տղոց ձեռքը ամենէն ընտիր քրիստոնէականը ծնողաց բարի օրինակն է :

Յարատեութեամբ շատ գործեր կըրնանք դուրս հանել :

Մարդս աշխատելու համար ծնած է :

Գոհ եղիր Եստուծոյ քեզ տուածովս, և ընկերիդ վիճակէն մի նախանձիր :

Լաւ է սրտի հարատու թիւնը քան
թէ աշխարհիս ինչքը:

Յուսահարտութիւնը սատանայի որո-
ղայթն է:

Համբերութիւնը ուրախութեան բա-
նալին է:

Պակասութիւն մը ուրիշին վրայ աւե-
լի աղէկ կը տեսնենք՝ քան թէ մեր վրայ:

Մաքուր խղճմտանքը անուշ քուն
կը պարգևէ:

Մղքատը շատ բանի կարօտ է, իսկ
ազասը՝ ամեն բանի:

Լաւ է թշնամւոյն սուրը՝ քան բա-
րեկամին բանրասող լեզուն:

Աշխատատէր մարդուն դռնէն կը նա-
յի անօթութիւնը և չհամարձակիր
ներս մտնել:

Զգիտցածդ հարցընելու մի ամչնար:

Ուրիշի պնակին սպասողը շատ ան-
գամ անօթի մնալն աչք առնելու է:

ԴԱՍ ԼԲ.

Եղբայրական սէր :

Եթէ օրէնքը կը սորվեցընէ մարդուս սիրել իւր նմանը, որչափ ևս առաւել պարտի մարդ սիրել իւր համարիւն եղբայրը :

Քանզի եղբարք մի և նոյն մայրէ ծնած, մի և նոյն կաթով անուած, և մի և նոյն հօր գիրկը մեծցած ըլլալով, պարտին իբրև մէկ սիրտ և մէկ հոգի ըլլալ, և զիրար պաշտպանել :

Ծնողաց ամենէ մեծ մխիթարութիւնն է իրենց զաւակները իրարու հետ սիրով տեսնել :

Իւր ծնողքը սիրողը իւր եղբայրներն իսկ կը սիրէ . իսկ այն որ իւր եղբայրը կ'ատէ՝ բոլոր մարդկային ազգը կ'ատէ . քանզի իւր եղբօրը թշնամի եղողը որո՞ւ բարեկամ կրնայ ըլլալ :

Մեր առաջին բարեկամը մեր եղբայրն ըլլալու է . այն պիտի ըլլայ մեր սրտակիցը և վշտակիցը :

Տեղբայրանոց հին եղբայրանոցն :

Մտաւորական Մարաց թաղաւորը
Հայոց Տիգրան թաղաւորին զօրանալէն
վախնալով, անոր Տիգրանուհի քոյրը ի-
րեն կնութեան առաւ, որպէս զի անոր
ձեռքը կարենայ զՏիգրան ապաննել և
Հայաստանի տիրել :

Մտաւորական զՏիգրանուհին իւր տիկ-
նանց տիկինը բրաւ, և անոր մեծ պար-
զենք տալով, ու մեծամեծ խոստումներ
ընելով, իւր չար խորհուրդը անոր
յայտնեց :

Տիգրանուհի չուզելով իւր եղբայրական
սէրը թաղաւորական փառաց և հարս-
տութեանց հետ փոխել, գաղտնի կեր-
պով իւր երկան չար դիտաւորութիւնը
սիրելի եղբորը իմացուց :

Տիգրան անձամբ Մտաւորական վրայ
եկաւ, և պատերազմը ուշացուց մինչև
որ իր Տիգրանուհի քոյրը հնարքով մը
Մտաւորական քովէն փախաւ. այն ա-
տեն Տիգրան պատերազմին մէջ զարկաւ
մեռցուց զՄտաւորական :



ԴԱՍ ԴԴ .

Նղբարց պարտքը :

Նղբարք իրարու վրայ մեծ պարտաւորութիւններ ունին :

Մեծ եղբարք պարտին իրենց գովելի վարքովք բարի օրինակ ըլլալ փոքր եղբարց, խրատել զանոնք, և պակասութիւնն ճանչցընել անոնց :

Գրեթէ իրենք են պատճառ անոնց բարի կամ չար ըլլալուն . քանզի փոքր տղայք խիստ յօժար են իրենցմէ մեծին ըրածն ընելու :

Եթէ մեծ եղբարք այս պարտաւորութեան դէմ մեղանշեն, կրկին յանցաւոր են, վասն զի թէ իրենց և թէ եղբարցը կորստեան պատճառ կ'ըլլան :

Փոքր եղբարք ևս պարտին հնազանդիլ իրենց մեծ եղբարց, անոնց բարի խրատուց հետեիլ, և իրենց յոռի վաղքովը զանոնք չբարկացընել :

Փոքր եղբարք եթէ միատեղ դասերնին սորվին և իրարու օգնեն, շուտով յառաջ կ'երթան :

ԴԱՍ ԼԵ .

Երկու- եղբայրները :

ԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Արուսադէմ չիսուած մշակեալ դաշտ մ'էր, կ'ըսեն, և տաճարին տեղը երկու եղբարց ստացուածն էր, որոց մէկը ամուսնացած էր և զաւակաց հայր, իսկ միւսը ամուրի: Արկուքը միատեղ իրենց մօրմէ ժառանգած արտը կը մշակէին :

Հունձքին ժամանակը գալով երկու

Եղբայրները ցորենի որաները կապեցին
և երկու հաւասար կոյտ ընելով, դաշտին
վրայ թողուցին :

Գիշերը՝ ամուրի եղբօր միտքը բարի
խորհուրդ մը ծագելով, ինքն իրեն ըսաւ .
“ Աղբայրս կնոջ մը և զաւակաց տէր է ,
և զանոնք անուցանելու պէտք ունի .
ուստի իրաւունք չէ որ իմ բաժինս իւր
բաժինին հաւասար ըլլայ . երթամ իմ
բաժինէս քանի մը որայ առնում , ու զաղ-
տուկ անոր բաժնին վրայ աւելցընեմ ,
Եղբայրս ըրածս չտեսնելով՝ պիտի չկրնայ
ինձ դէմ կենալ ” . այս ըսելով զնաց իւր
խորհուրդը ՚ի գործ դրաւ :

ԴԱՍ 1,2 .

Նոյն գիշերը՝ միւս եղբայրը արթննա-
լով, իւր կնոջ ըսաւ . “ Աղբայրս ինձմէ
փոքր է , և ամուսնացած չըլլալով՝ մէկը
չունի որ իրեն օգնէ ու զինքը մխիթա-
րէ . ուստի արդարութիւն չէ որ մեր
դաշտին որաներէն երկուքնիս հաւասար

բաժին առնենք . երթանք զաղանապէս
իմ բաժինէս քանի մը սրայ անոր բա-
ժինին վրայ աւելցնենք . եղբայրս ը-
բաժնիս չտեսնելով, պիտի չկրնայ մեր-
ժել” . և ըբաժնին գործով կատարեցին :

Շտեռեալ առտու՝ երկու եղբայրները
դաշար գացին, և խիստ զարմացան երբ
տեսան որ երկու կոյտերը հաւասար էին .
ոչ մէկը և ոչ միւսը չկրցան այս հրաշ-
քին պատճառը գիտնալ :

Շտեռեալ գիշերը դարձեալ նայնապէս
ըրին, որով երկու կոյտերը ոչ կը պակ-
սէին և ոչ կ'աւելնային, մինչև որ գի-
շեր մը այս գաղանիքը իմանալու համար
երկուքն ևս արթուն կենալով, երբ ո-
րաները առած իրարու կը տանէին, զե-
րար տեսան :

Արդ՝ այս երկու եղբարց դաշար Աս-
տուծոյ հաճելի ըլլալով, մարդիկ օրհնե-
ցին զայն, և Աստուծոյ տաճարը հոն
չինելու որոշեցին :

ԴԱՍ ԼԵ .

Մահի Տարգր :

Մարդ մը այն աստիճան ազահ էր , որ միայն չոր հաց ուտելով կ'ապրէր , և իւր դաւանին ալ ամեն հարկաւոր պիտոյքներէն կը զրկէր :

Օր մը բարեկամի մը յորդորանօքը պանիր կ'առնու , բայց իւր այս շռայլութեանը վրայ շուտով զղջալով , շեշի մը մէջ կը պահէ զայն և երբ պանիր ուզէր ուտել՝ հացը շեշին կը քտէր և այնպէս կ'ուտէր :

Օր մը կերակուրի ժամանակէն ուշ մնալով , և սենեկին բանալին իւր քովն ըլլալուն՝ տղան հացը կ'առնէ ու սենեկին դրան քսելով կ'ըսկսի ուտել :

Հայրը վրայ կը հասնի և տղուն ըրածը տեսնելով բարկութեամբ կը պռուայ . « Ի՞նչ կ'ընես հող , անմիտ աղայ : — Կերակուրի ատեն է , հայր իմ , կը աստասխանէ տղան , ու դուռը բանլիբ-

ուած ըլլալուն՝ հացս դրան կը քսեմ՝
 — Ասիլ տղայ, օր մ'ալ առանց պա-
 նիրի չէիր կրնար անցընել, դուն բնաւ
 հարստանալիք չունիս"։

ՔԱՍ 1.Ը .

Հայրենասիրութիւն :

Հայրենասիրութիւնն է սիրել իւր
 հայրենի երկիրն ու ծնած տեղը, և ա-
 նոր համար ամեն բան զոհել։

Մարդս բնական սիրով այնպէս կապ-
 ուած է իւր հայրենի երկրին որ ամե-
 նեին բան մը չփոխեր անոր հետ։

Գոհ և երջանիկ է ան իւր բնիկ եր-
 կրին մէջ. աւելի կ'ընտրէ ընտանեօքը
 աղքատիկ հիւղի մը մէջ խեղճ ու զբը-
 կեալ ապրիլ, և իւր նախահարց հանգ-
 չած հողին մէջ հանգչիլ, քան թէ ուրիշ
 երկիրներ երթալ և երջանիկ ու զեղև
 կեանք մը անցընել։

Եթէ Աստուած այս զօրաւոր սէրը
 մարդու սրտին մէջ չհաստատէր, մար-

դիկ իրենց երկիրը թողլով ուրիշ երկիրներ կը գաղթէին, և ազգերը իրարու կը խառնուէին. այն ատեն աշխարհիս մէջ խառն ժողովուրդ մը կ'ըլլար, և շփոթութիւն կը տիրէր ամեն տեղ:

Տայց Նստուած ուզեց որ թէ այս սիրով և թէ լեզուներու տարբերութեամբ ամեն ազգ իւր մասնաւոր հայրենիքն ունենայ:

ԳՆՍ ԼԹ.

Եթէ այս բնական սէրը չըլլար, մարդ պիտի չգտնուէր հիմա Հայաստանի մէջ, որ այնչափ հալածանք և նեղութիւն կրելէն ետե՛ այսօր դարձեալ իւր ժողովուրդն ունի, և Հայր գոհ և երջանիկ է իւր նախնեաց երկրին մէջ, թէ և աւերակ իսկ ըլլայ:

Մարդ սրչափ իւր հայրենիքէն հեռու ըլլայ, սրչափ օտար դէմքեր տեսնէ, այնչափ անոր սէրը կ'աւելնայ իւր սրտին մէջ, և այնչափ աւելի իր դայն:

“Ինչպէս կրնանք չնուիրել հայրենեաց մեր բոլոր ստացուածները, կ'ըսէ Միկերոն, երբ մտածենք որ ամեն ունեցածնիս իրմէ առած ենք”: Բայց մենք գոնէ հայրենեաց օգտին համար մեր անձնական շահերուն մէկ մասը զոհենք:

Թեմիատոկդէս և Արիատիթէս ակօնացի իշխանները երկար ատեն իրարու սխերիմ թշնամի էին. բայց երբ ժողովուրդը զիրենք ընտրեց որ միատեղ դեպանութեան երթան, անմիջապէս հայրենեաց օգտին համար իրարու հետ հաշտուեցան և միատեղ դեպանութեան գացին:

ԳՆՍ Խ.

Հայաց նախնական գրաց Գարձաճո-Ռի-նը:

Յայտնի չէ թէ Հայերէն գրերը երբ հնարուած են. բայց Արարացւոց և Արարայեցւոց գրերուն պէս ձայնաւոր գիր չըլլալուն՝ Հայերը դժուարութիւն կը կրէին կարդալու, ուստի Պարսից, Յու-

Նայ և Մտրուոյ գրերը կը գործածէին:

Հայաստանի դաւաճները մեծ ծախքերով և հեռաւոր ճամբորդութիւններով մեծ նեղութիւններ կը կրէին օտար ազգաց դպրոցները երթալու համար:

Նկեղեցւոյ մէջ ամեն բան Մտրերէն լեզուով կը կարդային, ու ժողովուրդը անոնցմէ բան չէր հասկընար, և այս պատճառաւ Հայոց քրիստոնէական հաւատքն իսկ կը տկարանար:

Մտուած Հայաստանի այս թշուառութեանը վրայ գլխաւով օգնութեան հասաւ:

ԳԱՍ ԽԱ.

Գի-ր Հայերէն Յայնա-ոյ արտ-ից:

Սուրբն Մեարոպ տեանելով որ հայերէն գիր չըլլալուն՝ Հայերը հայերէն կարդալ գրելէ զրկուած են, մեծ միասններ կը կրեն, սիրտը եռանդով լեցունցաւ հայերէն գիրեր հնարելու. (վասն զի առաջէն ունեցած գիրերնիս պակասաւոր և անգործածելի ըլլալուն՝ կորսուած էին):

Ուստի սուրբ Սահակին գիմեց, որ այն ատեն մեր ազգին կաթուղիկոսն էր, ու ժողով մը տուաւ ընել որ այս բանիս մէկ հնարը գտնէ:

Եյս ժողովին ներկայ էր նաև Վ աամ շապուհ հայոց թագաւորը, որ իմացուց անոնց թէ ինքն ալ իւր արքունական դիւանագրութիւնները հայերէն գրով ընելու դիւրութիւն մը գտնելու համար Միջագետք իջած ատենը՝ Հաբէլ անուսով քահանայէ մը լսեր էր թէ Ղանիէլ ասորի եպիսկոպոսին քով Հայերէն նշանագիրեր կը գտնուին:

Հաբէլ քահանայն Միջագետք զըրկուեցաւ, ու Ղանիէլ եպիսկոպոսէն հայերէն գիրերը սորվելով Հայաստան դարձաւ: Բայց այն գիրերը պակասաւոր և ձայնաւորներէ զուրկ ըլլալուն՝ հեգելու բաւական չէին:

ԾԱՍ ԽԲ.

Եյն ատեն սուրբն Մեսրոպ անձամբ ելաւ Ղանիէլ եպիսկոպոսին գնաց, որպէս զի եթէ ուրիշ գիրեր ևս պահած

է՛ անորմէ՛ առնու . բայց յոյսը պարապ
ելաւ :

Անկէ ելնելով շատ տեղեր պտըտեցաւ,
շատ իմաստուններու խորհուրդ
հարցուց, բայց օգուտ մը չտեսաւ :

Այն առէն իւր յոյսը մարդկային օգ-
նութենէն կտրեց, Աստուծոյ ապաւի-
նեցաւ, և ջերմեռանդ աղօթքներով կը
խնդրէր Ամենակարողէն որ շնորհէ իրեն
այն կարողութիւնը, որով հայերէն գի-
րերուն պակասութիւնը լեցընէ :

Սուրբն Մեսրոպայ աղօթքները և
մտածութիւնները ապարդիւն չմնացին .
քանզի իւր միտքը Աստուծոյ շնորհօքը
լեցուեցաւ, իւր երևակայութեան մէջ
յղացաւ ձայնաւոր գիրերուն ձևն ու հըն-
չիւնը, և ծնունդ տուաւ անոնց թղթի
վրայ գրելով :

Ի Ա Ս Ի Գ .

Հինգերորդ դասն . Հայաստանի պատմութիւնը :

Այսպէս ծագեցաւ գրականութեան
արվին Հայաստանի վրայ, և անոր լու-

սափայլ ճառագայթները սկսան սփռիլ
Հայաստանի ամեն կողմը :

Դպրոցներ բացուեցան , Սուրբ Գիր-
քը Հայերէնի թարգմանուեցաւ , որով
Մատուածպաշտութեան կենդանի լուսով
ալ լուսաւորեցաւ Հայաստան :

Այն ատեն բոլոր Հայերը ուսմանց
և գիտութեանց ետեւ եղան , կիներն
անգամ աղէկ կրթութիւն առնելով , ըս-
կսան իրենց զաւակաց աղէկ դաստիա-
րակութիւն տալ :

Այս կիներուն մէջ երևելի եղաւ Մա-
միկոնեան Վարդանայ Հմայեակ եղբօր
կինը , որ իւր զաւակներուն այնպիսի լաւ
կրթութիւն մը տուաւ , որ խիստ երևե-
լի եղան և մեծ ճառայութիւններ ըրին
հայրենեաց , ինչպէս է Վահան Մամի-
կոնեան :

ԴԱՍ ԽԻ .

ՋՈՒՆԻՎԵՐՍԻՏԵ

Ե՞ս գլա-ի չո-նիմ :

Խելագարին մէկը կ'ըսէ եղեր թէ՛ «Այս
գլուխ չունիմ» : Խելացի մը ևս ուղե-

լով անոր այս սխալը շիտկել, քար մը կ'առնու և անոր գլխուն կը զարնէ : Այն ատեն խենթը կ'իմանայ դուրս ունենալը և կ'ըսկսի պողալ. “ Այն գլխուս ” :

Հատերը այս յիմարին պէս մինչև որ գլուխնին քարի չգայ՝ չեն իմանար ինքզինքնին :

Գինով սրտամաքան :

“ Արովհետև ամեն քայլիդ այդպէս կը գլտորցընէ զքեզ, մի խմեր այդ գինին ”, կ'ըսէ բարեկամ մը գինովին մէկուն : “ Ա՛չ, կը պատասխանէ գինեմոլը, գինին յանցանք չունի, ես գէշ կը քալեմ ” :

Հոգստոտրոտ միտք :

Ազնուական մը ճամբան տղու մը կը հանդիպի, որ ծածկած անօթ մը կը տանէր՝ “ Տղաս, կ'ըսէ, ի՞նչ կայ այդ անօթին մէջ : — Թէ որ ի՞նչ ըլլալը քեզ իմացընել ուզէի, ծածկած պիտի չտանէի ”, կը պատասխանէ տղան :

ԴԼՍ ԽԵ .

Քաղաքավարութիւն :

Քաղաքավարութիւնը մարդոց իրարու հետ բարւոք և վայելուչ կենցաղավարելու կերպը կը սորվեցընէ :

Տնկերսիրութիւնը և անձնասիրութիւնը կը պահանջեն որ մարդս ուրիշի անհաճոյ և իւր պատւայն դէմ եղածը չընէ և չխօսի :

Այս պատճառաւ կը պարտաւորի իւր խօսքերուն և գործերուն կանոն և սահման դնել, և ըստ այնմ վարուիլ ամենուն հետ անոնց առտիճանին և վիճակին համեմատ :

Ճանողաց և մեծերու հետ պէտք է խոնարհութեամբ վարուիլ, ծերոց և հաւասարներու հետ՝ պատուով, և ստորիներու հետ՝ սիրով և քաղցրութեամբ :

Քաղաքավարութիւնը պէտք է ըլլայ չափաւոր և վայելուչ, աւելորդ շարժումները մարդուս թեթեամտութիւնը կը ցուցընեն, խիստ սեթևեթեալ և փաղա-

քուշ խօսքերը ծաղրական կը համարուին, և չափազանց նուաաստանալով խօսիլը մտքի տկարութիւնը կը յայտնէ:

ՅԱՍ ՔԶ.

1. - Է Ժ. Դ. Է փաստագրութիւնը:

Առի չորեքտասաներորդ Պաղղկոյ թագաւորը Ա Էրաայլի պալատին մէկ սրահը առանձին մտնելով, կը տեսնէ որ գործաւոր մը սանդուղի մը վրայ ելած՝ պատին վրայէն ժամացոյց մը քակելու կ'աշխատի:

Սրահին յատակը փայլուն տախտակներով յատակած ըլլալուն, թագաւորը սանդուղը կը բռնէ, որպէս զի գործաւորը սահելով չիյնայ, և իւր անձին նուաստութիւն մը չտեսնելու պայտէս ընելու:

Սակայն դժբաղդաբար թագաւորին գործաւոր կարծածը աներկիւղ գող մ'է եղեր, որ անտարբերութեամբ վար կ'իջնէ և ժամացոյցը առած կը հեռանայ:

Ժամ մը ետքը՝ ծառաները կու գան կ'իմացնեն թագաւորին թէ սրահին ժա-

մացոյցը գողցուեր է: «Մարդու բան մի
բաէք, կ'ըսէ թագաւորը, վասն զի ես
եմ գողակիցը»:

ԳԼՍ ԽԵ .

Հագո-ելո- լըայ:

Մաքրութիւնը մարդուս ամենէ մեծ
դարդը պէտք է ըլլայ: Գուցէ՛ներեւ ըլ-
լայ հին զգեստ հագնելը՝ եթէ մեր վիճա-
կը չներէ նորը հագնելու, բայց պատա-
ռոտած և եղոտած զգեստով դուրս ելն-
ը աններեւ է:

Ուստի ամեն առտու պէտք է զգեստ-
ները մաքրել, աղտերը հանել, և այնպէս
տունէն դուրս ելնել:

Փողոցը ելնելու համար կատարեալ հա-
դուած ըլլալու է. փողոցին մէջ զգեստ
մաքրելը, կոճակ դնելը, ձեռնոց հագնելը
ամարդութիւն է:

Մղտեղութենէ զգուշանալու համար՝
պէտք է դիտել քալելու, նստելու կամ
կռթնելու ատեն, որ փոշի, տիղմ կամ

որ և է աղտեղութիւն մը չգտնուի, որով
զգեստներդ աղտոտես :

Ներքին զգեստները փոխելը պէտք է
ուշացրնել, մանաւանդ ամառ ժամանակ .
քան զի աղտեղի զգեստները առողջու-
թեան կը մնասեն, և քրտինքի հոտը ու-
րիշներուն զղուանք կու տայ :

Չզգեստները պէտք է ըլլան պարզ,
վայելուչ և երկրին սովորութեան համե-
մատ . աւելորդ զարդերը անվայել են , և
հասարակաց սովորութենէ տարբեր հա-
գուիլը թեթեամտութիւն է :

ՅԱՍ ԽԸ .

Մօր մը մշտաբար զարդերը :

Շնորհաց ամենէ մեծ զարդը իրենց զա-
ւակներուն լաւ դաստիարակութիւնը ըլ-
լալ պէտք է :

Կուսնելիս Հռովմայեցւոց հռչակաւոր
Սկիպիոն զօրավարին աղջիկը իւր զա-
ւակներուն դաստիարակութեանը մեծ
խնամք տարաւ :



Օր մը շքեղ հագուած և գոհարներով
 զարդարուած հարթաստ տիկին մը իրեն
 այցելութեան կու գայ, և փառասիրու-
 թեամբ ու պարծենալով իւր ծանրագին
 գոհարները Առունելիայի կը ցուցնէ :

Առունելիա ճարտարութեամբ խօսքը
 կ'երկնցնէ, մինչև որ իւր որդիքը դպրա-
 տունէն կը դառնան. «Ա՛հա՛ իմ գոհա-
 րեղէններս», կ'ըսէ այն ատեն իրաւացի
 հպարտութեամբ մը իւր բարեկիրթ դա-
 ւակները ցուցնելով :

ԴԱՍ ԵՔ.

Խօսակցութեան զգաց :

Խօսակցութիւնը պէտք է ըլլայ յարմար, օգտակար, անմեղ և զուարճալի՝ ըզգուշանալով անվայել կիրքերէ և անպարկեշտ բառերէ :

Պէտք է մաքուր և յստակ խօսիլ առանց պոռալու, կակազելու կամ լիբրտալու :

Խօսելու ժամանակ աւելորդ շարժումներէն զգուշացիր, եթէ չես ուզեր անպիտան դերասանի նմանիլ :

Յօսքը, քիթը, բերանը ծռելը անվայել բան է, բայց հռելով կամ զարնելով խօսիլը կապտութիւն է :

Խօսակցութիւնը պէտք է ըլլայ որոշ և յայտնի, այնպէս որ ամեն մարդ կարենայ դիւրաւ հասկընալ : Չզուշանալու է խրթին և օտար բառեր գործածելէ :

Տարբեր լեզուներով խօսիլը իմաստա-

կութիւն է. եթէ Հայերէն թկսար խօսիլ,
Հայերէն լեզուով պէտք է վերջնա :

ԳԱՍ Ծ .

Պատմելու ժամանակ կարճախօս եղիք,
մանաւանդ երբ անպիտան և կարգէ դուքս
է խօսքր :

Քու վրայօքդ որչափ կարելի է քիչ
խօսէ . ոչ ինքզինքդ գովէ, և ոչ խիստ
նուտատացիր :

Ինքզինքը գովելը և պարծիլը յիմարու-
թիւն է, բայց աւելի մեծ տգիտութիւն
է իւր պակասութիւնները ամենուն յայտ-
նելը :

Եթէ մէկը դքեզ գովէ, անոր գովեա-
տը իւր բարութեանը և ազնուութեանը
տալու է, քան թէ քու արժանաւորու-
թեանդ :

Բազմութեան մէջ քեզմէ մեծին հետ
կատակ մի ըներ, թէ և խիստ անմեղ
իսկ ըլլայ ըրած կատակդ :

Խօսակցութեան ժամանակ ներելի չէ

անվայել և դայթակղեցուցիչ խօսքեր ընել, բամբասանել, դրպարանել, շարախօսութիւն ընել, սուտ խօսիլ, անիծել և հայհոյել:

ԳԱՅ ԾԱ.

Արբ մէկը կը խօսի, պէտք է մտիկ ընել. անկրթութիւն է մէկուն խօսքը ընդմիջել, անոր բերանէն խօսքը յափշտակել և շարունակել:

Ուրիշին խօսելու ժամանակը մեծ ամօթ է յօրանջել, եղանակ մը մրմնջել, մատներով կամ ոտներով խաղալ, մէկուն ականջին դադտուկ խօսք խօսիլ, թուղթ մը առնուլ և կարդալ, ժամացոյցը նայիլ և խօսքը անկատար թողուլ և մեկնիլ:

Ընդհանուր խօսակցութեան ժամանակ անվայել է մէկը մեկուսի տանիլ և առանձին դադտուկ խօսիլ:

Արբ երկու հոգի առանձին կը խօսին, պէտք չէ անոնց ականջ դնել. եթէ դիպուածով անոնց մօտ գտնուեցար, կամաց մը անոնց քովէն հեռանալու է:

Մրչափ և տարօրինակ ըլլայ պատմութիւն մը, եթէ պատմողը հաստատէ զայն, չհաւատարու նշան մը մի ցուցընէր :

Խիստ մեծ անկրթութիւն է խօսքը հաստատելու համար երդում ընելը :

ԻԱՍ ԵՐ .

Հայ իշխանի ճշ աներկեղ պատգամներ :

Թաթուլ Հայոց քաջ իշխանը Պարսից Տուղբիլ թագաւորին արշաւանաց դէմ քաջութեամբ պատերազմելէ ետև՝ գերի բռնուեցաւ :

Պատերազմին մէջ Թաթուլ՝ Եսուբան Պարսիկ իշխանին որդին, որ Տուղբիլի սիրելին էր, վերաւորեր էր :

«Եթէ այս պատանին առողջանայ, բաւ թագաւորը անոր, զքեզ կ'ազատեմ, իսկ եթէ մեռնի՝ զքեզ անոր զոհ կ'ընեմ : — Եթէ զարնուածքք իմն է, պատասխանեց աներկիւղ իշխանը, չապրիր” :

Եսուբանի որդին մեռնելով, թագաւորը Թաթուլը սպաննել տուաւ, և անոր աջ

ԹԱՐ կարելով՝ Մտորանին ղրկեց ըսելով,
 «Որդիդ վատ բազկէ մեռած չէ»:

ԴԱՍ ԾԳ.

ՄԵՃՆ Մղեխանդը և Դիողինէս:

ՄԵՃՆ Մղեքսանդր Դիողինէս փիլի-
 սոփային այցելութեան երթալով, տեսաւ
 որ արևուն մէջ կեցեր կը տաքնար. «Տա-
 նի մը կարօտութիւն ունիս», հարցուց
 թագաւորը: — «Մո՛, ըսաւ Դիողինէս,
 առջևէս անդին գնա, որ արևս չխափա-
 նես»:

Թագաւորը անոր այս պատասխանին
 վրայ զարմացած՝ «Թէ որ Մղեքսանդր
 չըլլայի, ըսաւ քովիններուն, Դիողինէս
 կ'ուզէի ըլլալ, որ բանի մը կարօտ չէ»:

ԳԱՍ ԾԳ.

Հպարտութիւն:

Հպարտութիւնը զգուելի մոլութիւն
 մ'է, որ մարդուս վիճակը և կարողու-
 թիւնը կը մոռցընէ:

Հարարտին առջևը ուրիշները ասորին
և նուազս կ'երևին, ու ինքզինքը ամեն
նախապատիւ կը համարի:

Հարարտը կը նահանջի վառնիտաշախ մը,
որ կ'ուռի և մէջը դատարկ է:

Ենոր ամեն քրածը 'ի տես և 'ի ցոյց
մարդկան է: Անդէ որ ամեն մարդ զին-
քը գտիէ, և իւր առջևը խոնարհի:

Մյակիսին ատելի է ամենուն:

Հեռացի՛ր հայարաութեան մուտթե-
նէն, որ զգուելի չըլլաս ամենուն:

ԴԱՍ ԾԵ .

Ես «Չ էմ:

Յիմարին մէկը բառնիք կ'երթայ, և
տեսնելով որ ամեն մարդ մերկ են, կը
վախնայ որ ինքզինքը չկորսնցընէ. ուստի
հարք մը մտածելով առջին անդին նա-
յած ատենը՝ կարմիր ժապաւէնի կտոր
մը կը գտնէ, և կ'առնու իւր աջ ձեռ-
քին ցուցամատին վրայ կը կապէ որ ե-
թէ զինքը կորսնցընէ, այն նշանովը դրտ-

նէ: Այսպէս քիչ մը նստելէն ետքը
եղած տեղը կը քնանայ:

Օւռարձասէր մարդ մը յիմարին այս
ըրածը տեսնելով՝ կամաց մը կ'երթայ ա-
նոր մատէն կարմիր ժապաւէնը կը քա-
կէ, և իւր նոյն մատին կապելով՝ անոր
դիմացը կը նստի:

Քիչ մը ետքը յիմարը կ'արթննայ և
կը նայի որ կարմիր ժապաւէնը դիմացի
մարդուն մատին վրայ է. կ'ըսկիտի դարմա-
նայ ու տարակուսիլ, և կ'ըսէ ինքնիրեն.
“Այս դիմացի մարդը ես եմ”, ես ո՞վ եմ
արդեօք”:

Արանի՛ թէ ոմանք ալ երբեմն յիմար
ըլան և իրենք իրենց հարցընեն թէ “Այս
ո՞վ եմ”:

ԴԱՍ ԾԶ.

Աստի՛ և իրաստի՛:

Զախորդութիւնը յաջողութեան քոյ-
րն է:

Հպարտութիւն չունեցողը ուրիշի հը-

պարտութեան վրայ չգանդատիր :

Սկսիլք գործոյն կէսն է :

Մասորուան ընել կրցած գործդ վաղուան մի ձգեր :

Մենէն մեծ գիտութիւնն է ճանչնալ իւր պակասութիւնը և զայն ուղղել :

Ի՞նչպէս կրնանք պահանջել որ ուրիշը մեր գաղտնիքը պահէ, երբ մենք չենք պահեր :

Մուանց աշխատութեան աշխարհիս վրայ բան մը չկրնար ըլլալ :

Ուրիշներուն պակասութեան ներողամիտ եղիք, բայց քեզ՝ ամենեին :

Հատ լսէ, բայց քիչ խօսէ :

Մտղջութեան յարգը զայն կորսնցուցած ժամանակնիս միայն կը ճանչնանք :

ԳԱՍ ԾԵ . :

Սահա-տ-Ռի-ն Բարեկամաց :

Մշտարհիս մէջ շատ դժուար է ճշմարիտ բարեկամ գտնելը. ամեն քեզի հետ խօսողը և երեսիդ ծիծաղողը բարեկամ

է, այլ իւր օգտին կամ շահուն համար
քեզի հետ ծանօթացած է:

Օգուշացի՛ր ամեն բարեկամացոյ վրա-
տասելու, քանզի բարեկամութիւնը կըր-
անց թշամութեան փոխուի, և զքեզ
թշուառութեան անդունդը գահալիծել:

Ճշմարիտ բարեկամը ոչ միայն իւր
ունեցածը, այլև իւր կեանքը անդամ
քեզի համար կը զոհէ:

Աթէ ճշմարիտ բարեկամ մը գտար,
գանձ մը գտած ես:

ԳԼՍ ԾԸ.

Տամն և Պիւթիաս:

Տամոն և Պիւթիաս յոյն անուանի ի-
մաստունները իրարու հետ բարեկամու-
թեան այնպիսի անլուծանելի կապերով
կապուած էին, որ Սիրակուսայի Պիո-
նեսիոս բռնաւորը նախանձելով, պատ-
ճառաւ մը Տամոնը ՚ի մահ գատապար-
տեց:

Տամոնի ընտանիքը մօտակայ գիւղ մը

կը բնակէին . ողորմելի դատաւարտեալը հրաման ինդրեց բռնաւորէն , որ երթայ իւր բնտանեկան գործերը կարգի դնէ ու իւր վերջին ողջոյնը բնտանեացը տայէն ետև՝ չորս օրէն վերադառնայ մահուան վճիռն ընդունելու :

Բռնաւորը նախ մերժեց անոր խնդիրը , բայց տեսնելով որ Պիւթիաս երաշխաւոր կ'ըլլայ անոր դարձին և կ'ուզէ մեռնիլ անոր տեղ՝ եթէ Տամոն որոշեալ օրը չգայ , թող տուաւ որ երթայ . քանզի Տամոնի չափ Պիւթիաս ևս ատելի էր իրեն :

ԻՆՍ ԾԹ .

Դիտնեսիոս կը կարծէր թէ Տամոն ազատելուն պէս՝ ալ պիտի չվերադառնայ և Պիւթիաս անոր տեղ պիտի սպաննուի . քանզի չէր գիտեր թէ անոնց բարեկամութիւնը ինչ աստիճան էր , որ իրարու համար կեանքերնին կը զոհէին սիրով :

Չորրորդ օրը կը համնի, մահումն ժամը կը մտննայ, բաղմութիւնը գլխատութեան հրապարակը կը ժողովի, և տակաւին Տամնն չերեիր:

Պիւթիա քանտին մէջ աղօթք կ'ընէր որ իւր բարեկամին առջև արդելք մը ելլէ և աահմանեալ ժամուն չկարնայ դայ:

Երբ ժողովուրդը գնարը կը պարտաւէր իւր անխոհեմ վատահոթեանը համար. «Էստ հաւաստի եմ, պատասխանեց Պիւթիա, որ Տամնն պիտի վերադառնայ և իրեն համար մեռնելու փառքէն պիտի զրկէ դիս»:

ԴԱՍ Կ.

Վերջապէս աահմանեալ ժամուն Պիւթիաը գլխատութեան հրապարակը կը տանին, և մինչդեռ ժողովուրդը կ'ողբար անմեղին մահումնը իրայ, յանկարծ աղաղակ մը կը լսուի թէ՛ «Տամնն կ'ուգայ», և նոյն ձայնը բոլոր բաղմութիւնը կը կրկնէ:

Իրօք Տամոն, որ գետին ողողումէն ար-
գիլուելով, չէր կրցեր աւելի շուտ համնիլ,
շնչաապառ վաղելով՝ ժողովուրդը կը ճեղ-
քէ, գլխատուժեան բեմը կ'ելլէ, ու իր
բարեկամը գրկելով՝ ջերմ արտասուօք կը
թրջէ զան :

Այն ատեն երկու բարեկամաց մէջ վե-
հանձնական վէճ մը կը ծագի : « Մահ-
մանեալ ժամը անցաւ, կ'ըսէր Պելթի-
աս, և ինձ կ'իյնայ մեռնիլ » : — Մահ-
ուան դատապարտուողը ես եմ, կը գո-
չէր Տամոն, և ես պէտք եմ մեռնիլ » :

Բռնաւորը այս սրտաշարժ տեսարա-
նին չկրնար անզգայ կենալ, կը ներէ
Տամոնին, և կ'ազաչէ երկու բարեկամ-
ները որ զինքն ևս իրենց բարեկամ ճանչ-
նան :

ԴԱՍ ԿԱ.

Աերակուր ուտելէն վտայ :

Աերակուր ուտելէն առաջ և վերջը մի'
մտնար աղօթք ընելու և փառք տալու

Մատուցոյ, որ այն օրը քեզի կերակուր
տուաւ ուտելու :

Սեղանին ո՛չ խիստ մօտ նստիր, և ո՛չ
խիստ հեռու, այլ չափաւոր հեռաւորու-
թեամբ և վայելչապէս :

Սեղանին վրայ թւերդ մի տարած եր, և
աթոռին յենարանին մի կոթնիր :

Մոզոզութեամբ թւերովդ կամ ոտ-
քերովդ քովդ նստողները անհանդիսաւ մի
րներ :

Սկաւառակդ ամենէն առաջ մի եր-
կնցրներ որ քեզ կերակուր դնեն, այլ
քու կարգիդ ապասէ :

Մխորժած կտորդ ուղելը, կամ մեծ
և աղէկ կտորը դասել առնելը անքա-
ղաքավարութիւն է, այլ ո՛ր կտորը որ
առջիդ եկած է, դայն ա՛ռ և կեր :

Չըլլայ որ անյադութեամբ ուտես, բե-
րանդ շատ լեցրնես, և մէկ պատառը չե-
լմնցած՝ բերանդ ուրիշ պատառ խոթես :

Մնչափ կերակուր առ առջիդ, որչափ

որ պիտի կրնաս ուտել, և այնչափ լեցուր
բաժակդ, որ կարենաս ամենը խմել:

Ուտելու ժամանակ պէտք է շթուն-
քով կամ ծամելի քով ձայն հանել, և
բերանը լեցուն խօսիլ:

ԴԱՍ ԿԱ.

Կերակուրը չըլլայ որ մատնեքով ուտես,
այլ կերակուրին պահանջածին համեմատ
դդարով, պատառաքաղով կամ դանա-
կով, և դանակին տեղ պատառաքաղ
կամ դդարին տեղ դանակ մի՛ դործա-
ծեր:

Միշտ դգուշացիր որ սեղանին ձերմը-
կեղէնները չաղտոտես, և կերակուրդ
սիւռոցին վրայ չթափես:

Մեծ անքաղաքավարութիւն է քովդ
նստողին առջևէն հացը առնուլ ուտել,
ուրիշին բաժակովը ջուր խմել, և անոր
դանակը կամ պատառաքաղը դործա-
ծել:

Չուր կամ գինի խմելէն առաջ՝ բե-
թանդ անձեռացով սրբէ. խիտ անվայել

է բաժակը շրթունքով եղտակել:

Միշտ զգուշանալու է որ՝ ո՛ր և է պատճառով ուրիշները չզգուեցընեն . ուտելու ժամանակ եթէ փուշ, ոսկր, կամ ուրիշ բան մը հանդիպի, բերանով սկաւառակին մէջ կամ ճերմկեղէններուն վրայ մի՛ թքներ, այլ պէտք է մատնելով բերանէն առնուլ, և սկաւառակին մէկ եզրը դնել:

Նշե՛ք պատան մը բերանդ դնելէդ ետե՛ւ հախորժեցիր դայն, չըլլայ որ ամենուն առջև զգուանք ցուցընելով բերանէդ դուրս թափես, այլ առանց խմացընելու սեղանէն ելիր, և զաղտուկ տեղ մը երթալով բերանէդ հանէ:

ԴԱՍ ԿՐ .

Նրե՛ք Բարեկամները :

Մարդ մը երեք բարեկամ ունէր, որոց երկուքը խիստ սիրելի էին իրեն, իսկ երրորդը թէև անկեղծ սիրով կը սիրէր

զինքը, ասկայն ինքը անտարբերութեամբ կը վարուէր անոր հետ :

Օր մը դատաստանի կանչուելով, իւր բարեկամաց աղաչեց որ զան իրեն համար բարեխօսութիւն ընեն :

Իւր բարեկամաց առաջինը անմիջապէս մերժեց անոր խնդիրը, բայցով թէ ուրիշ գործեր ունենալով, չկրնար իրեն հետ գալ :

Արկրորդը մինչև ոստիկանութեան պալատին դուռը անոր հետ ընկերացաւ և հոն կենալով ետ դարձաւ :

Իսկ երրորդը, որմէ երբէք չէր յուսար, իւր հետը ներս մտաւ, իրեն համար բարեխօսութիւն ըրաւ, և իւր անմեղութիւնը այնպիսի հաստատութեամբ վկայեց, որ դատարըրը զինքը դատապարտութենէ ազատեց :

Արեք բարեկամ ունեցող մարդն է աշխարհէս մեկնող ու Մատուծոյ դատաստանին առջև ելող մարդը :

Հարատու թիւեր, որ աշխարհիս մէջ
իւր սիրելի բարեկամն էր, մահուան ժա-
մունս զինքը կը թողու և հետք չերթար :

Իւր ծնողքը և բարեկամները մինչև
գերեզմանին դուռը իւր հետք կ'ընկերա-
նան, և անկէ իրենց տունը կը վերա-
դառնան :

Իսկ երրորդ բարեկամը, այսինքն իւր
բարի գործերը, մինչև գերադոյն դատա-
ւորին դահին առջևը իրեն կ'ընկերանայ,
իրեն համար բարեխօս կը կենայ, և զին-
քը կ'արդարացրնէ :

Ի ԱՍ ԿԳ .

Երջանիկ հովիւք :

Հովիւ մը իւր բնաւորութեամբը և
առաքինի վարքովը թագաւորի մը հա-
ճելի բլաւով, անոր դանձապետն եղաւ :
Պաշտօնակալները անոր վրայ նախան-
ձելով, ամբաստանեցին զան թէ տէ-
րութեան դանձէն գողնալով ստորեր-

կրեայ պահանջի մը մէջ կը պահէ :

Թագաւորը ստոյգ տեղեկանալու համար, անձամբ իր դանձապետին այցելութեան դնաց. տան բոլոր սենեակները քննեց, ու երկաթեայ դուռ մը ևս տեսնելով, հրամայեց որ բանայ զայն :

Չարմացաւ մնաց երբ ներս մտնելով, անոր գեղջկական սենեակը տեսաւ, որու մէջ իւր հովուութեան ժամանակ ունեցած անշուք սեղանը, յարդէ ակծուր, հովուական դաւաղանը և կողովը պահեր էր, և որուն միակ պատուհանը դաշտաց և լերանց վրայ կը նայէր :

“ Արիտաարդութեանս ժամանակը, ըսաւ այն ատեն դանձապետը, ևս ոչ խարներս կը պահպանէի, բայց դուք, Վեհափառ Թագաւոր, զիս այս պաշտօնիս հասուցիք: Չեր պալատը դալէսի վեր ամեն օր մէկ ժամ այս սենեկիս մէջ կ'անցընեմ, և այս եղէգնափողով հովուական երգեր նուազելով, իմ առա-

Ջին վիճակիս քաղցր զուարճութիւնները
կը վայելեմ: Ա՛հ, Վեհափառ տէր, նե-
րեցէք ինձ որ հայրենեացս դաշտերը վե-
րադառնամ, ուր այս ապարանքին փա-
ռաց մէջէն աւելի երջանիկ կեանք մը
կը վարէի”:

Թագաւորը իւր պալատականաց վրայ
խիստ բարկացաւ, այս բարի մարդուն
վրայ այնպիսի զրպարտութիւն մը բնեղ-
նուն համար, բայց այնպիսի անգին ան-
ձէ մը բաժնուիլ չուզելով, չթողուց որ
երթայ:

ԻՆՍ ԿԻ.

Երաններ:

Իմաստուն մարդը զիտէ նախատեսել
դէպքերը, և պատեհ առիթները ձեռք
անցունել:

Ստախօսը հողմոց շտեմարան է, սա-
տանային արձագանք, և իւր պատուոյն
մահաբեր թշնամին:

Ստախօսին վրայ ի՞նչ կարծիք կրնան ունենալ անոնք որ զՎատուած յաւիտեանս կան ճշմարտութիւն կը ճանչնան . եթէ ճշմարտութիւնը դերագոյն և սիրելի է , ուրեմն ստախօսութիւնը ամենայն ատելութեան արժանի :

Մշակարհս կը նմանի ծառի մը , որուն տերեւներն են մեր թշուառութիւնները , ու ծաղիկներն են մեր գծբազդութիւնները , իսկ պտուղն է մեր մահը : Մոյն ծառին ներքեւ փորեցին մեր նախնիք իրենց ու մեր գերեզմանները :

Մոլութեանց գերի մի չկրնար պարծիլ իբրև ազատ :

Մնցեալը մեզի համար ոչինչ է , ներկայն անբաժանելի կէտ մի է , որ մտածելու ատենդ կ'անցնի , իսկ ապառնին յուսոյ խաղալիկն է միայն :

ՂԵՐՁ ԱՌԱՋԻՆ ՄԸՍԻՆ



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ի Ա Ս Ա Ռ Ա Զ Ի Ն

Արարչապետութեան անշուշտի :


Աստուած անկերքը վեց օրուան մէջ ստեղծեց :

Նախ երկինքն ու երկիրը ստեղծեց , և ետքը
այսը խաւարէն զատելով , լոյսը ցորեկ անուանեց և
խաւարը դիշեր :

Զուրը ցամաքէն բաժնեց , և երկրիս պարարե-
լութիւնն սուսա :

Արկինքը լուսաւոր մարմիններով զարդարեց , և
հրամայեց որ օդին մէջ թռչուններ ըլլան , և ջուրին
մէջ լողուն կենդանիներ :

Ահրջապէս բոլոր ցամաքային կենդանիները ստեղ-
ծելէն ետե՛ մարդն ալ ստեղծեց բանաւոր հօգւով
խը պատկերին նման , և թաղաւոր կայուց ամենուն
վրայ : Աւ եօթներորդ օրը հանգստացաւ :




ԴԵՍ Բ.

Ադամ ու Եւայ . — Աշխարհի մարդոց :

Առաջին մարդը Ադամ անուանեցաւ : Աստուած
ուղեղով անոր ընկեր մը տալ, թմբրութիւն մը տուաւ
Ադամայ, անոր կողէն մէկն տաւ, ու կիներ ստեղծեց
և անունը դրաւ Եւայ :

Աստուած Ադամն ու Եւան երջանիկ դրախտի
մը մէջ բնակեցուց . որ Երկրային արքայութիւնն էր կոչուէր :
Ալ պատուիրեց անոնց որ դրախտին ամեն պտուղներէն ուտեն
բաց ի Բայբին և չարն Գիւրնաւոր
ճառին պտուղէն :

Ադամ ու Եւայ քանի որ Աստուծոյ հնազանդ
էին, երջանիկ և անվիշտ կեանք մը կ'անցընէին այն
երկրային արքայութեան մէջ, բայց սատանան որ իւր
հպարտութեանը պատճառաւ երկինքէն վաճառուր էր,



ազնեց որ Ադամն ու Եւան և իրենց բոլոր սերունդը
կորանցրնէ : Աւստի օձի կերպարանք մանելով , խաբեց
նախ Եւան , որ այն արդիկեալ պատուէն բռցնելով ,
Ադամին ևս տուաւ , ու միտանդ կերան :

Այս անհնազանդութիւնը պատժելու համար Աստուած
զիրենք դրախտէն դուրս հանեց , և կրից ու
թշուառութեանց դառապարտեց , որոնց կնիքը մահն է :

Այս անհնազանդութիւնը Սկէքնական Թո՛ղ կը
կոչուի , որուն պատիժը իրենց սերնդոց իսկ անցաւ :

Սակայն Աստուած իւր զթութեամբ խոստացաւ
որ օր մը իրենց Փրկիչ մը ղրկէ , որուն կամաւոր մահ-
աւամբը մարդկային սեռին սկզբնական մեղքը ջնջուի :



ԴԸՍ Գ.

Ապէն իւր Աբէլ եղբայրը կը սպաննէ :

Ապէն Ադամայ անդրանիկ զաւակը երկիրը կը մշակէր, և Աբէլ անոր եղբայրը ոչխարները կ'արածէր :

Ապէն Աստուծոյ պատուներ կը մատուցանէր, իսկ Աբէլ իւր ոչխարներուն անդրանիկները :

Աստուած Աբէլն զոհերը սիրով ընդունեց, վասն զի անոր պատին մաքրութիւնը կը ճանաչէր : Այս խորութիւնը Ապէնի նախանձը զրդուեց, և իւր կիրքէն կուրանալով, որ մը առաջարկեց անոր որ իւր հետը դաշտը պտրտելու գայ, և հոն սպաննեց իր եղբայրը, և առաջին անգամ երկիրը մարդու արեամբ ներկուեցաւ : Անիձեց Աստուած զԱպէն, և դատասարտեց

զան որ խր ըրելու կենալը մէջ թափառական ըլլայ :

Մատուած Ազգանը միւթարեւու համար ուրիշ
զաւակ մը ևս տուաւ անոր Սեթ անունով :

Ապէնի որդիքը իրենց հօրը պէս ամբարիշտ եղան ,
անոր համար Արեւ + Տարրիան կոչուեցան : Իսկ Սեթ ի
սերունդը՝ բարեպաշտ ըլլալով՝ Արեւ + Մատուածոյ ըս-
ուեցան :

Սակայն արուեստները Ապէնի սերնդոց մէջ աւելի
ծաղկեցան : Անովք խր անուամբը քաղաք մը շինեց ,
Թափել մարդոց դարբնու թիւն արվեցաւ , և՛ Այլեմա
խր քոյրը՝ մանել և կառաւ շէնել սորվեցաւ ց կանանց :
Յովբաղ երաժշտութիւնը հնարեց :

Սեթի սերունդը ի սկզբան տատուած ավախ էին և
Ապէնի սերունդէն զատ կ'ապրէին , բայց երբ անոնց
հետ խառնուեցան , իրենք ալ անոնց հետեւելով ,
զՄատուած մտցան ու երկիրը անորնու թիւններով
լեցուեցաւ :

Առջի մարդիկ հսկայ ու երկայնակեաց էին : Ազգամ
ինը հարիւր երեսուն տարի ապրեցաւ , Սեթ ինը
հարիւր տասն ու երկու , իսկ Մաթուսաղա ամենէն
երկայնակեացն եղաւ . քանզի ինը հարիւր վաթսուն և
ինը տարի ապրեցաւ :



ԴԱՍ Ե.

Պ ԵՒԵՂԷՂ:

Արք մարդիկ բաղմացան աշխարհի վրայ, և երբ
 կրկնց անօրէնութեանց չափը լեցուեցաւ, Աստուած
 ուղեց ջնջել զանոնք և ընդհանաւը ջրհեղեղ մը ըրաւ:

Միայն Նոյ արդար զանուելով բոլոր աշխարհի
 մէջ, նոյն պատիժէն աղատեցաւ տասլանի մը մէջ իւր
 կիներով, Սեմ, Քամ, Յարեթ երեք որդիներովը,
 անոնց կիներովը և Աստուծոյ հրամանաւ ամեն տե-
 ասի կենդանիներէ մէկ մէկ զոյղ հետը առած:

Քառասուն օր և քառասուն գիշեր տեղատարափ
 անձրև զալով, բոլոր երկրիս երեսը ջուրը պատեց,
 և ամենէ բարձր լեռնէն տասն և հինգ կանգուն բար-
 ձրացաւ, ու ամեն մարդիկ և կենդանիք ջնջուեցան:

Քրիստոսի ճննողներն երկը հազար երեք հարիւր և ութ ասրի առաջ :

Հարիւր յիսուն զմի ջուրը երկրիս երեսը ծածկելն ետև, սկսաւ քաշուիլ, և ջրհեղեղն եօթը ամիս ետքը նստաւ տապանը Հայաստանի Արարատ լեռին վրայ :

Նոյ տապանէն դուրս ելելով, իւր առջև դուրծը կողաւ իւր երախտադիտութեան զոհը մատուցանել Աստուծոյ : Օրհնեց Աստուած զՆոյ և իւր ընտանիքը, և հրամայեց անոնց որ ածին և բազմանան : Իւր ծիածանը երևցրնելով, խոստացաւ որ այնուհետև ջրհեղեղով չքնի զերկիրս :

Նոյ երկրագործութեան պարապեցաւ, և այդինէր անկեց. բայց երբ դինի խմելով զուարթացաւ, Քամ անոր մերկութիւնը տեսնելով սկսաւ ծաղրել, սակայն իր Սեմ և Հարեթ կղբայրները վերարկուով մը ծածկեցին զան :

Նոյ արթնցած ասեւր կղածն խմանալով, Քամը անիծեց որ իւր կղբարար ծառայ ըլլայ, իսկ Սեմն ու Հարեթը օրհնեց :

Այս երևելի գէպըր ազգացասպարայ վիճակը որոշեց. Սեմի սերունդէն Փրկիչը ծնաւ, Հարեթի սերունդը աշխարհախալութեամբ մեծցաւ, իսկ Քամի սերունդը միշտ թախառտիան, լեռնաբնակ և աղքատ մնաց :



ԻԼՍ Ե.

Մարտիկոսի և Գրիգորի Գործքք . — ԱԵԲԻՆ

Սոյ և իւր որդիքը Մարտիկոսեան երկրէն չհնան-
ցան, բայց իրենց սերունդները քիչ քիչ մերձակայ
երկիրները տարածուեցան, և Ջրհեղեղէն գրեթէ հար-
իւր յիսուն տարի ետքը այնչափ շատցան որ տեղեր-
նին քիչ գալով պէտք էին բոլոր աշխարհ ջրուիլ:

Բայց այս բաժանումէն առաջ իրենց անուան յի-
շատա՛յր մշանջենաւ որեւո Տամար՝ ուղեցին այնպիսի
բարձր աշտարակ մը շինել, որուն ծայրը մինչև ամ
պէրը հասնի, որպէս զի եթէ Աստուած վերստին
Ջրհեղեղով մը զհարգիկ ջնջել ուզէ, անոր վրայ
ելելով ազատին:

Այն ասան ամենքը մէկ լեզու կը խօսէին, մինչե որ Սենաարի ընդարձակ դաշտը դացին իրենց ամբարտաւան խորհուրդը 'ի դոյժ դնելու:

Անոնց այս գոռոզութիւնը պատժելու համար Աստուած լեզունին խառնակեց, որով մէջերնին շփոթութիւն ծագելով ստիպուեցան սկսուած շէնքը անկատար թողուլ և ցրուիլ: Այս տեղը Ռաբելոն կոչուեցաւ, որ կը նշանակէ խառնակոթիւն:

Այն ասան գլխաւորներուն միտքը ուրիշ ամբարտաւանութեան խորհուրդ մը ծագեցաւ, ուղեցին զամենքը նուաճել, և անոնց վրայ բայարձակ տէր լլլալ:

Ամիջապէս աշտարակին դաշտը պատերազմի դաշտի փոխուեցաւ, և հսկաները զանազան կուսակցութիւններու բաժնուելով, իրարու հետ սկսան պատերազմիլ:

Այս գլխաւորներէն մէկն էր Սեբբովթ՝ Սալի Քամ որդւոյն թուր, որ շատերը նուաճելով, ինքզինքը թագաւոր հրատարակեց ամենուն վրայ: Ռաբելոնի աշտարակին աւերակներուն վրայ Ռաբելոն քաղաքը շինեց, և Ռաբելական պետութիւնը կանգնեց:

ԻԱՍ 2.

Մարդոց ցրուել:

Ռազմաթիւ ընտանիք, որոնք այն բռնակալներուն

լրաժին տակը շինեան , իրենց անասունները և ինչքը հետերնին առնելով , սկսան Արարատեան լեռներէն հեռանալ , և աշխարհիս զանազան կողմերը տարածուիլ գետի մը յորդած ջուրերուն նման :

Այս ընտանիքները առանձին կամ միանալով երկրին հաւնած տեղերնին հաստատուեցան , հոն ժողովուրդ մը կամ ցեղ մը կազմեցին , ու զիրենք կառավարելու համար գլուխ մը կամ ցեղապետ մը ընտրելով , անոր անունովը կոչուեցան :

Ատնք ընդհանրապէս խաշնարած էին և երկրագործութեան կը պարապէին . և որովհետեւ իրարմէ ուրիշ սահման մը չունէին , բայց եթէ լեռ մը , գետ մը կամ անապատ մը , ուստի մէկ ցեղին ժողովուրդը կամ փառասիրութեան ոգւով , կամ դրացի ժողովրդեան երկրին արգասաւորութեանը կամ կլիմային գեղեցկութեանը վրայ նախանձելով , սահմանէն կ'անցնէր , միւսին երկիրը կամ ոչխարները կը կողոպտէր . ասով մէջերնին կռիւ մը կը ծագէր , զորաւորը տկարին վրայ կ'իշխէր և այսպէս կը կազմուէին առաջին իշխանութիւնները :

Չքհեղեղէն ետքը երկրիս գեղեցկութիւնը աւրուեցաւ , հողին ոյժը աւարացաւ , մարդոց կեանքը կարճրցաւ . մարդիկ երկրիս սլաուղները և բանջարեղէնները ուտելու չբաւականացան , սկսան անասուններ որսալ , անոնցմէ մէկ քանին ընտելացուցին և ի-

րենց գործին աշխատեցուցին : Գազանաց հետ մաքա-
ռելու համար՝ պէտք ունեցան զէնք հնարելու . զու-
րոնք ետքը իրենց նմանեաց դէմ դարձուցին :

Սակայն և այնպէս՝ Եստուծոյ օրհնութեամբքը գը-
րեթէ հարիւր յիսուն տարուան մէջ մարդիկ աճե-
լով բազմաթիւ ցեղեր ձևացան :

ԴԱՍ Ե.

Բաժանաժան ազգաց :

Յարեթի սերունդները Եսիոյ արեւմտեան կողմը և
մինչև Եւրոպա տարածուեցան :

Սեմի սերունդները Եսիոյ մէջ տեղերը և արե-
ւելեան կողմերը մինչև Ղարոն :

Քամայ սերունդները դէպ ՚ի Հնդկաստան և
Եփրիկէ :

Յարեթի որդիքն էին Գամեր, Մագոզ, Մադայ,
Յաւան, Եղիսա, Թորէլ, Թիրաս և Մոսոք :

Գամերէն եղաւ Թորոզոմ, որուն Հայկ որդիէն
յառաջ ևկան Հայերը :

Մագոզէն եղան Ալիւթացիք, որոնցմէ նաև Չի-
ները :

Մադայէն եղան Մարք և Մակեդոնացիք :

Յաւանէն եղան Յոյները :

Թորէլէն եղան Իբերիացիք :

Թիրասէն եղան Թրակիացիք :

Մասոյն յառաջ եկան Մոսկովները :

Սեմի որդիքն էին Արիաքսադ , Աղամ , Ասուր ,
Լուդ և Արամ :

Արիաքսադէն սերեցաւ Աբրահամ , որմէ եղան
Հրեայք :

Աղամէն յառաջ եկան Պարսիկք և Հնդկիք :

Ասուրէն եղան Ասորեստանցիք :

Լուդ նախահայր եղաւ Լիւդացւոց :

Արամէն եղան Ասորիք :

Քամայ որդիքն էին Քուշ , Քանան , Փուժ և
Մեսոպոտամիա :

Քուշէն սերեցան Աթովպացիք :

Քանանէն եղան Քանանացիք , Փիւնիկեցիք ,
Փղշտացիք և այլն :

Փուժէն յառաջ եկան Քարբարոսները :

Մեսոպոտամիան եղան Աղիպտացիք :

Մարդիկ որչափ բազմանալով բոլոր աշխարհ կը
տարածուէին , ու աստուած պաշտութեան աղբիւրէն
այսինքն Նոյի քովէն կը հեռանային , այնչափ և ի-
րենց անմեղութիւնը և Աստուծոյ երկիւղը կը կոր-
նային , և զանազան մոլութեանց մէջ թաւալե-
լով , կը մոռնային իրենց Արարիչը , ու անշունչ արա-
բածները կը պաշտէին : Ոմանք արեւուն , լուսնին ,
աստեղաց , և այլք մինչև անասնոց երկրպագութիւն
կրնէին :



ԳԱՍ Ը.

Հայկ. — Իշխանութիւն Հայկազանց:

Հայկ Յարեթի թուան որդին, որ աշտարակաւ շինութեան զացող հսկաներէն մէկն էր, ուրիշ իշխանութեան տակն ըլլալ չուզելով, իր ընտանեօքն ու մարդիկներովը դարձաւ Արարատեան երկիրը եկաւ Մոյ նահապետին քով բնակելու:

Հոն մնացած սակաւաթիւ մարդիկ կային, որոնք Սենաար զացած չէին, և ինքնակամ Հայկայ հրնազանդեցան:

Սերրովթ քանի մը ցեղեր նուաճելէ ետե՛ ուզեց

որ Հայկն ևս իւր իշխանութեան տակն առնու . բայց
երբ չկրցաւ քաղցրութեամբ զան համոզել , անհամար
զօրքով անոր վրայ գնաց :

Հայկ իւր երկիրը և իւր ժողովրդեան աստուած-
պաշտութիւնը պաշտպանելու համար՝ շվախցաւ ա-
նոր դիմացն ելլելու երեք հարիւր հողւով , որոնք էին
իւր եղբարքը , որդիքը թոռունքը և իւր մարդիկնե-
րը , և իւր նետովը զարկաւ սպաննեց հսկան , ու ա-
նոր զօրքը ցրուեց : (2350 Վ. Ա.)

Այսպէս Հայկ իւր քաջութեամբը ազատեց եր-
կիրս այնպիսի բռնաւորի մը ձեռքէ , որ կուզէր բո-
լոր աշխարհս իւր լուծին տակն առնուլ և իրր Աս-
տուած պաշտուիլ :

Հայկ նահապետը մեր ազգին տէրութիւնը հաս-
տատելով , երկրին ու ժողովրդեան կարգ կանոն դրաւ :
Իւր անունովը մեր ազգը Հայ անուանեցաւ և մե-
կրկիրը Հայաստան :

ԴԱՍ Թ.

Հայոց սկզբնական կառավարութիւնը և կրօնքը :

Հայոց սկզբնական կառավարութիւնը նահապե-
տական էր կամ ասնուտիրական . իւրաքանչիւր տա-
նուտէր կամ ընտանիքի զլուխ առանձին բնակութիւն
մը հաստատելով , ինքը կ'իշխէր և կը կառավարէր իւր

ընտանիքը և երկիրը . և իւր նախահարց անմեղութեան հետեւելով, Աստուծոյ երկխօսին մէջ կը կրթութիւն իւր ժողովուրդը, և իւր երկիրը կը շէնցընէր . սակայն շայկայ յաջորդներուն գլխաւորութիւնը կը ճանչնար :

Քանի որ օտար թշնամիները շայաստանի վրայ յարձակած չէին, շայկայ զաւակները այս կերպով կը կառավարուէին, որ գրեթէ հինգ հարիւր տարի տեւեց ամենայն խաղաղութեամբ և անմեղութեամբ, և այսչափ միջոցին շայկայ յաջորդներն եղան Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ և շարմա, որոնք քաղաքաշինութեամբ շայաստանը կը շէնցընէին : Սակայն երբ օտար թշնամիները շայաստանի վրայ սկսան յարձակիլ, այն ատեն աւելի սերտ միութիւն մը կազմել հարկ եղաւ թշնամիները հալածելու և իրենց հայրենիքը պաշտպանելու համար :

Արմենակայ Խոռ և Մանաւազ եղբայրներէն ելան Խոռխոռունեաց, Մանաւազեանց, Բզնունեաց և Արդունեաց նախարարութիւնները : Գեղամայ Արսակ որդիէն ելաւ Միւնեաց նախարարութիւնը :

Ինչպէս որ Աստուածպաշտութեան ճշմարիտ կրթութիւնը շայաստանի մէջ սկիզբն առաւ, և Աստուծոյ առաջին սեղանը հոն կանգնեցաւ, նոյնպէս և ամենէ աւելի շայաստանի մէջ կենդանի մնաց Աստուածպաշտութիւնը . վասն զի Աոյ և իւր որդիքը

Հայաստանի մէջ մնալով, Մատուած պաշտութեան
ուսումը Հայաստանի բնակչաց սրտին մէջ արմատա-
ցուցին:

Հայաստանի առաջին արուեստները դրեթէ, կենաց
պահպանութեան կարևոր եղածն են էին, զորոնք Նոյ
խը որդւոց և սերնդոց ստրկեցուց, և որոնք էին երկ-
րագործութիւն, խաշնարածութիւն, դարբնութիւն,
և բնակութիւն ու զգեստ շինել:

Ի Ա Ս Ժ .

Չբեկեղէն ետե երեւելի ազգերը:

Չբեկեղէն ետե երեւելի եզոզ ազգաց շատերուն
սկզբնական պատմութիւնը ճիշտ չզխայուիր: Քանի
մը ազգեր աւանդութիւններէ, և արձանագրութիւն-
ներէ, հաւաքելով պատմութիւն մը ձեացուցած են,
բայց շատերը անհիմն և առաստելախառն են:

Ար կարծուի թէ Յարեթի ցեղէն Չինաստան
հասուածներ երթալով, հոն հաստատուեցան և հոն
եզոզ Քամի սերունդին հետ միանալով, տէրութիւն
մը հաստատեցին:

Ի՞նչի Չինաց տէրութեան առաջին հիմնադիրը
կը համարուի, որ խաշնարածութիւնը, երկրագոր-
ծութիւնը և դարբնութիւնը իւր երկրին մէջ խո-
թեց ու աստղաբաշխութիւն և զիր ստրկեցուց իւր
ժողովրդեան:

Հնդիկները Չինաց պէս խիստ հին ազգ մը կը սեպուին, սակայն մինչև մեծն Աղեքսանդրի արշաւանքը իրենց պատմութիւնը առասպելախառն է: Վիտութիւնները և արուեստները Հնդկաց մէջ խիստ հին ժամանակէն ծաղկած էին:

Քարելացւոց երկիրը վաճառականութեան կենդրոնն ըլլալով, շուտով հարստացաւ, և արուեստից ու դիտութեանց մէջ մանաւանդ աստղաբաշխութեան մէջ ծաղկեցաւ, սակայն իրենց մեղկութենէն չկրցան անկախութիւննին երկար ժամանակ պահել:

Մեմի որդին Ասուր Տիգրիս գետին եղերքը Անուէ քաղաքը շինելով, Ասորեստանեաց պետութիւնը հաստատուց, որ թէև դիտութեանց կողմանէ, Քարեւոնի յառաջադիմութիւնը չունեցաւ, սակայն գինուորական ոյժը շատ զօրացուց:

Ազիպտացւոց սերութիւնը խիստ հիներէն և ծաղկեալներէն մէկն է, սակայն պատմութիւննին խառնաշփոթ է:

Ի սկզբան քանի մը փոքր իշխանութիւններէ կազմուած էր. իրենց առաջին թագաւորը Մէնէսը կամ Մեսարեմը կը դնեն, որ Մեմփիս իւր թագաւորանիստ քաղաքը շինեց, ու պատերազմներով բոլոր Ազիպտոսը իւր իշխանութեան տակն առաւ:

Վիտութիւնները և արուեստները հին ժամանակէն ծաղկեցան Ազիպտոսի մէջ:



ԳՆՍ ԺԱ.

Աբրահամի կողմեր:

Արք մարդոց մեծադոյն մասը կռապաշտութեան խաւարին մէջ թաղուեցան, Աստուած ուղեց աւանդ մէջէն առանձին ժողովուրդ մը բնարել, որպէս զի իւր օրինաց հաւատարիմ մնաց, Այլի Սեմ որդւոյն ղեզէն Թարայի Աբրահամ որդին իւր ժողովրդեան նախահայրն ըրաւ, և որպէս զի կռապաշտներէն զանազանին՝ հրամայեց որ թրխատուին:

Աբրահամ իւր հօրը հետ Քաղդէացւոց կռապաշտ երկիրը կը բնակէր, բայց Աստուծոյ հրամանաւ իւր հայրենիքը թողով, Մեջաղեալ գնաց Քանանացւոց երկիրը բնակելու:

Աբրահամ իւր արդարութեամբը Աստուծոյ սի-

ընդի եղեր էր, և Աստուած խոստացաւ անոր որ իւր
 սերունդը պիտի բազմացընէ, և ինքը շատ ազգերու
 հայր պիտի ըլլայ :



Սողոմի և Գոմորի բնակչաց մեղքերը այնչափ
 շատցան, որ Աստուած որոշեց ջնջել զանոնք : Ար-
 բահամու աղաչանքը բաւական չեղան Աստուծոյ բար-
 կութիւնը իջեցընելու համար :

Գովտ Աբրահամու եղբորորդին Սողոմի մէջ կը
 բնակէր, բայց արդար ըլլալով, Աստուած չուզեց որ
 արդարը մեղաւորին հետ կորսնցընէ, ուստի Աստու-
 ծոյ հրամանաւը Գովտ փախաւ այն երկրէն իւր եր-
 կու աղջիկներովն ու կինովը, որ աղի արձանի փո-
 խուեցաւ՝ անհնազանդութեամբը ետին նայելուն հա-
 մար :

Սողոմի և Գամորի վրայ երկինքէն հուր և ծրծուր տեղալով, այն քաղաքներն ու բնակիչք մահիւր դարձուցին :

Արրահամ իւր հարիւրամեայ հասակին մէջ իւր իննանամեայ Սառա կնոջմէն Խահակ որդին ունեցաւ Աստուծոյ հրամանաւ ը :

Աստուած Արրահամու հնազանդութիւնը փորձելու համար՝ հրամայեց անոր որ իւր որդին իրեն զոհէ, եւք կը պատրաստուէր Աստուծոյ հաւատարիմ ծառայն հրամանը կատարելու, Աստուած արգիլեց զան իր հրեշտակը զրկելով, ու Խահակայ տեղ ոչխար մը զոհ մատոյց, զոր հրեշտակ մը ներկայացուց իրեն :

Արրահամ իւր զանազան կիներէն ուրիշ ութ զաւակներ ևս ունեցաւ, որոնք ժողովուրդներու նախահայրեր եղան. բայց իւր բոլոր հարստութիւնը Խահակին թողուց :

Արրահամէն և իւր որդւոցմէ սերեցան Խորայեւացիք, Արաբացիք, Աղովմայեցիք և Խամայեւացիք :

Ղովտայ Մովսր և Ամոն որդւոցմէ սերեցան Մովսրացիք և Ամոնացիք :

ԴԱՍ ԺԲ.

Խահակ, Յակոբ և Յոզեփ :

Խահակ երկու զաւակ ունեցաւ՝ Ասա ու Յա-



կոր : Կաաւ թէև անդրանիկն էր , բայց որ մը որ-
տէն անօթի դարձած ատեն՝ Յակորին կերած ոսպ-
նաթանը ուտելու համար՝ իւր անդրանկու թեան ի-
րաւունքը անոր ծախելով , Արարիոյ հիւսիսային կող-
մը դնաց , ուր Աղոզմայեցւոյ նահապետն եղաւ ,
քանզի Կաաւ Ադամ իսկ կոչուեցաւ :

Յակոր իւր հորը օրհնութիւնը ընդունելէն ետև՝
կրբ Միջագետք կերթար՝ ղիշերը ճանապարհին վրայ
քնացաւ , և իւր քունին մէջ երկրի վրայ սանդուղ
մը տեսաւ , որուն ծայրը մինչև երկինք կը հասնէր , ու
հրեշտակները կեղնէին և կ'իջնէին . ւանդուղին վերի
կողմը Աստուած երեցաւ , որ Աբրահամու և Իսա-
հակայ ըրած խոստումը իրեն իսկ ըրաւ :

Յակոր արթննալով՝ այն տեղը Քեթէլ անուանեց ,
որ ատեն Աստուծոյ բնակ է :

Յակորբ , որ Խորայէլ իսկ կոչուեցաւ , տասն ու երկու որդի ունեցաւ , որոնք տասն ու երկու ցեղերու նահապետներ եղան :

Ասոնց մէջ երեւելի են Ղևի և Յուդա . առաջինին որդիքը Ասաուծոյ ծառայութեանը նուիրուեցան , և երկրորդին ցեղէն պիտի ելնէր Խորայելացւոց թագաւորութիւնը և Քրիստոս աշխարհի Փրկիչը :

Յակորբայ որդւոց մէկն էր նաև Յովսէփ , որ խիստ սիրելի էր իւր հօրը . եղբայրները նախանձելով , զան Խամայէլացի վաճառականաց ծախեցին , որոնք Ազիպտոս տարին ու թագաւորին դահճապետին վաճառեցին : Դահճապետին անզգամ կնոջ զրպարտութեամբը բանտ դրուեցաւ , բայց թագաւորին երազը մարդարեւական ոգւով մեկնելուն համար՝ անոր երկրորդն եղաւ :

Յովսէփ թագաւորին երազէն նախատեսութեամբ կօթը տարի առատութիւն և կօթը տարի սով գուշակելով , թագաւորը Յովսէփայ յանձնեց սովին համար պաշար ժողվելը , որով ոչ միայն Ազիպտոսը սովին նեղութենէն ազատեց , այլ և զրայի ազգերը իրմէ ցորէն դնելու կու գային :

Յովսէփայ եղբարքն ևս ցորէն դնելու համար Ազիպտոս եկան . Յովսէփ զինքը իւր եղբարց ճանչցուց , իւր հայրը և եղբայրները ընտանեօք Ազիպ-

տու կանչեց, և Պետեմ բարերեր երկիրը անոնց
տու աւ որ բնակին :

ԴԼՍ ԺԳ.

Արամ :

Սայաստանի ժողովրդեան խաղաղասիրական կեանքը և տանուտիրական կառավարութիւնը դրացի ազգաց երկրակալութեան եռանդը շարժեցին, որոնք Սարմա նահապետին կառավարութեան վերջին տարիները Սայաստանի զանազան կողմերուն վրայ յարձակելով, զՍայերը կը նեղէին, և երկրին մէկ մասը հարկատու ըլլեր էին :

Այս թշնամիները հալածելու համար պէտք էր կառավարութեան ոյժը կեղբոնացունել, և Արամայ նման իշխանի մը առաջնորդութեամբը պատերազմի ելլել :

Սարմայի Արամ որդին կառավարութեան սանձը ձեռքը առածին պէս՝ յիսուն հազարի չափ զօրք ժողովեց, ու արեւելեան կողմը քալեց Մարաց Նիքար իշխանին վրայ, ջարդեց անոր զօրքը և ղինքը պատերազմի մէջ ողջ բռնելով, Արմաւիր քաղաքը բերաւ, և հրամայեց որ երկաթեայ դամով ճակատէն դամեն զան բարձր աշտարակի մը ծայրը : Անոր երկրին մէկ մասին ևս տիրեց, ու Սիւնեաց ջեղին յանձնեց :

Արամ այն կողմը խաղաղորեն լով, իւր զինքը Ռաբելացւոց Ռարշամ իշխանին վրայ դարձուց, որ քառասուն հազար հեռեակով և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վրայ եկեր էր. զարկաւ Ջարդեցանոր զօրքը, և մնացածը վախուց, իսկ Ռարշամ իշխանը Արամայ զինակիրները սպաննեցին: Արամ անոր երկրին մէկ մասին տիրելով՝ Վաղմոսին ցեղին յանձնեց:

Հայաստանի արեւելեան ու հարաւային կողմերը նուաճելէն ետե՛ դէպ ՚ի արեւմտեան կողմը գնաց, ուր Վապադովկացւոց Պայապիս անունով իշխանը զօրանալով՝ Սև ծովէն մինչև Միջերկրական ծովը տիրեր էր:

Արամ սաստիկ կոտորածով հալածեց զան մինչև Միջերկրական ծովուն կողմները, անոր երկրին տիրեց, ու Մշակ անունով Հայ կուսակալ մը զըրաւ հոն, և հրամայեց որ ամեն կողմ Հայերէն ստրկին ու խօսին:

Մշակ Վապադովկիոց մէջ քաղաք մը շինեց ու իւր անուամբը Մշակ անուանեց. բայց բնակիչները սխալ արտասանելով՝ Մաժակ կ'ըսէին: Դամանակ մը ետքը՝ այս քաղաքը Հռովմայեցւոց Յուլիոս Ասար ինքնակալէն նորոգուելով՝ Ասարիս կոչուեցաւ, որ է Ղայսէրի քաղաքը:

Արամ թշնամեաց յաղթելէն և անոնց երկրին տիրելէն ետե՛ սխաւ Հայաստանը բարեկարգել: Ար-

ճեղքաները և դիմուորահանութիւնը աւելի ծաղկեցան իւր օրովը : Հայաստանի սահմանները ընդարձակելով, անբնակ տեղերը բնակիչներով լեցուց, ու զանազան մասերու բաժնելով՝ Մ. աջին, Արկարդ, Արրորդ և Չորրորդ Հայք անուանեց :

Մրամայ անունը օտարաց մէջ այնչափ երևելի եղաւ որ բոլոր ազգերը սկսան անոր անուամբը զմեզ Մրամաձան կամ Մրձն, ու մեր երկիրը Մրձնիա կոչել :

ԳՆՍ ԺԴ :

Մինոս, Շամիրամ և Մրայ :

Մտրեատանեաց տէրու թիւնը՝ Մինոսի և անոր Շամիրամ կնոջ գահակալութեան ժամանակը շատ երկուելի եղաւ :

Մինոս շատ զօրք ժողովելով՝ Հայաստան անցաւ : Բայց Մրամ պարզեւներով անոր դիմացն ելելով՝ անոր բարեկամն ու նիզակակիցն եղաւ :

Մինոս անոր օգնութեամբը Միջերկրական ծովէն մինչև Ասսպից և Պարսից ծովը եղած ազգերը նուաճեց, բայց Քաղարիացիք երկար ատեն իրեն ընդդիմացան, մինչև որ զօրավարի մը Շամիրամ անուն կնոջ խրատովը Քաղարիա քաղաքը առնուեցաւ : Մինոս կնոջը իմաստութեան վրայ զարմացած՝ իրեն կին առաւ, և իւր մահուանէն ետև՝ Շամիրամ իրեն յաջորդեց :

Շամիրամ ամեն կողմանէ իւր էրիկը գերազանցել
ուզելով, Նաբելոն քաղաքը հաստ ու բարձր պարիսպ-
ներով պատեց, աշտարակներով ամրացուց, կա-
մուրջներ նետեց ու այն հռչակաւոր պարսէզները
շինեց, որոնք աշխարհիս եօթը հրաշալեաց կարգը
անցան :

Սակայն իւր վաւաշ բարբոլը մեծ արատ մը թո-
ղուց իւր պատմութեանը մէջ : Ախտամոլ թագուհին
Հայաստանի Արայ նահապետին գեղեցկութեանը
զարնուելով, ուզեց անոր հետ ամուսանալ . բայց Արայ
անոր կամայքը ընդդիմանալով, աւելի ուզեց պատե-
րաղմով մեռնիլ, քան թէ առաքինութեան դէմ մե-
ղանշել : Արայ պատերազմին մէջ մեռաւ, ու Վարդոս
իւր որդին անոր տեղ յաջորդեց :

Շամիրամ Հայաստանի օղին և դիրքին գեղեց-
կութեանը հաւնելով, Վանայ լճին մօտ գեղեցիկ ա-
մառանոց մը շինեց, որ Շամիրամակերտ և ետքը
Վան ըսուեցաւ :

Շամիրամ անհամար զօրքով Հնդկաց վրայ ևս
գնաց, բայց յաղթուեցաւ : Իւր որդին Վինուաս ի-
րեն յաջորդեց, բայց թուլամորթ մէկն ըլլալով, և
իւր երեսուն յաջորդներն ևս իրեն հետեւելով՝ Ասո-
րեստանցւոյ տէրութիւնը տկարացաւ և այլևայլ ազգաց
հպատակեցան :

ԴԼԾ ԺԵ.

Յուճաստան :

Յուճաց պատմութեան սկիզբը առապելախառն է : Յարեթի Յաւան որդիէն հասուածներ շեղ լեսպոնտոսի վրայէն Աւրոպա անցան Թանասաղիայի և Ապիրոսի մէջ հաստատուեցան, և անկէ Յուճաստան տարածուեցան :

Յուճաստանի առջի բնակիչները վայրենիի պէս կ'ապրէին, անտառներու մէջ կը թափառէին, խոտ և վայրի պտուղներ կ'ուտէին, և շատ դարեր այս վայրենութեան մէջ մնացին, մինչև որ Փիւնիկէէն և Ազիպտոսէն դաղթականներ գալով, անոնց մէջ քաղաքականութեան սկզբունքը խոթեցին :

Խնաքոս Փիւնիկեցին այն դաղթականաց գլուխն անցնելով, սկսաւ կառավարել զանոնք :

Պեղաքոս՝ Խնաքոսի թոռը և անոր յաջորդը սորվեցուց Յուճաց հիւղեր շինել, տերեւներու տեղ կաղին ուտել և անասնոց մորթելով զգետ շինել : Յոյները անոր անունովը Պեղասքեանք իսկ ըսուեցան :

Յուճաց կրօնքը բնապաշտութեան խառնուրդ մ'էր, բայց երբ օտար դաղթականները Յուճաստան մտան, բազմաստուածութիւնն ևս խոթեցին հոն. իրենց գլխաւոր աստուածն էր Արամազդ կամ Ափոս :

ԴԸՍ ԺԶ.

Քանանացիք և Փիւնիկեցիք :

Քանանացիք Քանանու ցեղէն սերեցան և Մփիկէ ու Մսիոյ հարաւային ծովեզերքը տարածուեցան : Իրենց արմաւենեաց անասուններուն կամ ըստ այլոց բնակչաց կարմրութեան պատճառաւ իրենց երկիրը Փիւնիկէ և իրենք Փիւնիկեցիք կոչուեցան :

Փիւնիկեցիք նաւարկութեան, վաճառականութեան և արուեստից կողմանէ, հին ժամանակուան ամենէ երևելի ազգերէն մէկն էին :

Փիւնիկեցիք զատ միացեալ տէրութիւն մը չկաղմեցին, այլ իրենց ամեն ղլխաւոր քաղաքաց մէջ անկախ թաղաւոր կամ դաաւաւոր մը ունէին : Մ.ՍԿ քաղաքաց մէջ երևելի էին Սիդոն, Տիրոս և Մարտոս :

Փիւնիկեցիք աշխարհիս առաջին ծովագնաց ազգն էին, և հետաւոր երկիրներու հետ առուտուրի յարաբերութիւններ ունենալով, քիչ ժամանակուան մէջ շատ հարստացան :

Իրենց նաւերը բոլոր Միջերկրական ծովը բռնէր էին, և մինչև Մտանտեան ծովը ելլելու համարձակներ էին :



ԴԸՍ ԺԵ,

Մ'ովսէս . — Խարայելացոց Ազիպատսին ելելիք :

Յակորայ որդիքը Ազիպատսի մէջ բաղմանալով ,
 մեծ թողւալուրդ մը եղան : Ազիպատացիք անոնցմէ
 վախնալով , զանոնք սկսան նեղել , և որպէս զի չբաղ-
 մանան՝ հրաման հանեցին որ Խարայելացւոց արու-
 զաւակները ծնելուն պէս՝ Սեղոս գետը նետուին :

Մ'ովսէս այս միջոցիս ծնած ըլլալով , իւր մայրը
 երեք ամիս զինքը պահելէն ետե՛ ծնփուած պրտուե-
 ղէն տապանակի մը մէջ դրաւ և Սեղոսին եղերքը
 թողուց :

Փարաւոն թագաւորին աղջիկը զայն տեսնելով՝
 դժաց վրան , և իւր պալատը առաւ մեծցուց , ու
 Ազիպատացւոց բոլոր զիտու թիւնները սորվեցրնել տուաւ .
 անոք :

Մովսէս մեծնալով որ մը Ազխալուացի մը տեսաւ որ Խորայելացի մը նեղութիւն կու տար, զարկաւ մեռցուց զԱզխալուացին. բայց վախնալով Մադիանացւոց երկիրը փախաւ. ու Յոթոր քուրմին Մեփովրա աղջիկը իրեն կին առնելով, իւր աներին ոչ խարները կ'արածէր Քորեք լեւան վրայ:

Հոն Աստուած իրեն հրամայեց որ Ազխալուա դառնայ ու Խորայելացիները Ազխալուացւոց գերութենէն ազատէ: Մովսէս իւր Ահարոն եղբորը հետ Փարաւոնին ներկայացաւ, բայց թագաւորը հաւանեցաւ զանոնք արձակելու:

Այն ատեն Մովսէս Աստուծոյ հրամանաւ շատ հրաշքներ ըրաւ և Ազխալուա միւս տասը տեսակ սոսկալի պատիժ բերաւ, որոնցմէ սարսափած Փարաւոն հրաման տուաւ որ Խորայելացիք ելին երթան:

ԻՆՍ ԺԸ.

Մովսէս առաւ Խորայելացիները, որ վեց հարիւր հազար հոգի էին, և կարմիր ծովուն մէջէն ցամաք ձամբայ մը բանալով, միւս կողմը անցուց: Օղջաց թագաւորը զանոնք թող տալուն վրայ, ու զօրքով ետեւէն ինկաւ մինչև կարմիր ծովը մտաւ. բայց Մովսէս իւր ժողովուրդը միւս կողմը անցրնելէն ետև՝ իւր գաւազանը ջուրին երկնցուց և ծովուն ջրերը միացրնելով, Փարաւոն իւր բոլոր զօրք խեղդուեցաւ:



Այսպէս Իսրայելացիք Ազիպտացւոց գերութենէն ազատեցան, ու Աստուած Մինա լերան վրայ կայծակներու և փայլակներու մէջէն իւր Տասը պատուիրանները տուաւ Մովսէսի ձեռքը երկու քարէ տախտակներու վրայ գրուած:

Ըրեալք շատ անգամ Մովսէսի բացակայութեան ժամանակ ապստամբելով՝ կուռքեր կը շինէին և անոնց երկրպագութիւն կընէին: Իրենց թերահաւատութեանը և անօրէնութեանցը համար քառասուն տարի անապատին մէջ թափառեցան և Ազիպտոսէն ելլողներէն միայն Յետու և Քաղեք արժանի եղան Խոստացուած երկիրը մտնելու:



ԴԷՍ ԺԹ :

Մասուած շատ հրաշքներ ցուցուց իւր ժողովրդեան՝
 ցորեկը արեւուն երեսը ամպ պատելով՝ անոր տաքու-
 թեանն կը պատսպարուէին, և դիշերը լուսոյ սիւն մը
 դիրենք կը լուսաւորէր: Ամեն առտու ուտելու հա-
 մար երկինքէն մանանայ կ'իջնէր, և Մովսէս ժայ-
 ուէն շուր բղխեցուց ժողովրդեան ծարաւը անցրնելու:
 Համար:

Մովսէս իւր փոքր թերահաւատութեանը համար՝
 արժանի չեղաւ Աւետեաց երկիրը մտնելու, միայն
 Աբարիմ լեռան վրայէն տեսաւ զայն, ու իւր ժողո-
 վրդին առաջնորդութիւնը Յետուին յանձնելով՝
 հարիւր քսան տարեկան մեռաւ (1450):

Մատուած, որ մասնաւոր խնամքով Խորայէլացւոց կ'առաջնորդէր, իւր ընտրեալ ժողովրդեան համար կրօնական, քաղաքական և ընկերական օրէնքները իւր սուրբ բերանովը Մովսէսի խօսեցաւ, ու գրի առնել տուաւ :

Այս օրինաց հիմն էր Մատուած պաշտու թիւնը: Մատուած Մովսէսի Ահարոն եղբայրը քահանայապետ կարգեց, և այս քահանայական իշխանութիւնը իրմէ ետքը իւր զաւակացը անցաւ :

Խորայէլացւոց թաղաւորն էր Մատուած, որ աներևութաբար իրենց վրայ կ'իշխէր, և գլխաւորաբար Ակայութեան խորանին մէջ կը բնակէր :

Ակայութեան խորանը գիւրատար վրան մ'էր երկու մասի բաժնուած, որուն ներքին մասը Սրբութիւն Սրբոց կըսուէր, քանզի հոն կը գտնուէր Տասը պատուիրանաց տախտակները անփուտ փայտէ շինուած Աւստի Տապանակին մէջ :

Ղեկին ջեղը Ակայութեան խորանին սպասաւոր որոշուեցաւ :

ԴԱՍ Ի.

Յետ և ժամանակ դաստիարակաց :

Յետ Մատուածոց հրամանաւր Յորդանան գետին ջուրերը երկու բաժնեց, ու ժողովուրդը ոտքով մէ-



Ճին անցուց. երբ Արիքով քաղաքին քով հասան, հրամայեց որ եօթն անգամ պարիսպներուն բոլորակքը դառնան ու ետքը փողերը հնչեցրնեն. այն ատեն պարիսպները իրենք իրենցմէ ինկան կործանեցան, և ինքը առանց պատերազմելու քաղաքին տիրեց:

Յետև հետոհետէ Քանանացւոց բազմաթիւ կռապաշտ թագաւորաց հետ պատերազմելով՝ Ասսուածոց զօրութեամբը յաղթեց անոնց, ու անոնց երկրին տիրելով՝ Խորայէլացւոց երկրաստան զեղերուն մէջ բաժնեց, միայն Ղեկին զեղը, այսինքն՝ Քահանաներն ու Ղետացիք՝ մասնաւոր դաւառ մը չառին, այլ միւս զեղերուն մէջ բաժնուեցան, որպէս զի Ասսուածային օրէնքները անոնց սորվեցրնեն:

Յետևայ մահուանէն ետև՝ Խորայէլացիք դարձեալ զԱսսուած մոռնալով կռապաշտութեան մէջ ինկան, և Ասսուած զանոնք պատժելու համար, թշնամեաց ձեռքը կը մտանէր: Արբ ուղղութեան կու գային՝

Եստուած իշխան մը կը հաներ անոնց առջև, որ
անոր առաջնորդութեամբը թշնամիները կը հաղածէին
և անոնց գերութենէն կ'ազատէին: Ես իշխանները
Պատաւոր ըսուեցան, վասն զի ժողովրդեան դատե-
րը իրենք կը տեսնէին:



ԳՐԱՍ ԻԱ.

Պատաւորաց մէջ երեւելի եղաւ Սամիսոն, որ
խոր մարմնոյն խիստ մեծ ուժովը Փղշտացւոյ
զէմ շատ քաջութիւններ ըրաւ, և անոնցմէ շատ
մարդ ջարդեց: Բայց Պալիլա անուն կէն մը անոր
ոյժին գաղանկիքը անորմէ իմանալով, քնացած ժամանա-
կը անոր մազերը խուզեց, և Փղշտացւոյ ձեռքը մատնեց
զան, որոնք անոր աչքերը փորեցին և բանտը դրին:

Օր մը երբ Փղշտացիք տօնասխմբու թեան մը մէջ էին, Սամփաօնը բանտէն հանեցին որ զինքը ծաղրեն. Սամփաօն, որուն մազերը մեծցած ըլլալով՝ ոյժը վերատին վրան եկեր էր, ձեռքերը շէնքին երկու սիւներուն երկնցընելով, այնպիսի ուժով մը թոթվեց, որ բոլոր շէնքը կործանեց, և հոն ժողվուած ելեք հազար Փղշտացւոց հետ մէկտեղ փրատակաց տակը թաղուեցաւ :

ԻԱՍ ԻԲ.

Պատգամ-Բի-ն Յո-նաց (1580—1250):

Աեկրոպա Ազիպատային Յունաստան գաղթականներ բերելով՝ Ատտիկէ բնակեցաւ. քաղաք մը շինեց ու անունը Աեկրոպիա դրաւ, ետքը տասն ու երկու զիւղաքաղաքներ ևս աւելցուց, որոնք Թեսսալոս ելեք հարիւր տարի ետքը իրարու միացուց, մէկ քաղաք ըրաւ, ու Աթենասայ նուիրելով՝ Աթէնք կոչեց զայն:

Աեկրոպա Ատտիկեցիները սկսաւ կրթել. Աթենասաստուածուհւոյն պաշտօնը և ամուսնութեան կարգը հաստատեց, և օրէնք դրաւ որ մեռելները թաղեն:

Թեսսաղիոյ Ռեւկալիոն թաղաւորին շնորհիւ որ զիէն այն կողմի Աեղասքեանները շնորհիւ ըսուեցան, և ասոր որդւոց և թոռանց սերունդները իրենց անուամբը Աւողացիք, Ռորիացիք, Յոնիացիք և Ա-

Քայնցիք ըստ կցան և Հելլենացւոց զանազան ճիւղերը կազմեցին, որոնք շուտով զարգացան և երևելի եղան:

Աազմոս Փիւնիկեցին գաղթականներով Յունաստան գալով Թեբէի միջնաբերդը շինեց, ու Փիւնիկէէն հետը այբու բնն բերած ըլլալով Յունաց կարգաւ ու գրել սորվեցուց, վաճառականութիւն և ուրիշ կարեւոր արուեստներ մացուց անոնց մէջ:

ԳԼՍ ԻԳ.

Գրեթէ նոյն ժամանակները Ալէքս թափառական Անշասքեանները ժողովեց, ու Սպարտա քաղաքին հիւնը դրաւ:

Այսպէս Յունաստան արտաքին գաղթականներէ կրթուելով, իւր վայրենական վիճակը թողուց և անոնց քաղաքականութեան հետեւելով շուտով առաջ դնաց:

Յունաց առջի դիւցազունները, որոնք իրենց քաջութեամբը կամ երևելի գործերովը փառաւոր յիշատակ մը թողուցած էին, աստուածոց կարգը կանցնէին, և բանաստեղծները անոնց պատմութեան վրայ շինծու և անհիմն գործեր աւելցրնելով, անոնց գերբնական կարողութիւն կու տային:

Կորիւսացի ցեղէն Հերակղէս դիւցազնը Յունաստանը աւերող հրէշները և աւազակները մեռցուց ու շատ արշաւանքներ ընելով երևելի եղաւ:

Յոնիայի ցեղէն Թեոսոս Արեւացւոց վրայ մեծ յաղթութիւններ ըրաւ, Աթէնք քաղաքը մեծցուց, բայց իւր քանի մը գործերը իւր փառքը նսեմացուցին: Ապիրոսի թագաւորին կինը յափշտակել ուզելով, անորմէ բռնուեցաւ ու բանաւ դրուեցաւ, ու բկէց Հերակղէս ազատեց զինքը:

Աւողացւոց ցեղէն ելաւ Յասոն դիւցազներ, Սեաւ ծովուն արեւելեան եզերքէն սուսապելեալ Ասկի գեղմը վիշապներու և հսկաներու ձեռքէն յափշտակելու համար, Հերակղէսը, Թեոսոսը, Արիէոսը, Ապստոսը, և իւր ժամանակակից դիւցազները հետը առած Արգոնաւ ըսուած հոյակապ նաւով մը գնաց, ու յաղթութեամբ Ասկի գեղմը առաւ:

Այս ժամանակէս կը սկսի Աղեմպեան իսողերը, որոնց մէջ առջի խաղացողը Հերակղէս եղաւ:

ԳԵՍ ԻԴ.

Տրոյական պատերազմ:

Տրոյական տէրութեան սկզբնաւորութիւնը ստույգ չգիտցուիր: Արգոնաւորդաց արշաւանքէն զրեթէ յիսուն տարի ետքը՝ Տրոյացւոց Արիամոս թագաւորին Պարիս որդին Յունաստան երթալով Սպարտայի Մենեղաւոս թագաւորին Հեղինէ կինը յափշտակեց ու փախաւ:

Մենեղաւոս զայրացած՝ այն ժամանակը Յունաստանի զանազան կողմերը տիրող բազմաթիւ իշխանաց և թագաւորաց բողոքեց, որոնք միահամուռ ժողովեցան և երդում ըրին որ այն նախատանաց վրէժն առնուն ու Տրոյիան աւերակ դարձնեն :

Այս իշխանաց մէջ երևելի էին Մենեղաւոս, Աեսաոր, Այան, Աքիւլէս, Աղիսևս, որոնք Աղամեմնոնի հրամանատարուն թեամբս դրեթէ, հազար երկու հարիւր նաւով և հարիւր հազար հողով Տրոյացոց վրայ գացին. նաւերնին ցամաք քաշեցին, և աւտոցմով իրինց պատնէշներ շինեցին :

Տրոյացիք ևս Ասիական տէրութիւններէն օգնութիւն ուղեցին, ինչպէս և Հայոց Օլտանայր նահապետն ևս Հայ գորաց խնամբով մը օգնութեան եկեր էր :

Այս պատերազմի տասը տարի տևեց, որովհետև Տրոյիան պարսպապատ ըլլալով Յոյները չին կրնալ ներս մտնել. այլ երբ Տրոյացիք պարիսպներէն դուրս կելէին, երկու կողմի դիւցազները քաջութեամբ իրարու հետ կը պատերազմէին :

Աքիւլէս շատ քաջութիւններ ընելէն ետև՝ Աղամեմնոնի հետ աւրուելով իւր վրանը քաշուեցաւ ի բայց երբ լսեց որ Արիամասի որդին Հեկտոր Տրոյացոց դիւցազնը իւր Պատրոսիդէս բարեկամը սպաննել է, անմիջապէս գէնքերը առաւ ու սկսաւ կատաղա-

բար պատերազմիլ, զարկաւ սպաննեց շեկաորը, ու
 իւր կառքին ետելը կապելով՝ Տրոյից բոլորակքը պը-
 տրացուց: Բայց և Եփեսոսի շեկաորի Պարիս եղ-
 բորը նեակն վիճաւորուեցաւ:

ԴԱՅ Ի Ե

Եյս պատերազմին մէջ շատ Յոյն և Տրոյացի
 իշխաններ ինկան, ինչպէս նաև Հայոց Օւրմայր
 իշխանը Եփեսոսի հետ պատերազմելով մեռաւ:

Յոյները յունահասակով խարէութեան ձեռք զար-
 կին, փայտէ յաղթ ձի մը շինեցին, և մէջը զինուոր-
 ներ լեցրնելով, իբր հաշտութեան նշան՝ Տրոյից դի-
 մացը տարին, և իրենք քանչուեցան դացին: Տրոյացիք
 խաբուելով ներս առին զայն, բայց զիշերը ձիուն փորին
 մէջ պահուողները դուրս ելան, քաղաքը կրակի տուին,
 քաշուող Յունացի բանակն ալ ետ դառնալով, Տրոյա-
 ցոց մեծ մասը և Պիլիսիոս թագաւորի սուրէ, անցուցին,
 և մնացածները գերի տարին (1184):

Եյսպէս Տրոյական տէրութիւնը կործանեցաւ:
 անկայն Յոյները իրենց յաղթութեան պտուղը շիր-
 կրցան վայելել, վասն զի իշխաններն ոմանք ծովուն
 վրայ թափառեցան, ոմանք խեղդուեցան, կորսուեցան
 կամ սպաննուեցան, իսկ այլք հայրենիքէն վորն-
 տուելով՝ հեռաւոր երկիրներ դացին նոր հայրենիք մը
 դանելու:

Տրոյական պատերազմով Յունաց զիւշադանց ժամանակն ևս լմնցաւ. քանզի նոյն պատերազմէն տկարացած երկար ատեն արտաքին երևելի պատերազմ մը չըրին:

Պիտանու վեպան Անկաս Հինգ հազարի շտի փախրատական Տրոյացիներ ժողվելով քան ու մէկ նաւով Իտալիա գնաց, ու Հռոմայեցւոց նախահայրն ևղաւ:

ԴԸՍ ԻԶ.

Յունաց հաղթահանութիւնը, խաղերն ու կրօնքը:

Տրոյական պատերազմէն առաջ Յունաստանի զրեթէ ամեն քաղաքաց մէջ զատ զատ անկախ տէրութիւններ կային, որոնց մեծ մասը այն պատերազմէն ետե վերնաջով, հասարակագլտութիւնների հաստատուեցան:

Այս միջոցիս սկսան Յունաց դաղթականութիւնները, որոնք Իտալիոյ հարաւային կողմը, Արշլայեղագոսի, Մարմարայի և Սև ծովուն ծովեզրեայ բարերը ու առուտուրի յարմար երկիրները տարածուեցան, քաղաքներ շինեցին ու շատ երևելի եղան. նաւարկութիւնը, վաճառականութիւնը և դիտութիւններն ու արուեստները, ասոնց մէջ աւելի ծաղկեցան քան թէ բուն Յունաստանի բնակչացը մէջ:

Մ. յս դադլթականներէն ելան բանաստեղծները և վիկիտոփաները : Հովերոս, որ Քելթողահայր կոչուելու արժանի եղաւ, Օմիւսնից մէջ ծնած է, և իւր գրած Աղիական և Աղիասկան երկու բանաստեղծութիւնները իւր անունը անմահացուցին (906) :

Յոյները ազգային հրատարակական խաղեր ունեցին, որոնք ժողովուրդը կրթելու և պատերազմական պիտի գրգռելու համար կու տային : Արեւելիներն էին Աղիանական, Պիթիան և Իսթմեան խաղերը :

ԴԱՍ ԻՆ .

Աղիանական խաղերը շորս տային անգամ մը կը խաղցուէին Աղիանա քաղաքին մէջ և հինգ օր կը տեւէին, ու Յունաստանէն և բոլոր դադլթականութիւններէն Յոյները կը ժողովուէին, և ամեն ազատ մարդիկ այն խաղերուն մասնակից կըլլային, որոնք էին ըմբշամարտութիւն, կռիւմարտութիւն, և ձիարշաւի ու կռարշաւի մրցումներ : Յաղթողն ձիթենիի, ու դափնիի, պատկ մը կու տային ու յաղթանակաւ զենքը կառքով քաղաքը կը մտնունէին : Խաղերուն ժամանակը ամեն կողմ խաղաղութիւն պէտք էր ըլլալ : Մ. յս խաղերը այնչափ երեւելի եղաւ Յունաց մէջ որ իրենց տարիները անով սկսան համրել (776) :

Յունաց աստուածները շատ էին . Մ. յառաջգտնեցիւրաց աստուածն էր, Պեմեայ՝ երկրի, Մ. յո-

քան՝ արևու, Արանիս՝ լուսնի, Պասիզան՝ ծովու,
 Պլուսան՝ դժոխոց, Աթենաս՝ գիտութեան, Արիս՝
 պատերազմի, և ուրիշ շատ աստուածներ կային,
 որոնց համար մեհեաններ կը շինէին և զոհեր կը մա-
 սուցանէին:

Այդուրիտա Սպարտայի Ալուսիս թագաւորին
 կրտսեր որդին Սպարտացոց օլիմքներ դրաւ, որոնց-
 մով այս ազգը երևելի եղաւ:



ԴԱՅ ԻԸ.

Սկզբն Ռոմուս-ուրո-նեան շրէից և անոր բաժանումը:

Սամուէլ մարդարէն քանն տարի դատաւորութիւն
 քաւ. բայց Իսրայէլացիք այս տեսակ կառավարու-

Թենէն ձանձրացած՝ խնդրեցին Սամուէլէն որ իրենց
Թաղաւոր մը գնէ: Սամուէլ Մատուծոյ հրամանաւ ը
Քենիամիսի ցեղէն Սաւուղը Թաղաւոր օծեց:


Սաւուղ քանի որ Մատուծոյ հաւատարիմ մնաց,
երկնացին Թաղաւորին զօրութեամբը իւր Թշնամեաց
յաղթեց, բայց շատ ջանցաւ՝ իւր հզարտութեամբն
ու անհնազանդութեամբը Մատուծոյ բարկութիւնը իւր
վրայ շարժեց:

Սամուէլ Մատուծոյ հրամանաւ Սաւուղին տեղը
Յուդայի ցեղէն՝ Ղաւիթ հովիւը, որ տասն ու վեց
տարեկան էր, ծածուկ Թաղաւոր օծեց:

ԴԱՍ ԻԹ.

Փղշտացիք վերստին Ղարայէլացւոց վրայ գալով
անոնց Ղողիաթ անունով հսկայ զօրավարը, որ
սպառասարուս զինեալ էր, փոխանակ բանակաւ պա-
տերադմելու՝ Ղարայէլացւոց կողմէն մէկը իրեն դէմ
մենամարտութեան հրաւիրեց: Մէկը համարձակե-
ցաւ անոր դիմացն ելլելու, բայց Ղաւիթ Մատուծոյ
զօրութեանը սուղախնելով՝ անոր առջև ելաւ, ու
իւր պարսաքարովը զարկաւ մեռցուց հսկան և Փղշտա-
ցիները հարածեց:

Սաւուղ Ղաւիթի փառաց վրայ նախանձելով
շատ անդամ ուղեց մեռցրնել զինքը. բայց Մատուծ
աղաատեց Ղաւիթը Սաւուղի որոգայթներէն:



Սառուղի մահուանէն ետև՝ Ղաւիթ թաղաւորու-
թեան գահն ելելով՝ Քանանացւոց ձեռքէն Արոնի
միջնաբերդն առաւ, մեծցուց զայն, Արուսաղէմ
անուանեց, և իւր թաղաւորութեան մայրաքաղաքն
ըրաւ. Փղշապուոց ձեռքէն Տաւանակը ազատեց ու-
հոն բերաւ :

Ետքը Մովսէսացւոց, Ամադեկացւոց, Ասորւոց և
Ազովմայեցւոց յաղթելով իւր տէրութիւնը բնդար-
ձակեց Միջերկրական ծովէն մինչև Ափրատ ու Ա-
րարացւոց ծովածոցը : Հրէից տէրութիւնը ասկէ ա-
ւելի մեծ տարածութիւն ունեցած չէ : Բայց Ղաւիթ
երկու մեղքով զԱստուած բարկացուց, և իւր անունը
վրայ զղջաց ու ապաշխարեց, Աստուծակէ թողու-
թիւն գտաւ :



ԴԸՍ 1.

Դաւիթ Արուսաղէմի աւաճարին հինդ դրառ, ու
քառասուն տարի թագաւորելն վերջը մեռաւ :

Սողոմոն իւր հօրը յաջորդելով, Ասաուած հար-
ցուց իրեն թէ, ի՞նչ կը խնդրէ. Սողոմոն խնայտու-
թիւն խնդրեց, և Ասաուած խնայտու թեան հետ
հարստութիւն ևս տուաւ անոր :

Սողոմոն Փիւնիկեցի երեւելի ճարտարապետներ և
արուեստագէտներ բերել տուաւ, ու եօթը տարուան
մէջ խիստ շքեղութեամբ Ասաուծոյ աւաճարը շինեց,
անկէ զաս Արուսաղէմը ամրացուց ու փառաւոր
պարսանելով զարդարեց (1008):

Աղիպատոյ թագաւորին տղջիկը կին տուաւ, և

ուրիշ բազմաթիւ կանայք իւր պաշտար կը պահէր :
որոնց հրապուրանօքը մոլորեցաւ Սողոմոն, մտոցաւ
դ՛ստուած, որ իրեն այնչափ խմաստութիւն և հա-
րաստութիւն տուեր էր, ու իւր կանանց աստուած
ծայր զոհ մատոյց :

Գ.Ը.Ս Լ.Ը.Վ

Սողոմոն իւր հալատակ ազգաց և շրթից վտայ իակ
այնչափ հարկեր դրած էր, որոնց համար շրթիացք
իւր մահուանէ, ետեւ՝ անոր Ասորովամ որդին թա-
ղաւոր չուղեցին ճանչնալ, մինչև որ հարկերը չթե-
թեցրնէ, և երբ Ասորովամ մերժեց անոնց խնդիրքը,
տասը յեղեր իրմէ ապստամբեցան ու Նիւրեմի յեղին
Յերոբովամը իրենց թաղաւոր զրին. որով թա-
ղաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ. տասը յեղերը
Խարայէլի թաղաւորութիւնը կազմեցին, և Յուդայի
ու Բենիամինի յեղերը՝ Յուդայի թաղաւորու-
թիւնը (980) :

Խարայէլի թաղաւորութիւնը երկու հարիւր վաթ-
սուն ու երկու տարի տեւեց, և տասն ու ինը թաղաւոր
ունեցաւ, բայց զրեթէ ամենքն ալ ամբարշտութեան
հետեւելով, իրենց աէրութիւնը կործանեցաւ, և Խա-
րայէլացիք Մարեստանցւոյ Սողոմոնասար թաղաւո-
րէն զերի տարուեցան (750) :



Յուզայի թագաւորութիւնը շատ փոքր էր, բայց Արուսաղէմը և աստուածապաշտութիւնը պահելով, մինչև վերջը թագաւորութիւնը Քաւիթի տան մէջ մնաց, որով չորս հարիւր տարիի շափ ամեն տեսակ մարտիներու դիմացաւ, թէպէտև երբեմն կռապաշտ թագաւորներ իսկ ունեցաւ :

ԴԵՍ 1.Բ.

Հասնայեցաւ ծագումը :

Իժուար է Հասնայեցւոց ծագումը ծիշտ սահմանել. իրենց նախնական պատմութիւնը առասպելներով լի է, և կը շարունակուի այս մինչև իրենց Խաալիայէն դուրս ելլելն և ուրիշ աղղաց հետ յաշարերութեան մէջ մտնելը :

Հոռոմայեցիք կը հաստատեն թէ Տրոյացի Անտի-
աս զօրավարը Իտալիա անցնելով, իւր որդին Լա-
տիոնի մէջ Ալլա — Լոնկա քաղաքը շինեց, որուն
տասն ու չորրորդ թաղաւորը Ամուլիոս իր Մուսիտոր
եղբօրը իշխանութիւնը յափշտակեց :

Մուսիտորի Ռէա Սիլվիա աղջկիւր Արէս շաստ-
ուածէն երկուորեակ զուակներ ունեցաւ Հոռոմուլոս
և Հոլեմոս անունով, որոնք կողովի մը մէջ Տիբե-
րիս գետը նետուեցան Ամուլիոսի հրամանաւ : Ա-
լիքները կողովը ցամաքը նետեցին, և դայլ մը իւր
կաթովը զանոնք սնոյց մինչև որ հովիւ մը զանոնք
գտաւ ու մեծցուց :

Հոռոմուլոս և Հոլեմոս իրենց սերունդը իմանա-
լով, կտրիճ հովիւներու գունդ մը կազմեցին, Ա-
մուլիոսի վրայ գացին, սպաննեցին զան, ու Մուսի-
տորը վերատին գահը նստեցուցին :

Ետքը պալատին բլուրին վրայ քաղաք մը շինեցին
և Հոռոմուլոս իւր անուամբը Հոռոմ անուանեց զայն :
Եւ որպէս զի քաղաքը շուտով բնակիչներով լեցուի,
հրաման հանեց որ Հոռոմ բնակողը ամեն պատիժէ
ազատ պիտի ըլլայ :

ԳԼՍ 1. Գ.

Ասոր վրայ ամեն կողմէ թափառական ոճրագործ-
ներ, աքսորեալներ և գերիներ վազեցին եկան. բայց

ասոնք կին չունենալով և դրացի քաղաքացի հետ
խնամութիւն ընել չկարենալով, ճշմարտութեամբ դրացի
ազգերը ըմբռնարտութեան խաղի մը հրաւիրեց, և
հանդէսին ժամանակը անոնց աղջիկները յափշտա-
կեցին :

Դրացի Ատինացիք և Սարինացիք ճշմարտացեւոյ
վրայ պատերազմի եկան, բայց յափշտակուած աղ-
ջիկները իրենց էրիկներուն և ծնողաց ու եղբարց մէջ
մտնելով՝ զանոնք իրարու հետ հաշտեցուցին :

Սարինացեաց Տատիոս թագաւորը ճշմարտութեամբ
գահակից եղաւ, և երկուքին մահուանէն ետեւ որոշ-
ուեցաւ որ փոփոխակի մէջ մը ճշմարտացիներէն և
մէջ մը Սարինացիներէն թագաւոր ընտրուի :

Գրեթէ երկու հարիւր յիսուն տարուան մէջ
եօթը թագաւորներ նստան, որոնք արտաքին թշնա-
միները նուաճելով, ճշմարտութեամբ մեծցուցին ու ժողովրդեան
օրէնքներ դրին, բայց դրեթէ Քրիստոսէ հինգ հար-
իւր տարի առաջ թագաւորութիւնը հասարակա-
պետական կառավարութեան փոխեցին :

ԴԱՍ ԼԴ.

Ճայոց Բագաւորութեան սկիզբը :

Արայէն մինչև Պարոյր դրեթէ հազար տարուան
միջոցին մէջ երեսունէն աւելի նահապետներ ունե-
ցան ճայերը, բայց անոնց շատերուն պատմութիւնը
կորսուած է, միայն մէկ քանիին վրայ ծանօթութիւն
ունինք :

Պարոյրի ատենն Ասորեստանի վրայ կը թաղաւորէր Սարդանաբաղ, որ զեղծ մէկն ըլլալով՝ իրեն հպատակ եղող իշխանները իրմէ ապստամբեցան Մարաց Ալարբակէս իշխանին առաջնորդութեամբը :

Ալարբակէս Հայոց Պարսը իշխանը յորդորեց որ իրեն հետ միանայ, խոստանալով անոր որ եթէ Ասորեստանեցւոց յաղթեն, զինքը Հայաստանի թագաւոր ընէ :

Պարոյր Ալարբակէսին օղնութեան երթալով, անոր հետ մէկտեղ Սարդանաբաղի տէրութիւնը կործանեցին. Ալարբակէս բոլոր Ասորեստանի վրայ թագաւոր եղաւ, և Պարոյրին արքայական թագ ու գաւազան զրկեց (746) :

Պարոյրէն մինչև Տիգրան եօթը թագաւոր նստան, որոնց վրայ երևելի յիշատակութիւն մը չունինք :

ԴԱՍ 1. Ե .

Տեգրան Ա. և վերջ հայկազանց իշխանաւիւան :

Հայկազանց հարստութեան ամենէ երևելի թագաւորն եղաւ Մեծն Տիգրան Արուանդայ որդին, որ իւր խելքովն ու քաջութիւններովը իւր տէրութիւնը ընդարձակեց, վաճառականութեան յարաբերութիւններ հաստատեց, զորաց բանակը կարգաւորեց, և ձիաւորաց դնդերը շատցուց, որով շատ յաղթութիւններ ըրաւ : Իւր օրովն Հայաստան նոր պա-

ծառութիւն ու կենդանութիւն մը առաւ, և ար-
ուեստները ծաղկեցան:

Տիզրանայ մեծ դործերէն մէկն է Մարաց Աժ-
դահակ թագաւորին հետ ըրած պատերազմը:

Աժդահակ Տիզրանայ Պարսից Աւրոս թագա-
ւորին հետ ըրած բարեկամութենէն վախնալով
Հայոց թագաւորին Տիզրանուհի քոյրը իրեն կնու-
թեան առեր էր, որպէս զի անոր ձեռքովը կարենայ
Տիզրանը մեռցնել:

Իսկ Տիզրանուհի զաղտուկ իւր և դբօրը խմացուց
Տիզրան մեծ բանակաւ Մարաց թագաւորին վրայ
դնաց, պատերազմը ուշացուց մինչև որ իւր քոյրը Մա-
րաստանէն փախչելու միջոցը գտաւ. այն ատեն Աժ-
դահակայ վրայ յարձակեցաւ, ու իւր նիզակովը այն-
պիսի ուժով մը անոր զրահապատ կուրծքին զար-
կաւ որ անոր թոքին մէկ մասն ալ դուրս հանեց:
Ասոր վրայ Մարք փախչելու ստիպուեցան (565):

ԴԱՍ 1, 2.

Հայոց թագաւորը այս յաղթութեամբ դո՛հ չեղաւ.
Մարաստան մտաւ, Աժդահակայ առջև կիներ, ըն-
տանիքը, և տասը հազարի չափ Մար գերի բերաւ
ու Հայաստան բնակեցուց, որոնցմէ սերեցան Ալի-
շապաղունք կամ Մուրացան ըսուած ցեղը: Իսկ
Տիզրանուհին իւր շնորհ Տիզրանակերտ քաղաքին

մէջ բնակեցուց, որմէ սերեցաւ Ռատան կամ Ռատանիկ ըսուած ցեղը:

Այս պատերազմէն ետե՛ Տիգրան Պարսից Աւրոս թագաւորին օգնութեան դնաց Տարելացւոց թագաւորին դէմ, ինչպէս որ հարիւր տարի առաջ Արեմիա մարգարէն դուշակեր էր որ Այրարատեան թագաւորը Տարելոնի կործանիչներէն մէկը պիտի ըլլայ:

Տիգրանի յաջորդեց իւր որդին Ահազն, որուն համար կը պատմեն թէ Հերակղէսի նման շատ քաջութիւն ըրած է, ու վրան երգեր շինած են:

Ահազնէն ետե որդւոց որդի եօթ թագաւորք յաջորդեցին, որոց վերջինն է Ահէ, որ Մակեդոնացւոց Մեծն Աղեքսանդր թագաւորին հետ պատերազմելով մեռաւ:

Իւր մահուամբը վերջացաւ նաև Հայկազանց հարստութիւնը հազար ութը հարիւր տարի դիմանալէն ետե (328):

Ահէէն ետե հարիւր ութսուն տարի ևս Մակեդոնացւոց, ետքը Ասորւոց կողմանէ զրկուած կուսակաղներ, և վերջը Հայ իշխաններ Հայաստանը կառավարեցին մինչև Արշակունեաց իշխանութեան սկիզբը (150):

ԴԱՍ Է.Ե.

Մարտ, Սեպտեմբեր — Հունիս :

Մարտ Յաբեթի Մաղա որդիէն սերեալ են և Վասակից Տովուէն արեւմտեան հարաւային կողմը կը բնակէին :

Երկար տարիներ Ասորեստանեայց իշխանութեան տակն էին, բայց իրենց Ազորակէս իշխանին ժամանակը ապստամբելով, Հայոց և Տակտրիացւոց օգնութեամբը Ասորեստանեայց տէրութիւնը կործանեցին, իրենց դրացի ազգերը և Պարսիկներն իսկ նուաճեցին, բայց իրենց Աժգահակ թագաւորը թուլամորթ մէկն ըլլալով, Պարսից իշխանութեան տակն անցան :

Մարտ ճարտար ազգ մ'էին, և կերպաններ կը գործէին ու կը ներկէին :

Հիմարայա լեռներէն մինչև հիւսիսային Սառուցեալ ծովը տարածուած բարբարոս և կոպիտ ազգերը ընդհանուր անուամբ Ակիւթացի կը կոչուէին, որոնք վջաններու տակ կը բնակէին, հովուութիւն կ'ընէին, և սովորաբար յափշտակութեամբ կ'ապրէին :

Հիւսիսային կողմի Ակիւթացի գլխաւոր ժողովուրդները կամ ազգերն էին Սամոյետացիք, Մոնղոլք, Թունդուղք, Ռզրիացիք, իսկ հարաւային կողմը՝ արդի Թաթարստանի մէջ էին Մասագետաբո, Սագաղիք և Հոնք :

ԴԱՍ ԼԸ.

Հոնք Քրիստոսէ, հաղար երկու հարիւր երեսուն տարի առաջ մեծ տէրութիւն մը կանգնեցին, բայց ժողովուրդը միշտ վրանարնակ էր և աւարառութեամբ կ'ապրէր, որով միշտ զրացի ազգերը կը նեղէր:

Հոնք Քրիստոսէ գրեթէ չորս դար առաջ սկսան Պարսից, Պարթևաց և Հայոց վրայ յարձակիլ, և իրենց ասպատակութիւնները մինչև Աւրոպա տարածեցին, և հոն մեծ աշխարհակալութիւններ ըրին:

Քրիստոսէ ետքը հինգերորդ դարուն իրենց Ատաիզաս թագաւորին ատենը հռոմայի տէրութիւնը և բոլոր Աւրոպա դողացուցին իրենց անդթութիւններովն ու յամշտակութիւններովը. սակայն այս թագաւորին մահուանէն ետև՝ իւր որդւոց մէջ զըժտութիւն մանելով՝ հինաց տէրութիւնը գրեթէ վերջացաւ:

ԴԱՍ ԼԹ.

Պարսիկք:

Պարսիկք Սեմայ Աղամ որդւոյն ցեղէն յառաջ եկած են և Մարաստանի հարաւային կողմը կը բռնակէին, ու զանազան ցեղերու բաժնուած փոքր տէրութիւն մը կը կազմէին մինչև Աւրոսի թագաւորութեան ատեն:

Աիւրոս Պարսից Վամբիւս թագաւորին և Աժգահակայ Մանդանէ աղջկան որդին էր, որ մեծ յաղթութիւններ ըրաւ. Մարաց, Փոքր Ասիոց, Յունաց, Ասորւոց, Արաբացւոց տիրեց, և Հայոց Տիգրան թագաւորին օգնութեամբ Ռաբելոնի տէրութիւնը կործանեց, Հրէաները Ռաբելոնի գերութենէն ազատեց, և իւր տէրութիւնը խիստ ընդարձակեց (503):

Աիւրոսի յաջորդներուն մէջ երեւելի և զան Ռարեհ և Քսերքսէս, որոնք թէպէտև շատ ազգեր նուաճեցին, և մինչև Աւրոպա, Ափրիկէ և Հնդկաստան արշաւեցին, սակայն այս հեռաւոր արշաւանքները և յաճախ պատերազմաց մէջ իրենց զօրաց և ստակի սպառումը Պարսից տէրութեան զօրութիւնը տկարացուցին, և կործանումը փութացուցին:

Սասն զև Քսերքսէս հինգ հազար նաւերով և երկուք ու կէս միլիոն զօրքով (բաց ՚ի զերիներէն, ներքինիներէն, կանանց բազմութենէն, որ զօրքէն աւելի էին կ'ըսեն), Յունաց վրայ արշաւեց:

Թւրակիա, Մակեդոնիա, Թեսսաղիա, և Աւրոպիոց քանի մը ուրիշ երկիրներ այս աշխարհակոյտ բանակէն սարսափած՝ անմիջապէս հնազանդեցան, և երեք հարիւր հազար զօրք օգնութիւն տուին անոր բայց Աթենացիք և Սպարտացիք որոշեցին որ զիրենք պաշտպանեն:

ԴԱՍ Խ .

Ահռնիտաս Սպարտացւոց թագաւորը երեք հարիւր Սպարտացիներով և հինգ հազարի չափ օգնական զօրքով Թերմոպիլէ կիրճը պաշտպանելու գնաց, ուրկից միայն կրնային Պարսիկք Յունաստան մտնել :

Քսերքսէսի ահագին բանակը օրերով չկրցաւ Թերմոպիլէն պաշտպանող սակաւթիւ Յոյները վռնտել. շարունակ կը յարձակէր անոնց վրայ, ու միշտ կորուստով ևտ կը դառնար. սակայն Յոյն մը մատնութեամբ Պարսից դաղտնի ճամբայ մը ցուցուց, ուրկից թշնամիները ներս մտան :

Ահռնիտաս երկու կողմանէ ինքզինքը պաշարուած տեսնելով՝ քովի զօրքը արձակեց որ երթան հայրենիքը պաշտպանեն. միայն երեք հարիւր Սպարտացիները իւր քովը մնացին, ու թշնամեաց վրայ յարձակելով, քսան հազար հոգի ջարդելէն ևտև՝ իրենք ալ դիւցազնարար հոն մեռան : Քսերքսէս անարդել Յունաստան մտաւ, ու Աթէնք, Ատտիկէ, և ուրիշ քաղաքներ այրեց :

Սակայն Պարսիկք այս արշաւանքէն օգուտ չտեսան. վասն զի իրենց նաւատորմիցը Թեմիստոկիդէսի առաջնորդութեամբը Աթենացւոց երեք հարիւր նաւերէն Սաղամինայի առջև խորտակեցաւ, և անհամար զօրքը Պղատէայի քով յիսուն հազար Յոյներէն

չարաչար յաղթուելով, Յունաստանէն վճռատուեցաւ (469):

Այս պարտութենէն ետե Պարսիկք երևելի աշխարհակալութիւն մը չըրին, մինչև որ Աղեքսանդր Մակեդոնացիէն յաղթուելով անոր հպատակեցան (330):

ԴԵՍ ԽԱ.

Մակեդոնացիք:

Մակեդոնացիք Յունաստանի հիւսիսային կողմը կը բնակէին, ու Քրիստոսէ ինը դար առաջ փոքր տէրութիւն մը հաստատած էին:

Պարսից Ալեքսանդր արշաւած ասեն՝ անոնց հպատակեցան, բայց երբ անոնք Ալեքսանդրէն վճռատուեցան, ու Յոյները երկարատե պատերազմներէն արկարացան, Մակեդոնացիք իրենց տէրութիւնը կամաց կամաց ընդարձակեցին:

Մակեդոնիոյ թագաւորաց մէջ երևելի էր Փիլիպպոս, որ Յունաց ամեն ղիտութիւններն ու արուեստները սորվելով, իւր երկիրը Յունական կրթութեամբ սկսաւ ծաղկեցընել, և քանի մը յաղթութիւններով իւր տէրութիւնը տարածելով, կամաց կամաց Յունաց վրայ ևս ղիտաւորութիւն ունեցաւ, բայց Պարսից վրայ արշաւելու վրայ էր երբ դաւաճանութեամբ սպաննուեցաւ (336):

Փիլիպոսէն երևելի եղաւ իւր որդին Աղեքսանդրոսն որ իւր ըրած աշխարհակալութեանցը համար Սեծ բառեցաւ : Իւր հօրը յաջորդելով, Մակեդոնացւոցմէ ապառամքող Յոյները նուաճեց, ու Ասիա անցաւ որ Պարսից քայքայած տէրութեան վերջին հարուածը տայ :

Աղեքսանդր յաղթութիւններով յառաջանալով գրեթէ բոլոր Փոքր Ասիոյ, Հայոց, Պարսից, Մարաց, Ալիւթացւոց, Ադիպտացւոց և մինչև Հինդուստան տիրեց :

Աշխարհիս երևելի աշխարհակալներէն մէկն է, Աղեքսանդր, որ խիստ կարճ ժամանակուան մէջ այնչափ երկիրներու տիրեց. շատ անդեր քաղաքներ շինեց, դաղթականներ հաստատեց, և վաճառականութիւնը և դիտութիւնները ամեն կողմ տարածելու մեծ ջանք ըրաւ, և կ'ուզէր արևելքն ու արևմուտքը միացընելով մէկ տէրութիւն մը կազմել, սակայն վաղահաս մահը իւր նպատակին արգելք եղաւ, քանզի երեսուն ու երեք տարեկան մեռաւ գրեթէ տասն ու երեք տարի թագաւորելէն ետև :

Ի Ա Ս Խ Բ .

Յունաց գրականութիւնը :

Յունաց գրականութիւնը Քրիստոսէ գրեթէ հինգ դար առաջ շատ ծաղկեցաւ :

Յունաստանի մէջ ճարտասանութիւնը արուեստ մը եղած էր, որուն միջոցաւ ճարտասանք իշխանութեան հասան և իրենց երկիրը կառավարեցին. այս ճարտասաններուն մէջ երևի եղաւ Պիսիատրատ, Թեմիստոկղէս, Ախմոն, Պէրիկղէս, Աղկիալիատէս, և Տեմոսթենէս:

Տեմոսթենէս դարբինի մը զաւակ էր, որ հօրը մահուանէ ետև ուսման հետևելով՝ այնպիսի ճարտասան մը եղաւ, որ բնաւ մէկը չկրցաւ զինքը գերազանցել:

Թէև լեզուն պակասաւոր էր և ձայնը տկար, բայց աշխատութեամբ այս բնական պակասութեանց յաղթեց. բերանը խիճ դրած՝ լեռներուն վրայ և ծովեզերքը իւր շինած ճառերը բարձրաձայն կը կարդար, որով լեզուն շիտկեց:

Տեմոսթենէս ուրիշ պակասութիւն մը ևս ունէր՝ որ միշտ ուսերը վեր կը վերցընէր. նիզակ մը կախեց սուսին վրայ, որով ուսը ցաւցընելով՝ այս պակասութեան ևս յաղթեց:

Իւր շինած ճառերը հայելիի առջև խօսելով՝ իւր ձևերն ու շարժմունքը կը շիտկէր: Աւ որպէս զի անընդհատ իւր աշխատասիրութեանց պարապի, իւր մաղերուն կէսը կ'ածիլէր ու ամիսներով ստորերկրեայ սենեակ մը քաշուած՝ առանց մարդու երևելու կը գրէր:

Անուանի փիլիսոփաներն եղան Թաղէս, Սողոն,

Պիթագորաս, Սոկրատ, Պլատոն, Անախիթենէս,
Օկենոն և Արիստոտէլ:

ԻԱՍ ԽԳ.

Պարթևութիւն:

Պարթևները Արրահամու Քետուրա կնոջ զուգահեռներէն սերած կը կարծուին, որոնց վրայօք մինչև Քրիստոսէ երեք դար առաջ բան մը չպատմուիր:

Մեծին Աղենքսանդրի ժամանակ Մակեդոնացւոց հպատակեցան, բայց անոր մահուանէն ետև՝ երբ անոր զօրավարներէն մէկը Սելևկոս՝ Ասորւոց թագաւորութիւնը հաստատելով, Սելևկացիք կը զօրանային, Արշակ անուանով Պարթևաց իշխանը անոնցմէ ապստամբեցաւ, և Պարսից, Մարաց ու Պարթևաց վրայ թագաւոր եղաւ (246):

Պարթևաց թագաւորները Հռովմայեցւոց և Սելևկեանց վրայ մեծ յաղթութիւններ ըրին, ու մեծ համբաւ ստացան, բայց իրենց թագաւորութիւնը դրեթէ չորս հարիւր եօթանասուն և հինգ տարի տևելէն ետև վերջացաւ, ու տեղը Պարսից երկրորդ ինքնակալութիւնը այսինքն Սասանեան ցեղին թագաւորութիւնը սկսաւ (226 Ք. Ն.):

Պարթևները նետ նետելու մէջ շատ վարժ էին, որով իրենց թշնամեաց ահարկու եղան. իրենց պա-

տերազմելու վարպետութիւնն էր յարձակելով ա-
 վախշելով թշնամին յոգնեցրնել և կամաց կամաց
 ջարդել :

ԴԷՍ ԽԴ .

Ահիգէն Նազարատու-թեան Արշակո-նէաց :

Պարթևաց Արշակ թագաւորին թոր Արշակ Ռ-
 իւր տէրութիւնը աւելի ընդարձակելով Հայաստանի
 վրայ ևս եկաւ , Հայոց Արտաւազդ իշխանը հարա-
 ծեց , ու իւր Աղաարշակ եղբայրը Հայոց թագա-
 ւոր դրաւ :

Աղաարշակ Հայոց վրայ մեծ սէր կապեց , և
 ազդին յառաջագիմութեան , երկրին բարեկարգու-
 թեան և պայծառութեան հոգ տարաւ . քաղաքա-
 կանութիւնը յառաջացուց , զինուորութիւնը ծաղկե-
 ցուց , ամեն բանի պաշտօնատէրներ սահմանեց , և նա-
 խարարութեանց ամեն մէկուն մէկ մէկ պաշտօն տուաւ :
 Խոտխոտունեաց իշխանը թագաւորին անձնապահ
 դօրաց զլուխ ըրաւ . Ղնթունեաց իշխանը՝ հանդեր-
 ձապետ անուանեց , Արծրունեաց իշխանը՝ դրօշակա-
 կիր , Ահհնունեաց նախարարը՝ քրմապետ , և այլն :

Քաղրատունեաց ցեղէն Քաղարթատ իշխանին՝ թա-
 գաւորին զլուխը թագ դնելու իշխանութիւնը տուաւ ,
 քանզի այն իշխանը ամենէ առաջ իւր կողմն անցած
 իրեն օգնութիւն ըրած էր , և անոր թագազիր և
 Ասպետ պատուանուներ տուաւ :

Արևու հողի որոշեց որ եթէ թագաւորը անիրաւ
դատատան մը ընէ կամ յանցաւորը չպատժէ՝ իրեն
խնայրնեն : Օրէնք դրաւ որ թագաւորին միայն անդ-
րանիկ թագաժառանգ որդին անոր քովը մնայ, ու
միւսները հաշտենից դաւառը դրկուին որ հոն բնա-
կին : Այս օրէնքը պահեցին Արշակունեաց թագա-
ւորները :

Աղարշակայ երեւելի դործերէն մէկն է ազգային
պատմութիւնը դանելու ջանքը . հայաստանի մէջ
հայոց վրայ գրուած դոհացուցիչ աեղեկութիւններ
չգտնելով, Սար Աբաս անունով Ասորի մը Նինուէ
դրկեց, որ թագաւորական դրատան մէջ փնտուելով
հայկազանց ցեղին պատմութիւնը գտաւ ու Աղ-
արշակայ բերաւ, զոր ուրախութեամբ ընդունելով
հայոց թագաւորը՝ հրամայեց որ իւր դանձատան
մէջ պահուի, ու անոր մէկ մասը արձաններու վրայ
փորել իսկ տուաւ :

Քրիստոսէ առաջ հայոց կրօնը բազմաատուածութեանն էր, և դիւաւոր աստուածներն էին Արամազդ,
Անահիտ և Աստղիկ : Արեւելի մեհեանները Ամա-
ւիր, Անի, Թիլ, և Աշտիշատ քաղաքաց մէջ կը
դանուէին :

ԴԱՍ ԽԵ .

ԱՐԶԱԿ Ա, ԱՐԿԱՅԻ Ա, ՏԵՂԵԱՆ Բ .

Աղարշակայ յաջորդեց իւր որդին Արշակ, որ իւր հօրը պէս բարեգործութեանց ետեւ եղաւ . բայց Արշակայ Արտաշէս որդին աշխարհակալութեամբ անուանի եղաւ, մինչև արտաքին պատմագիրները մեծ գովութեամբ կը խօսին անոր վրայ :

Արտաշէս Պարթևաց նախագահութիւնը յափըշտակեց . վասն զի մինչև իւր ժամանակը Հայոց թագաւորը Պարթևաց թագաւորին երկրորդը կը սեպուէր . իւր անունովը ստակ կոխեց, գրեթէ բոլոր Փոքր Ասիոյ, Պարսկաստանի և Յունաստանի մեծ մասին տիրեց, բայց իւր զօրաց մէջ խռովութիւն կ'ընկալուէրր սպաննեցին (90) :

Արտաշէսի Տիգրան որդին Հայաստանը իւր մեծութեան ու պայծառութեան ծայրն հասուց . Փոքր Ասիան Միհրդատայ յանձնեց, որ իւր քեռայրն էր, ու անոր հետ Հռոմայեցւոց վրայ շատ անգամ մեծ յաղթութիւններ ըրաւ, բայց վերջէն յաղթուելով, Հայաստանէն դուրս առած բոլոր երկիրները անոնց թողուց (95) :

Տիգրանայ յաջորդեցին հետզհետէ Արտաւազդ, Արշամ և Արգար : Արշամի թագաւորութեան ատեն Հայերը Հռոմայեցւոց հարկատու եղան :



ԴԱՍ ԽԼ.

Թաափառորո-նի-ն Մակաբայեցոց :

Հրէայք Քաբելոնի գերութենէն դառնալէն ետև երբեմն Ասորոց և երբեմն Ազխատացոց տակն ինկան :

Պատումէս Ազխատացոց թագաւորը Աղեքսանդրիոց մէջ Հրէից գաղթականութիւն մը հաստատեց և եօթանասուն ու երկու զիտուններու ձեռք Հին կտակարանը Յունարէնի թարգմանել տուաւ. այս է Աթնանասնից Թաափառորո-նի-ն ըսուածը (284) :

Հրէայք Ասորոցմէ և Ազխատացոցմէ մեծ ներութիւններ և հալածանքներ կրեցին : Այս հալածանաց դէմ դնելու համար Մատաթիա քահանան

իւր հինգ որդիները և աստուածապաշտ ^Հրէաները ժողովելով թշնամիները հալածեց (168):

Իրեն յաջորդեցին հետզհետէ Յուդա—Մակաբէ, Յովնաթան, Էմառն, ^Հիւրկանոս, Արիստարուղոս և Անաիզոնոս. բայց անկէ ետքը Մակաբայեցւոց զօրութիւնն ևս սկարացաւ, և Սաղուկեցի ու Փարիսեցի նոր աղանդաւորները կառավարութիւնը ձեռք բերելու համար իրարու հետ սկսան կռուիլ. վերջապէս ^Հռոմայեցւոց օգնութեամբ ^Հերովդէս Նդոմայեցին ^Հրէաստանի թագաւոր եղաւ երեսուն և ութը տարի Քրիստոսէ առաջ:

ԻԱՍ ԽԵ .

^Հռոմայեցւոց գրականութիւնը:

Ինչպէս որ ըսինք՝ գիտութիւնները և արուեստները Երևելքէն և Նդիպատոսէն Յունաստան տարածուելով հոն ուրիշ երկիրներէն աւելի ծաղկեցան:

Աղեքսանդրի ժամանակ Յունաց գիտութիւններն ու արուեստները Ասիոյ մէջ տարածուեցան:

Պտղոմէանց ժամանակ Նդիպատոս երկրորդ անգամ գիտութեամբք և արուեստիւք ծաղկեցաւ և Յունաստանը դերազանցեց: Աղեքսանդրիոյ զբքատան մէջ եօթը հարիւր հազար հատոր գիրք ժողված էին:

^Հռոմայեցիք երբ յաղթութեամբ իրենց տէրութիւնը կ'ընդարձակէին և Յունաստանի ու Ասիոյ

Քի մասին տիրեցին, արևելքի գիտութիւնները սկսան իրենց երկրին մէջ իսկ տարածել, ու քիչ ժամանակի մէջ խիստ ծաղկեցուցին :

Հռոմայեցւոյ խիստ երևելի բանաստեղծներն էին Ովրատիոս, Ալիդիլիոս, Ովիտիոս, Փետրոս : Եւսուանի պատմադիրները՝ Յուլիոս Աեսար, Տիտոս—Ալիւս, Առնեւիլիոս—Նեպոտ և Յուստինոս : Արևելի ճարտասանն էր Աիկերոն :

ԴԱՍ ԽԸ.

Յովհաննէս Մէրօպէլ :

Քրիստոս դեռ չճնաճ՝ Եստուած Գաբրիէլ հրեշտակը Հրէից Օւքարիա քահանային զրկեց իմացընելու համար որ իւր Նղիսարէթ կինը որդի մը պիտի ծնի, ու անունը Յովհաննէս դնէ, որ Քրիստոսի գալուստը քարոզէ ու Եստուծոյ սուրբ ժողովուրդ մը պատրաստէ :

Օւքարիա չհաւատաց այս աւետիսին, վասն զի իւր կինը ամուլ էր, և երկուքնին ևս ծերացած էին, անոր համար համբ եղաւ և այնպէս մնաց մինչև որ Յովհաննէս ծնաւ : Եղգականները կ'ուզէին տղուն իւր հօրը անունը դնել, բայց մայրը կը պնդէր որ Յովհաննէս դրուի : Աստի հօրը հարցուցին. Օւքարիա տախտակ մը առաւ ու վրան գրեց թէ տը-



դուն անունը Յովհաննէս է . ասոր վրայ լեզուն իսկ
բացուեցաւ :

Յովհաննէս մեծնալով դեռ քարոզու թեան չսխաճ՝
անապատին մէջ խիստ կեանք մը կ'անցընէր . իւր
զգեստը ուղտի մազէ էր և կերակուրը մարախ և
վայրենի մեղր : Յորդանանու կողմերը դալով, ժողո-
վըրդեան կը քարոզէր, և ապաշխարողները Յորդա-
նան դեփին ջուրովը կը մկրտէր :



ԴԱՍ ԽԹ.

Ծանուց Յիսուսի :

Աղիսարեթի յղութենէ վեց ամիս ետքը՝ Գար-
րիէլ հրեշտակը Նաղարէթ քաղաքին մէջ Դաւթի
ցեղէն Սարիամ անուն կուսի մը երևցաւ, որ Յով-
սեփայ նշանուած էր, ու աւետեց անոր որ Հոգւով
սրբով յղանալով որդի մը պիտի ծնի, ու անունը
Յիսուս պիտի դնէ, որ աշխարհս մեղքերէն պիտի
փրկէ :

Հերովդէսի թագաւորութեան վերջընթեր տարի-
ները՝ Հռոմայեցւոց Օգոստոս կայսրը հրաման հաներ
էր որ բոլոր Հրէաստանի մարդիկը իրենց բուն քա-
ղաքին մէջ գրի առնուին :

Յովսէփ Մարիամը հետը առաւ՝ նոյն աղգաս-
համարին մէջ գրուելու համար: Արթալու ատեն՝
Բեթղեհէմ գիւղը հասնելով, մտուրի մը մէջ ծնաւ
աշխարհիս սկիզբէն ՚ի վեր խոստացուած Մարդկու-
թեան Փրկիչ **ՅԻՍՈՒՍ ԻՐԻՍՏՈՍ** Եստու-
ծոյ որդին՝ աշխարհիս ստեղծմանէ չորս հազար տա-
րի ետքը:


Արեք մոզեր արևելքէն աստղ մը տեսնելով՝ ի-
մացան որ Հրէից նոր թագաւոր մը ծներ է. ուստի
աստղին առաջնորդութեամբը ելան Արուսաղէմ եկան,
և ոսկի, կնդրուկ ու զմուռս բնծայ բնելով, Քրիս-
տոսի երկրպագութիւն բրին:

Եյս լսելով Հերովդէս վախցաւ որ չըլլայ թէ
Քրիստոս իւր թագաւորութիւնը ձեռքէն առնու-
ուստի հրաման հանեց որ Բեթղեհէմի երկու տա-
րեկանէ վար տղաքը սպաննեն, բայց Յովսէփ հրեշ-
տակին ազդեցութեամբը Յիսուսը մօրը հետ Ազիպ-
տոս վախցուց, ու Հերովդէսի մահուանէ ետե՛
՛Նազարէթ քաղաքը բերաւ բնակելու, անոր համար
Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ:

ԴԱՍ Ծ.

Յիսուսի Տիրոս-Լիւնը, Ժարոզո-Լիւնը և
Կրաչագործո-Լիւնները:


Յիսուս մինչև երեսուն տարեկան ըլլալը իւր աստու-



ուածութիւնը չյայտնեց, այլ իմաստութեամբ և շնորհօք կ'աճէր. երբ երեսուն տարեկան եղաւ, Յովհաննէս Մկրտիչին եկաւ, ու Յորդանան գետին մէջ անորմէ մկրտուեցաւ. նոյն միջոցին երկինքը բացուեցաւ, և Հոգին սուրբ աղաւնակերպ անոր վրայ իջնելով, երկինքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. «Սա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» :

Յիսուս Հոգւով սրբով լցուած Յորդանանէն անապատը քաշուեցաւ, ուր քառասուն օր ծոմ պահեց, և սատանայէն փորձուելով՝ յաղթեց անոր :

Այնուհետեւ սկսաւ իւր աստուածութեան փառքը յայտնել աշխարհի, արքայութիւնը քարոզել և փրկութեան ճամբան սորվեցրնել :



Յիսուս շատ հրաշքներ գործեց, խուլերուն ա-
կանջները, համբերուն լեզուն, կուրաց աչքը բացաւ,
հիւանդները, անդամալոյծները, խեղանդամները և
բորոտները առողջացուց, մեռելները կենդանացուց,
ծովուն վրայ ոտքով քայլեց, երկու անգամ քիչ մը
հացը և ձուկը օրհնելով՝ այնչափ շատցուց որ ա-
ռաջին անգամ հինգ հազար, ու երկրորդ անգամ
չորս հազար հոգի կշտացուց, և ուրիշ անթիւ հը-
րաշքներ գործեց :

ԴԱՍ ԾԱ.

Յիսուս երեք տարի Էրէաստանի շատ կողմերը
պտըտեցաւ և քարոզեց. իւր վարդապետութիւնները
սող և հրաշքերը տեսնող ժողովուրդէն շատ մարդիկ

իրեն հաւատացին, բայց քահանայապետները, գալիւններն ու ժողովրդոց զլուխները նախանձութեամբ կ'ատէին զՅիսուս, և առիթ մը կը փնտռէին որ զինքը մեռցնեն :

Յիսուս բազմաթիւ աշակերտներ ունեցաւ, որոնք միշտ իւր ետեւէն կ'երթային. անոնց մէջէն տասն ու երկու առաքեալներ որոշեց, որոնց անուաններն էին Միմոն Պետրոս, Լ'նդրէաս՝ անոր եղբայրը, Յակոբոս, Յովհաննէս՝ անոր եղբայրը, Փիլեպոս, Բարդուղիմէոս, Թովմաս, Մաթթէոս, Յակոբոս Ըլփեան, Միմոն Սանանացի, Թադէոս և Յուդա Իսկարիոսփառացի :

Յիսուս իւր աշակերտներէն երկու երկու հոգի զըկեց որ երթան քաղաքներն ու զիւղերը պարտին, քարոզութիւն ընեն, և անոնց իշխանութիւն տուաւ որ հիւանդները բժշկեն և զիւահարները սատանային ձեռքէն ազատեն :

ԴԵՍ ԾԲ .

Սաղարթոս-Նեան խորհոս-ըրը և Տուպոնոս-Նեան

Յո-դացի :


Քահանայապետները և գալիւնները սասաիկ կ'ատուցեցան երբ Յիսուս իւր քարոզութեանց երրորդ տարւոյն զատկէն վեց օր առաջ կը հեծած Արուսաղէմ գարձաւ. քանզի ժողովուրդը անոր գալը լսելով՝ ար-



մաւենիի և ձիթենիի ճիւղեր առած բազմութեամբ ղենքը ղիմաւորելու եկան, և զգեւանին զետինը տարածելով՝ «Վստաննա, օրհնեալ որ զասդ յանուն Տեառն, Թաղաւոր Իսրայէլ» կը սրուային:

Չատկէն երկու օր առաջ քահանայապետները և դպիրները ծերերուն հետ խորհուրդ ըրին Ապիափա քահանայապետին տունը որ զՅիսուս մեռցրնան. նոյն միջոցին Յուդա Իսկարիովտացին զնաց ըսաւ անոնց թէ ինչ կու տան իրեն եթէ զՅիսուս իրենց ձեռքը մատնէ: Ընտեք երեսուն արծաթ խոստացան, և Յուդա յանձն առաւ:

Նոյն պիշերը Յիսուս զատկական դառնը ուտելու համար՝ վերնատան մը մէջ իւր երկոտասան աշակերտաց հետ սեղան նստած էր: Յիսուս իւր խո-



Նարհութիւնը դորժով ցուցնելու համար սեղանէն ելաւ, առաքելոց ոտքը լուաց, ու վերստին սեղանը նստելով ուտելու ատեն՝ սեղանին վրայի հացէն առաւ, աչքը երկինք վերցնելով դոհացաւ, կտրեց, և աշակերտաց բաժնելով ըսաւ. «Առէք կերէք» այս է Սարսին իմ»: Վմանապէս բաժակը առաւ, դոհացաւ և աշակերտաց տալով ըսաւ. «Արբէք ՚ի սմանէ ամենեքին, այս է Արիւն իմ»: Աւ պատուիրեց անոնց որ իւր մահուան յիշատակին համար այն խորհուրդը անոնք ևս կատարեն:

ԳԼՍ ԾԳ.

Այս ըսելէն ետև՝ Յուդան դարձի բերելու համար իմացուց անոնց որ իրենցմէ մէկը զենքը պիտի մատնէ: Առաքելալնները իրար անցան և ամեն մէկը հարցուց թէ «Արդեօք ես եմ»: Յուդա իսկ հայ-

ցուց. “Արդեօք ես եմ, վարդապետ: — Այո՛, դուն ես, պատասխանեց Յիսուս, ու դնա՛ ըրէ ինչ որ պիտի ընես”: Յուդա չզղջաց, ու ելաւ դնաց:

Յիսուս սեղանէն ելելով, ըստ սովորութեան ‘Չիթենեաց լեռը դնաց աղօթելու: Մէկ մ’ալ ջահերով, սուրերով և բիրերով բազմութեան մը առջև ինկած Յուդա՝ Յիսուսի մօտեցաւ, և զան համբուրելով՝ իւր մասնութեան նշանը սուաւ բազմութեան,

Առաքեալները ուզեցին թշնամեաց հետ կռուիլ, և Պետրոս քահանայապետին ծառային աջ ահանջը սուրով կտրեց. բայց Յիսուս բժշկեց զայն, ու թողուց որ զինքը կապեն. այն ատեն առաքեալները փախան:

Ի Ա Ս Ծ Դ.

Յետ-տի չարչարանքները:

Հրէայք Յիսուսը նախ Աննա քահանայապետին և ետքը Վայիափա քահանայապետին տարին, սուա վկաներով զըստարտութիւններ ըրին և մահապարտութեան վճիռը տուին. բայց Յիսուս անոնց ամեն թշնամանացը և չարչարանացը համբերեց: Բոլոր զիշերը ծաղրելով, երեսին թգնելով և ծեծելով տանջեցին զՅիսուս:

Առտու Յիսուս Պիղատոսին տարին, որ Հռոմայեցւոց կողմանէ դատաւոր դրուած էր Հրէաստանի: Պիղատոս Յիսուսին զանազան հարցումներ ընելով՝ անոր անմեղութիւնը ճանչցաւ, և երբ անոր

Գալիկացի ըլլալը լսեց, Հերովդէսին դրկեց զան, որ այն տեղւոյն չորրորդապետն էր, և զատկի տօնին պատճառաւ Արուսաղէմ եկած էր:


Հերովդէս Յիսուսի հրաշագործութիւնները լսած ըլլալով՝ կուգէր տեսնել զան յուսալով որ իւր առջևը հրաշք մը ընէ. երբ Յիսուս անոր հարցմանցը պատասխան չտուաւ, Հերովդէս նեղանալով վերադառնալով Պիղատոսին դրկեց զան՝ իրր նախատինք սպիտակ կտաւ մը ձգելով անոր վրայ:

ՔԱՅ ԾԵ.

Պիղատոս Յիսուսը ազատելու համար շատ ջանքեր ըրաւ, բայց բազմութիւնը քահանայապետներէն և դպիրներէն գրգռուած մէկ բերան կը պոռային. « Ի խաչ հան զդա, ՚ի խաչ հան զդա »:

Պիղատոս տեսնելով որ ճար չկայ, իւր ձեռները լուաց և Յիսուսը անոնց ձեռքը յանձնեց:

Օրհնութիւնները Յիսուսին գլուխը փշեայ պսակ մը դրին, ու խաչը անոր ուսը տուած ձաղկելով Արուսաղէմի փողոցներէն կանցընելին, բայց Յիսուս ծանր խաչին սակ ճնշուած ըլլալով վախցան որ չըլլայ թէ ճամբան մեռնի, ուստի բռնի Սման Աւերենացին բռնեցին, խաչը անոր կրնակը տուին, ու Գողգոթա հանեցին, ուր մահապարտները կը մեռցընելին: Հոն Յիսուսը խաչին վրայ բեկուեցին, և իւր աջ ու ձախողմը երկու շարագործներ ևս խաչեցին:



Օ ինուորները Յիսուսի զգեստները իրենց մէջ
բաժնեցին, բայց պատմութեանը առանց կարի ըլլա-
լուն չուզեցին պատռել, այլ վիճակ ձգեցին իրենց մէջ:

ԻԱՍ ԾԶ.

Յիսուսի ծանր և յարս-Յի-նը:

Յիսուս ծառաւելով ջուր ուզեց, և լեղկով
խառնած քացախ առին անոր: Յիսուս խմելէն
ետե՛ «Մենայն ինչ կատարեալ է» ըսաւ, ու ետքը
բարձր ձայնով՝ «Հայր, հողիս ձեռքդ կը յանձնեմ»,
պոռաց ու հողին աւանդեց:

Աոյն միջոցին երկինք խաւարեցաւ, երկիրը շար-
ժեցաւ, քարերը ձաթեցան, գերեզմանները բաց-
ուեցան, մեռելներ կենդանացան, ու տաճարին վա-
րագոյրը վերէն ՚ի վար պատռեցաւ:

Յիսուսի մարմինը չորս ժամի չափ խաչին վրայ
 մնալէն ետե՛ Յովսէփ Երիմաթացին Պիղատոսէն
 հրաման ընդունելով, Անկողիմոսին հետ Յիսուսին
 մարմինը խաչէն վաթ առաւ, ու նորափոք դերեզմա-
 նի մը մէջ թաղեց:

Քահանայապետները զգուշութեան համար պա-
 հապան զինուորներ դրին, ու դերեզմանին քարք
 կնքեցին որ չբլայ թէ մարմինը դողնան:



Յիսուսի մեռնելէն երեք օր ետքը, շաբաթ զիշեք
 գէպ ՚ի լոյս կիրակի, երկինքէն հրեշտակ մը իջաւ 7
 դերեզմանին քարը դլորեց և Յիսուս աստուածային
 փառօր դերեզմանէն դուրս ելաւ:

ԴԱՍ ԾԷ.

Յիսուս յարութիւն առնելէն ետե՛ Մարիամ
 Մագդաղենացւոյն, իւղաբեր կանանց, և շատ ան-

դամ իւր աշակերտաց, և անգամ մը Վալիկեայի մէջ հինգ հարիւրէն աւելի հաւատացելոց երեցաւ : Իւր յարութեան քառասներորդ օրը աշակերտները Չիթենեաց լեռը ժողովեց, օրհնեց զանոնք, և պատուիրելէն ետե որ երթան ամեն աշխարհ քարոզեն, և հաւատացեալները մկրտեն յանուն Հօր և Արդուոյ և Հոգւոյն սրբոյ, անոնց աչաց առջև երկինք համբարձաւ և աներևոյթ եղաւ :

Համբարձումէն տասն օր ետքը երբ առաքեալները վերնաստան մէջ աղօթք կ'ընէին, յանկարծ օստաիկ հովի նման ձայնով մը հրեղէն լեզուներ երեցան և ամեն մէկուն դիտուն վրայ կեցան : Ամենքնին ալ Հոգւով սրբով լեցուեցան և սկսան զանազան լեզուներ խօսիլ :

Այնուհետեւ առաքեալները բոլոր աշխարհ ստրաւեցան և Ալեասարանը քարոզեցին. շատ հրաշքներ դործեցին և իրենց քարոզութեամբը շատերը դարձուցին : Թե՛ առաքեալները և թե՛ հաւատացեալները միշտ հալածանք կը կրէին հրէաներէն և հիթանոսներէն :

Քրիստոնեաները հալածողներէն մէկն կը Սաւուղ (Պողոս) որ քաղաքէ քաղաք ստրաւելով հաւատացեալները կը բռնէր և կապելով Արուսաղէմ կը բերէր. բայց Աստուծոյ հրաշքովը դարձի եկաւ ու շատ երկիրներ ճամբորդութիւններ ընելով Յիսուսի Ալեասարանը քարոզեց :



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ



ԳՐԱ ԱՌԱՋԻՆ

Մ. Կ. Ժ



Սուրբ մասկեր և խիստ զօրաւոր կենդանի մ'է, դէմքը վեհ և ահազնաստեսիլ, ձայնը ահաւոր և ընթացքը վեհալ: Պոչը երկար է և այնպէս զօրաւոր որ կարող է մէկ հարուածով մարդս դետինը զարնել: Արուն դիտուն և սարանոցին վրայ բաշ ունի, և մարմնոյն երկայնութիւնն է ութը ոտք, և բարձրութիւնը՝ երեք ոտք:

Ասուր անօթեցած ժամանակը մինչև իրմէ մեծ կենդանեաց վրայ կը յարձակի. իրեն հետ կռուելու համարձակող կենդանիներն են ուղեղջիւրը, փիղը, վագրը, և ձիադետին:

Հին ժամանակը այս կենդանին խիստ շատ կը գտնուէր, բայց հիմա նուազած է: Տաք՝ երկիրներու մէջ սնող ասուրները աւելի զօրաւոր կ'ըլլան քան թէ ցուրտ և բարեխառն կլիմաներու տակ:

Առ իւժի մը ձաւը պղտիկութենէն կրնան ընտելացնել, ասկայն պէտք չէ զայն երկար ժամանակ անօթի ձղել, և կամ զինքը զրդուել, այն աստե՛ն՝ իւր բնական կատարութիւնը կ'աւնտ, բայց քիչ անդամ իր բարեբարին վրայ կը յարձակի:

Էդը արուին չափ մեծ և զօրաւոր չէ, բայց երբ ձողեր տնենայ՝ ամենեւին վտանգէ շվախնար, այլ ցմահ կը պատե-
րազմի իւր կորիւնները պաշտպանելու համար: Իւր որջին հետքը չյայտնելու համար՝ պոչովը թաթերուն նշանները կ'աւրէ:

Առ իւժին մենչիւնը սրտաման ձայնին կը նմանի, և օրը ան-
վորաբար հինգ կամ վեց անդամ կը մենչէ: Բարկութեան ժամանակ պոչը իւր կողերուն և գեանին կը զարնէ, երեսօ մորթը, յօնքը և բաշը կը շարժէ, և ակռաները կը ցուցնէ: Վազելու աստե՛ն միշտ կը ցատկէ, և միշտ գրեթէ իւր նպատակէն կ'անցնի: Գիշեր ժամանակ կատուի պէս կը տեսնէ օ շատ քիչ կը քնանայ, և ամենաթեթև ձայնէ կ'արթննայ:


ԳՆՍ Բ.

ՓԻՂ

Փիղը ծանօթ չորրորտանեայ ամենէն յողթանդամն է և զը-
խաւորարար Ափրիկէի և Ասիոյ անտառներուն մէջ շատ կը
գանուի. մինչև տասն ու չորս ոտք երկայնութեամբ և նոյնչափ
բարձրութեամբ փիղ կայ: Այնչափ հաստամորթ է որ հրա-
ցանի գնտակներէ դժուարաւ կը մնասի:

Գլուխը խիստ մեծ է, ականջները լայն և կախուած, և
աչքը փոքր: Քիթը, որ կապիճ կամ կնճիթ կ'ըսուի, դրն-
դերներէ և ջիղերէ կազմուած է և իւր զօրաւոր գէնքն է.
ուղածին պէս կ'երկնցրնէ, կը կարճեցրնէ, և ամեն կողմ կը
դարձրնէ զայն:

Այս կապիճին ծայրը վրայի կողմը քիչ մը երկար է, ու-



բով մատի պէս ամենանորբ առարկաներն անդամ կը բռնէ , իւր ուտելիքը բերանը կը տանի , խոտեր և ծաղիկներ կը բըցընէ , և կրնայ առանց վնասելու իւր կապուած շուանին հանգոյցը արձակել , բանիկը դարձնելով կղպուած դուռ մը բանալ կամ դոյնել :

Այս կապիճին երկու կողմերը երկու երկար ակրաներ կամ ժանիք ունի , որոնք նաև իւր զէնքերն են , ասոնք են վզոսկր ըսուածներն , որոնք խիտտ յարդի են :

Փիղերը շատ խելացի , երախտազէտ բայց վրիժառու կենդանիներ են , և բազմութեամբ մէկ տեղ անտառներու մէջ կ'ապրին , զօրաւորագոյնները խումբին առջևէն ու ետևէն կ'երթան , իսկ տկարները մէջերնին կ'առնուն :


Սակայն մարդիկ շատ հնարքներով զանոնք ողջ կը բռնեն . փիղը երբ գերի կ'իյնայ՝ իւր տիրոջը կ'ընտանեանայ , անոր խօսքերը դիւրաւ հասկընալ կը սորվի , անոր հրամաններուն սիրով կը հնազանդի , և շատ ծառայութիւններ կը մատուցանէ անոր :

Փիղը իւր գէնքը կամ ոյծը միայն զինքը և իւր նմանները պաշտպանելու համար կը գործածէ : Եթէ զինքը բարկացնեն , կապիճովը իւր թշնամին կը բռնէ , վեր կը վերցընէ , և քարի մը սէս գետինը կը զարնէ . ու վրան կոխկրտանելով զան կ'ըսպաննէ : Սակայն շատ քիչ անգամ իւր բարերարին ու տիրոջը կը վնասէ :

Փիղը երկու հարիւր տարի կրնայ ապրիլ ու մինչև քսան և հինգ կենդինար բեր կը վերցընէ : Էզը երկու տարին անգամ մը կը ծնի :

ԴԱՍ Գ .

Վազր




Վազրը կատուի տեսակ և առիւծի մեծութեամբ մտակեր կենդանի մ'է , որ իւր կատաղութեամբը ստկալի եղած է կենդանեաց մէջ , և կը դանուի արևելեան Հնդկաստանի ու Ափրիկէի հարաւային կողմերը . պոչը երկար է , գէմքը ահարկու և մորթին վրայ խոտորնակ սև շերտեր դժուած են :

Այս դազանը այնչափ արեան ծարաւի է որ կուշտ եղած ատենն իսկ՝ դտած կենդանիները կը գիշատէ : Մինչև ձիերու , դոմէշներու , և մարդոց վրայ կը յարձակի , և երբ թշնամիներէ անհանդիստ ըլլալէ կը վախնայ , իւր որսը՝ որչափ և խոշոր ըլլայ՝ քաշկրտակելով անտառներուն մէջ կը տանի . իսկ եթէ անօթութենէ խիստ նեղուի՝ մինչև իւր ձագերը կ'ուտէ :

Այս գազանը առօրաբար փղին օգնութեամբը գիւրաւ կ'ըսպանեն . փղին կունակին վրայ սրատապարան մը կը տեղաւորեն , քանի մը որտորդներ անոր մէջ կը մանեն , ու շուներու առաջնորդութեամբ անոր վրայ կ'երթան . երբ վազըրը զանոնք կը տեսնէ , կ'ըսկսի մռնչել և ակռաները կը ցուցնէ . բայց փիղը աներկիւղ անոր վրայ կ'երթայ , որտորդները հըրացանները կը սրարպեն , և եթէ չկրնան զայն սպաննել , այն ատեն փիղը կնճիթով վազըրը բռնելով գետինը կը զարնէ , և վրան կոխկրբանելով կ'ըսպաննէ զայն :

ԳԱՍ Գ .

123



Ինչը վազրի նման ահաւոր և ուժեղ կենդանի մ'է եօթն ոտք մեծութեամբ , և կը բնակի Ասիոյ ու Ափրիկէի հարաւային կողմերը անտառներու մէջ , ուր եղէգներու և թուփերու ետին սրահուած իւր որսին կ'ըսպասէ , և յանկարծ վրան յարձակելով կը գիշատէ զայն :

Այս կենդանին խիստ թեթեւաշարժ և արագընթաց է , այնպէս որ ձի մը չկրնար ետևէն հասնիլ . ջրի մէջ յաջողակութեամբ կը լողայ , և կատուի պէս գիւրութեամբ ծառերուն վրայ կ'երլէ , որով խիստ դժուար է իւր ձեռքէն փախչիլը : Սակայն մարդիկ շատ կերպով ողջ կը բռնեն կամ կ'ըսպաննեն զայն :

Մորթը մութ գեղին է սև խաւոյսաներով , և շատ յարգի է և ծանրադին :

ԴԱՍ Ե .

ԱՐՋ



Արջը չորս ոտք երկայնու թիւն ունի , և քարայրներու կամ անտառներու մեջ առանձին կը բնակի . ցորեկները իւր օրջին մէջ կը հանդչի , ու գիշերները կելէ իւր կերակուրը փնտռելու . իւր սովորական ուտելիքն է պտուղներ և արմատներ , բայց անթութեան ներդայած ստեճը՝ ոչխարներու , այծերու , ձիերու , և մինչև մարդոց վրայ կը յարձակի ,

Չմեռը քարայրի կամ ծառի խոռոչի մը մէջ մամուռներով խշտի մը կը շինէ , և քանի մը շաբաթ առանց անկէ դուրս ելլելու և առանց բան մը ուտելու հոն կը կենայ մինչև խիտտ անթութեանալը . քանզի աշնան վերջերը այս կենդանին չափազանց գիւրցած կ'ըլլայ , և իւր սրարարտութեամբը անթութեան կը դիմանայ :

Արջը եթէ սղտիկութեան բռնուի՝ դիւրաւ կ'ընտանենայ և կարաւել կը սորվի . իւր ետեի ոտից վրայ կը քայլէ , առջևի ոտքերովը կրնայ քար նետել , ապտակ զարնել , և այլն :

Արջին մորթը դիմացիուն մուշտակ մը կ'ըլլայ . միւր կ'ուտուի բայց խիտտ ճարպալի է :

Բեկուային սառուցեալ երկիրներուն մէջ ուրիշ տեսակ արջ մը կայ որ իւր նեղ գլխովն ու բարակ և սպիտակ մազերովը առջի տեսակէն կը զանազանի , և սպիտակ արջ կ'ըսուի : Սովորաբար ծովուն եզերքը և սառույցներուն վրայ կը բնակի , և ծակեր բանալով՝ ձուկեր և փոկեր կ'որսայ :

Գարնան վերջերը երբ սառերը կ'ըսկան կտոր կտոր փրթիլ և ծովուն վրայ կղզեակներու նման ծփալ, ապիտակ արջը անոնց մէկուն վրայ կը նստի, և ուրիշ տեղ կը նաւարկէ ուտելիք գտնելու համար :

Այս արջը մարդու վրայ ևս կը յարձակի ու թաղուած մեռեալները հողին մէջէն դուրս կը հանէ և կը գիշատէ :



ԳԼՍ Զ.


Բնչո-գա

Խիստ բարձր և խիստ մեծ կենդանիներէն մէկն է ընձուղար, որ գետնէն մինչև գլխուն եղջիւրները տասն և չորս կանգունի չափ բարձրութիւն ունի. և որովհետև առջևի ոտքերը աւելի բարձր, և պարանոցը դէպ 'ի վեր երկնցած է՝ չկրնար ծռիլ և ծառոց տերեւներով և պտուղներով կը կերակրի. Բայ եթէ ստիպուի խոտ ուտել կամ ջուր խմել, ծնկան վրայ կուգա կամ ջրի մէջ կը մտնէ :

Մորթը ոսկեգոյն է սև խասոցաներով. գիւլուն վրայ երկու փոքր եղջիւրներ ունի դէպ 'ի ետին հս. ած, և լեզուն խիստ սև է :

Այս կենդանին սակաւաթիւ է, գլխաւորաբար Աֆրիկէի մէջ կը գտնուի, և միշտ ուրիշ ընձուղաներու ընկերութեամբ կ'ապրի : Առիւծներուն և վաղրերուն յարձակմանէն միայն վազելով կ'ազատի :

Օ՛հրը կամ Ա՛գրը




Հարաւային Ափրիկէի այս դեղեցիկ կենդանին ձիու և ջուրիի նմանութիւն ունի, բայց արագընթացութեամբը, անընտելութեամբը և մորթին դեղեցկութեամբը անոնցմէ կը զանազանի :

Մորթին դոյնն է սպիտակաշէկ կողմնաձիգ սև գծերով, որոնք անոր մարմինը մինչև գլուխը, ականջները, սրունքը և սոջը գծած են :

Այս շքեղ կենդանին այժի սէս բարձր լեռներու և ժայռերու վրայ գիւրութեամբ կ'ելէ, և եղջերուի նման արագընթաց է, ուստի շատ դժուար է զայն ողջ բռնելը : Գրեթէ միշտ վայրենի և աննուսձելի մտայած է և զայն ընտելացընելը անկարելի եղեր է :

ԻՆՍ Ը .

ՆՂԷՐՈՒ :



Այս կենդանին լեռնայծի կը նմանի , բայց իւր արագընթացութեամբը , թեթեաշարժութեամբը , ուժովը և եղջիւրներուն ձևովը անորմէ կը զանազանի : Չորս սոք բարձրութիւն և եօթըն սոք երկայնութիւն ունի , դիտուն եղջիւրներր ծառոց ստերուն նման ամեն տարի կ'ընձիւղին :

Հասարակօրէն Նւրոսայի և Նսիոյ անտառներուն մէջ կը դանտի , և ծառերու տերեւներով , բոյսերու կսկաններով և խոտերով կը կերակրի :

Նղերուն թէև խիստ արագընթաց է , աչքը սրասեւ , հաստութիւնը և լսողութիւնը սուր , որով խիստ հեռուէն որսորդներուն ձայնը առնելուն սէս կը փախչի , և ջուրի մէջ յաջողութեամբ կը լողայ , սակայն ճարդիկ վարժուած որսորդ շուներով և ձիերով կ'որսան դայն :

Հիւսիսային շուրտ գաւառներու եղջերուն անլի փոքր է : շուտով կ'ընտանենայ և Սիպերիոյ, Լաբլանտիոյ և Արոկնդանտիոյ բնակչաց մեծ ծառայութիւններ կը մատուցանէ : քանզի բախիր քաշելու և բեռ կրելու կը գործածեն զայն, անոր կաթն ու միսը կ'ուտեն, մորթը զգեստ կը շինեն, ու եղջիւրները քանի մը գեղերու մէջ խակ կը գործածեն :

ԴԱՍ Թ.

Ա-դ-դ :



Ափրիկէի և Ասիոյ սաք երկիրներու այս սոգեղ բայց համբերատար բեռնակիր կենդանին իւր ծառայութեամբը մարդոց խիստ օգտակար եղած է :

Քիչ կերակրով գոհ կ'ըլլայ, յողնութեան, սաքի և ծարախ կը գիմանայ, որով Ափրիկէի և Արաբիոյ այն ընդարձակ անբեր, անջուր և սաք անաստաններուն մէջէն բեռնաւորեալ անցներու ատեն՝ երբեմն մինչև տասն օր առանց ջուր խմելու, և օրը միայն մէկ սնդամ քիչ մը գարի կամ խմորի դունածը ուտելով երկայնատեամբ կը համբերէ :

Աւղար իւր տիրոջը հչու է, և անոր ձայնին հնազանդելով՝
բերք վերցընելու կամ իջեցընելու համար կը նստի. բայց երբ
իւր կարողութենէ աւելի զինքը բեռնաւորեն, ոտք չեղեր՝ մինչև
չև որ բերք քիչ մը չթեթեցընեն:

Այս կենդանին հանդարտաբարոյ է, սակայն երբ մարդոյմէ
չարիք մը տեսնէ՝ ոխ կը սրահէ մինչև ցմահ:

Աւղտապանները երկար ճանապարհորդութեանց մէջ եւր
ուղտերու թուլանալը տեսնեն, իրենց զեղջկական սրինդը կը
հնչեցընեն կամ երդ կ'երդեն, որոնց ձայնէն ուղտերը ոյժ կ'առ-
նուն, իրենց քայլերը անոնց եղանակին յարմարցընելով յառաջ
կ'երթան, և անապատին ծայրը հասնելէն օր առաջ խոտին
և ջուրին հասը կ'առնուն, և շուտ հասնելու համար՝ իրենց
քայլերը կը փութացընեն:

Աւղտին հայրենիքը Արարիա է, ուրկից Հնդկաստան, Տաճ-
կաստան և Ափրիկէ տարածուած է: Արարացիք այս կենդա-
նին Անապատի նաւ կը կռչեն, քանզի առանց անոր օգնու-
թեանը տնկարելի էր այն ընդարձակ անապատները անցնիլ:

Բակտրիական ուղտը երկու կուղ ունի, և Արարացի ուղտէն
քիչ մը աւելի մեծ է, երկար անօթութենէն կուզերը կը հիւ-
ծին և աներևոյթ կ'ըլլան, բայց երբ լաւ կերակրուի, վերրա-
տին կը մեծնան:

ԴԱՍ Ժ.

Օյեր • — Պօա օյ:

Նրեք հարիւր տեսակէն աւելի օձեր գանուած են, սրոնց-
մէ ոմանք թունաւոր են և ոմանք անթոյն: Ասոնք ոտք չ'ունին,
այլ իրենց մարմնոյն վրայ կը սողան, ու մէկ հարէն մինչև
քսոսասուն ոտք երկայնութիւն ունին: Աւղտնին բարակ, եր-
կար և երկուքի բաժնուած է. թէև ախրայ ունին, բայց իրենց
կերակուրը ծամել չկրնալով՝ աճբողջ կը կլեն:



Թունաւոր օձերը վերի ծնօանուն վրայ երկար և շարժական ակռաներ ունին, որոնց մէջը սրարայ է. այս ակռաներուն քովն մկունքներով պատած փշախկ մը ունին, որուն մէջ թոյնը կը ժողլուի. երբ օձերը խածնելու ըլլան այն փշախկը ձգմուկով թոյնը դուրս կ'ելլէ, և ակռաներուն մէջէն սնայնելով խածուածքին մէջ կ'երթայ:

Օձերը երկակենցաղ են, այսինքն թէ ջուրի մէջ և թէ ցամաքի վրայ կ'ապրին:

Օձերուն մէջ խիտա երկարը, դօրաւորը և խելացին կրնայ համարուիլ Պօա օձը, որ Ամերիկայի և Հնդկաստանի մէջ կը գտնուի, և քառասուն ոտք երկայնութիւն ունի. թէև սնթոյն է, սակայն մեծ ու փոքր կենդանեաց վրայ նետի պէս կը յարձակի, ու անոնց փաթթուելով՝ սնայնէս ուժով կը սեղ-

մէ, որ անոնց ոսկրները կը ջախջախէ և կը փշրէ, և մարմինը խմորի սկէս կը ճզմէ, ետքը դիտուն կողմէն սկսելով կը կլլէ:

Սակայն երբ ստաննած կենդանին իխտո մեծ է, և չկրնար ամբողջ փոքր սանկղ դայն, միայն կէսը կլլելով թուլացեալ և անշարժ կը մնայ մինչև որ կուլ տուած մասը մարսէ, և այն ստե՛ն մնացեալ մասն ևս կը կլլէ:

Պօան հինգ կամ վեց օրուան մէջ հաղիւ կը մարսէ և այս չափ միջոցին իւր ոյժը կը կորսնցընէ, և թմբբութեան մը մէջ ընկղմած կը մեայ: Անոր մարսելու ժամանակին մէջ միայն կրուհան դայն բռնել:


Երբ Պօան անօթութենէ կը նեղուի, իւր որսը ամենևին չուկրնար իւր ստջևէն փախչել. վասն զի լախտ աքաղութեամբ կը ստրայ, շուրին մէջ ալ կրծու թեան ժամանակ իսկ յաջողութեամբ կը լողայ, և մինչև բարձրաբերձ ծառերուն պաղածները փաթթութելով կ'ելլէ:

Շատ անգամ մէկ ծառէն միւսին և կամ իւր որսին վրայ յարձակելու համար պոչը ծառին ուսին փաթթելով կը կախուի, ու օրօրաւելով յանկարծ նետի սկէս կը նետուի:

ԻՆՍ ԺԱ.

Կէօ կամ Պալէնա:

Այս ձուկը աշխարհիս ամենէն մեծ և հսկայ կենդանին է, որ միայն ասիականներուն մէջ կը գտնուի և մինչև հարիւր յիսուն կանգուն երկայնութիւն ունի: Պլուխը մարմնոյն գրեթէ մէկ քստ որդն է, գմբէթին մէջ տեղը երկու ծակեր ունի, ուր կկայ մեծ զօրութեամբ դուրս կը ցատկեցընէ բերանէն ներս տուած ջուրը, և իւր շնչատութեան հարկաւ որ եղած օդը կ'անուռ:



Բերանը ա՛յնչափ ընդարձակ է որ միայն երեսուն և վեց կան-
դուն երկայնութիւն ունեցող փոքր կէտի մը բերանին մէջ եր-
կու մարդ կրցած են կանգնիլ առանց գձկուելու :

Իւր բոլոր ոյժը պոչին վրայ է , որուն մէկ հարուածը կրնայ
հաւակ մը օդը հանել , պոչը միանգամայն իւր ղեկն է , որով
աջ կամ ձախ կողմը կը շարժի :

Աէտը օդ առնելու համար շատ անգամ ջուրին մակերևոյթը
կ'ելլէ . իւր կերակուրն է մանր ձուկեր , որոնք ա՛յնչափ անհա-
մար բաղմութեամբ կը դանուին իւր բնակած ծովերուն մէջ ,
որ կէտը ջուր առնելու համար բերանը բացած ատենը՝ հա-
զարաւոր ձուկեր ներս կը քաշէ :

Սովորաբար մէկ ձագ կը ծնի , որ ութ կամ ասար կան-
դուն երկայնութիւն կ'ունենայ :

Այս ահագին ձուկը որսալու համար մարդիկ շատ կերպեր
հնարած են , որոնց մէկը այս է . մեծ հաւով կէտը դանուած
ծովերը կերթան , հաւակներով անոր բոլորակը կը շրջապա-


տե՛ն , և երբ կէտը ջուրին մակերևոյթը կ'երլէ օդ առնելու՝ առնոր ամենէ՛ն մօտ դանուող նաւակին որսորդները խիստ երկար չուանի ծայրը կտարուած սրածայր նետ մը անոր փորին կամ կոնակին վրայ կը նետեն :

Աէտը վիրաւորեալ ջուրին տակը կ'իջնէ և աներևոյթ կ'ըլլայ , բայց ա՛յնպիսի արագութեամբ որ շատ անգամ նաւակը կ'ընկղմէ , և կամ չուանին քսուած տեղը շփմամբ կրակ կ'առնու՝ եթէ անոր վրայ շարունակ ջուր չթափեն :

Աէտը երբ օդ և ոյժ առնելու համար դարձեալ վեր կ'երլէ , միւս նաւակներէն նոյնպէս կը խոցեն զայն՝ մինչև որ կ'սպաննեն , այն ատեն ցամաքը կը քաշեն , կը յօշեն , և անոր ճարպը կը զտեն :

Մեծ կէտ մը հարիւր քսան հազար երկնուկի կը կշռէ , իսկ անորմէ քաղուած ճարպը՝ վաթսուն հազար երկնուկի : Այս ձուկը դարերով կ'ասըի , բայց սակաւաթիւ է , այնպէս կը կարծուի որ հետզհետէ մարդոցմէ բռնուելով՝ բոլորովին պիտի տաւախի :





ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՆԳԵՐԻ :

Տիեզերք կը կոչուի այն անհուն տարածութիւնը , որու մէջ կը թաւալին և կը շրջին աշխարհս , արեգակը , լուսինը , աստղերը և բոլոր երկնային մարմինները : Այս տիեզերքէն մէկ ամենափոքր մասն է մեր բնակած աշխարհը :

Մեր դիտին վրայ տարածուած կապոյտ մեծ կամարը Երկնէ կամ Հասարակութիւնն երկնից կը կոչուի :

Պայծառ դեշեր մը երկնից երեսը անթիւ լուսաւոր կէտեր կը տեսնուին , այս լուսաւոր մարմինները ասոր կ'ըսուին :

Աստղերէն շատերը մեր աշխարհէն մեծ են , բայց իրենց անբառ հեռաւորութեանը համար մեզ լուսաւոր կէտեր կ'երևին :

Աստղերը երկու կարգ կը բաժնուին՝ Հասարակութիւն և Շարժումն աստղի կամ Մուրրակի :

Հասարակութիւն ասոր կ'ըսուին այն երկնային մարմինները , որոնք ինքնալոյս են , և միշտ իրարմէ նոյն հեռաւորութեամբ բաժնուած են : Ասոնք կ'երևի թէ մէկ մէկ արև են , և ուրիշ աշխարհներ կը լուսաւորեն :

Մուրրակ կ'ըսուին այն երկնային մարմինները , որոնք իրենցմէ

լայս շունին , այլ իբրնայ լոյսը արեւէն անհելով մեզ լուսաւոր
մարմիններ կ'երևին : Մեր երկրին պէս՝ ասոնք ևս հաստատուն
տեղ մը չեն կենար , այլ արեւուն բոլորակը դառնալով դիր-
քերնին միշտ փոփոխելու վրայ են :

ԳԱՍ Բ .

ԱՅԼ 3

Արեւը հաստատուն աստղ մ'է , որ երկնային մարմիններուն
ամենամեծը կը կարծուի :

Արեւուն բոլորակը կը դառնան երկիրս , լուսինը և ուրիշ
շատ մոլորակներ , որոնք արեւէն կը լուսաւորին :

Արեւը իւր ճառագայթներովն աշխարհս կը լուսաւորէ , կը
տաքոյրնէ , երկրիս արդասաւորութիւն կաւ տայ և բոլոր արա-
րածոյ կենսք :

Եթէ արեւուն լոյսն ու տաքութիւնը չըլլար , ոչ շնչաւոր մը
կրնար ապրիլ և ոչ բոյս մը աճիլ :

Արեւը երկրէս մէկ միլիոն չորս հարիւր անգամ մեծ է , և
իննսուն ու հինգ միլիան միոն հեռու է :

Եթէ երկրէս թնդանօթի ուռմբ մը արձակէին , և քսան
ու հինգ տարի շարունակ նոյն արագութեամբ երթար , հալիւ
պիտի կրնար արեւուն հասնիլ :

Արեւուն ամենէ մօտ դանուող մոլորակն է Փայլածուն , որ
ութսուն և ութ օրուան մէջ արեւուն բոլորակը կը դառնայ :

Արեւէն խիտ հեռու եղող մոլորակն է Սերանոս , որ ութ-
սուն և երեք տարուան մէջ իւր շրջանը կը կատարէ արեւուն
բոլորակը :

ԳԱՍ Գ .

Ի ստուգիչ :

Լուսինն ևս մեր երկիրը կը լուսաւորէ , բայց իւր լոյսը արեւէն առնելուն՝ արեւու լուսոյն պէս փայլուն և զօրաւոր չէ , և ամենեւին տարութիւն չունի :

Լուսինը երկրիս բոլորակը կը դառնայ քսան և եօթը օրուան , եօթը ժամուան ու քառասուն և երեք վայրկեանի մէջ , և երկրիս հետ միատեղ կը շարժի արեւուն բոլորակը :

Երբ լուսինը երկրիս բոլորակը դառնալու ատեն՝ արեւուն և մեր երկրին մէջ տեղը հասնի , ու չիժողու որ արեւուն լոյսը մեզը դայ , այն ատեն արեւը խաւարեցաւ կ'ըսենք , ժողովանակ ըսելու երկիրս խաւարեցաւ , քանզի մեր երկիրն է որ արեւուն լոյսէն կը զրկուի : Այս դէպքը կ'ըսուի Խաւարածն օգնուա :

Իսկ եթէ երկիրս արեւուն և լուսնին ազդադիժ մէջ տեղը դայ և չիժողու որ արեւուն ճառագայթները զլուսինը լուսաւորեն , այն ատեն երկրիս շուքը լուսնի վրայ կը դարնէ , աւ Լուսնի Խաւարածն կը պատճառի :

Երկրիս շուքը լուսնին վրայ զարկած ատեն , պէտք է գիտել՝ որ այն շուքը կ'ըսը ձև մը ունի , որմէ յայտնի կ'երևի որ երկիրս դնդաձև է :

ԳԱՍ Դ .

Գիտաւոր աստիճանի և Մտղոսբանի :

Գիտաւոր աստղ կ'ըսուին այն մոլորակները , որոնք լուսաւոր պոչ մը ունին ետեւին ձգած , ատենք իրենց լոյսը արեւէն կ'առնուն , ու անոր բոլորակը կը դառնան :

Գիտաւորները երբ իրենց շրջանին մէջ երկրիս մօտենան՝ մեզ կ'երևին . ուսմիկ մարդիկ կարծեն թէ այս երևոյթը ձախորդութեան մը նշան է :

Արթանեակ կը կոչուին այն երկնային մարմինները , որոնք մոլորակներէն փոքր ըլլալով , ձգողութեամբ անոնց բոլորափքը կը դառնան :

Լուսինը մեր երկրին արբանեակն է :

Երևակ մոլորակը ութ արբանեակ կամ լուսին ունի , Աւրանոս՝ վեց արբանեակ , Լուսնթաղ՝ չորս արբանեակ , Պոսիդոն՝ երկու արբանեակ :

Շատ հաւանական է որ երկնային մարմիններուն մէջ բնակիչ ըլլայ . քանզի ի՞նչպէս կարելի է որ անքններին Աստուած այնչափ անհամար և մեր երկրէն միլիոնաւոր անդամ մեծ դռնափորը անապատ թողու :

Անոնցմէ շատը մեր երկրին պէս արևուն բոլորափքը դառնալով , հարկաւ անոնք ևս տարւոյ չորս եղանակները , ցորեկ , դիշեր և ամեն օդերևոյթները ունենալու են :

ԴԱՍ Ե .

ՕՂ :

Օղը թափանցիկ մարմին մ'է , որ բոլոր երկրիս երեսը պատած է , և զոր շնչելով կենդանութիւն կ'առնունք .

Օղը ցուրտէն կը խտանայ , իսկ տաքէն կ'անդայտանայ . այս սրատճառաւ շարժում կը ըլլայ , ուսկից կը ծաղի հողմը . վասն զի օղը խտացած ատեն՝ քովի օղը անոր սարսապ թողուցած տեղը կը վաղէ , և կամ անդայտացած ատենը կ'ուռի և քովի օղը կը հսէ :

Թէ որ ձմեռ ատեն տաք սենեակի մը դուռը բանանք , և վառուած ճրագ մը դրան վերի կողմը դնենք , և ուրիշ մը անոր վարի կողմը , կը տեսնենք որ վերի ճրագին բոցը դէպ ՚ի դուրս ,

և վարի ճրագինը դէպ 'ի ներս կը ծռուի. քանզի սենեկին մէջ ջի օդը տարէն անդայտանալով՝ վերի կողմէն դուրս կելնէ. իսկ դրսի ցուրտ օդը սրարայ տեղ դանելով ներս կը մանէ :

Օդին բարձրութիւնը քառասուն և հինգ մղոն է. խիստ բարձրը լերանց վրայ դժուարաւ շունչ կ'առնուի, քանզի այն տեղը օդը խիստ բարակցած է :

Օդը ծանրութեամբ ամեն մարմնոյ վրայ կը ճնշէ. եթէ երկու մետաղեայ կիսագնտեր քովէ քով բերելով մէջի օդը սրարակնք, դրսի օդը ա՛յն աստիճան ծանրութեամբ կը ճնշէ անոնց վրայ, որ երեսուն ձի հաղիւ կրնան զանոնք իրարմէ բաժնել :

Պէտք է որ մեր շնչած օդը մաքուր ըլլայ, ապականեալ օդը մարդու առողջութեան փնասակար է : Մեր պատկած խուցին կամ նստած սենեկին պատահանները ամեն օր բանալու է որ ներսի օդը նորոգուի :

Պէտք է զգուշանալ ու չպառկիլ նաև ծաղկանց, նոր սրատերու, և ներկի հոտ եղած սենեկի մէջ :

ԴԱՍ Զ.

Երկր :

Երկրիս ձևը կլոր է, և ասոր մեծ ապացոյց կրնայ ըլլալ լուսնի խաւարման ժամանակ՝ երկրիս լուսնի վրայ ձգած շուքը : Եթէ երկիրս ուրիշ ձև մը ունենար, այսինքն՝ եթէ տափարակ կամ եռանկիւնի ըլլար, իւր շուքն ևս նոյնը պիտի ըլլար :

Երկրիս կլոր ձև ունենալուն ուրիշ ապացոյց մ'է խիստ հեռուէն տեսնուած աւարկային երևոյթը. քանզի ընդարձակ ծովու մէջ նաև մը հեռուէն երևցած ստեներ՝ նախ անոր կայմերը կը տեսնուին, և ստորին մասը ծովուն մէջ ընկղմած կ'երևի :

Եթէ ծովը հարթ ըլլար, նախ նաւուն ստորին մասը պէտք էր երեկը, որ կայմերէն աւելի հաստ է :

Երկրիս երեսը պատած է ջուր և ցամաք, բայց մեծադոյն մասը ջուր ըլլալով, հաղիւ երեք մասին մէկ մասը ցամաք երկիր է :

Յամաք երկրի վրայ կան լեռներ, դաշտեր, անասուններ, ձուրեր, այրեր և անասրատներ :

Երկրիս տակէն կ'երլեն տեսակ տեսակ մետաղներ, ինչպէս են՝ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ և այլն :

Երկրիս տակը մակերևոյթին պէս պարզ չէ, ո՛րչափ խորը երթանք՝ այնչափ ջերմութիւնը կ'աւելնայ, իւրաքանչիւր երեսուն մեթր խորութեան մէջ՝ ջերմութիւնը մէկ աստիճան աւելի է երկրիս մակերևոյթի ջերմութեանէն. երեք հազար մեթր խորութեան մէջ՝ հարիւր աստիճան, այսինքն՝ ջուրի եռալու աստիճանը, քան հազար մեթր խորութեան մէջ՝ վեց հարիւր վաթսուս և վեց աստիճան ջերմութիւն պիտի ըլլայ, ուր ամէն բան հալած և կրակ դարձած կը կարծուի :

Աշխարհս զլիսաւոր չորս կողմ՝ ունի. արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ :

Արևը ծագած կողմը՝ արևելք կ'ըսուի :

Արևը մտած կողմը արևմուտք :

Երեսս արևուն ծագած կողմը դարձուցած ատենս՝ ձախ կողմս հիւսիս է, և աջ կողմս հարաւ :

Երկիրս զլիսաւոր հինգ մասի կը բաժնուի. Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա և Ավստրալիա :

ԴԱՍ Ե.

Աճօղ :

Արակին կամ արևուն տարութենէն ջուրը շողիանալով վեր կելլէ և օդին մէջ կը ցրուի :

Այս գոլորշին շատնալով կը թանձրանայ , օդին մէջ կ'ատանդի և կ'ըսուի Աճօղ :

Ամպը երկրէս տասն և ութը հազար ոտքէն աւելի չ'կրնար բարձրանալ : Խիտա բարձր լեռներու գագաթները ամպերէն աւելի բարձր են . վասն զի այն տեղ այնչափ ցուրտ կրնէ , որ ամպերը վեր չեն կրնար ելլել , և երբ այն լեռանց վրայ դանուկ մարդ , ամպերը իրմէ վար կ'երևին : Ամպերուն մէջէն անոյնելու աստե՛ն՝ մտախտուղի մէջէ անոյնելու պես կ'ըլլայ :

ԴԱՍ Ը.

Յօղ, Եղէածն, Անջրե, Չի՛ծ և Աարկոօօր :

Յօղ կ'ըսուի առտուները դաշտերու վրայ իջած թացութիւնը , որ երկրէս վեր ելած գոլորշիներուն գիշերուան գովութենէն խլտանալով վար իջնայն է :

Երբ ցօղը ցուրտէն սառի Եղէածն կ'ըսուի :

Անջրը ջուրէն վեր ելած գոլորշին է , որ ցուրտէն միանալով կը ծանրանան և կաթիլ կաթիլ վար կը թափին :

Երբ անձրևի կաթիլները յանկարծական պաղութեամբ օդին մէջ կը սառին , ու վեցանկիւնի կամ գանաղան կերտելով վար կ'ինան՝ Չի՛ծ կ'ըսուին :

Աարկոօօրը սառած անձրև է , որ ինչպէս ատենը ելեկտրակա նութեամբ մէկ կողմէն միւս կողմը նետուելով կը խոշորնայ և ուժով վար կը թափի :

Կարկուտը սովորաբար ոլուի չափ կ'ըլլայ, բայց կաղինի և ընկուղի չափ կարկուտ իջած է :

ԴԱՍ Թ.

Արեւի Բնակիչները :

Աշխարհիս ամէն կողմը բնակող մարդոց թելը հազար միլիոնէն քիչ մը աւելի է :

Ասոնք թէ՛ գոյնով, թէ՛ հասակաւ, թէ՛ շեղումով և թէ՛ բնաւորութեամբ իրարմէ կը տարբերին, և հինդ գլխաւոր ցեղերու կը բաժնուին, որոնք են.

Ա. Ճերմակ կամ Կովկասային.

Բ. Պղնձագոյն կամ Մողոլ.

Գ. Սեւ կամ Եթովպական.

Դ. Շառագոյն կամ Ամերիկացի.

Ե. Թուխ կամ Մալայեան :

Կովկասային ցեղը, որ ամենէն քաղաքակրթեալն է, Հնդկաստանի սահմանէն կ'ըսկսի և կը տարածուի մինչև Եւրոպա. այս ցեղէն են Հայերը, Պարսիկները, բոլոր Եւրոպացիք, և ասոնցմէ Ամերիկա դացած գաղթականները, որք սպիտակագոյն են :

Մողոլի ցեղէն են Չինացիք, Ճարոնք, Թաթարք, և այլն, որոց դէմքը տափակ է, մօրուքը ցանցաւ և գոյնը սրճի :

Եթովպական ցեղը կը սլարունակէ Ափրիկէի բնիկները, որոց քիթը տափակ է, շրթունքը լայն, մազերը դուռղ և գոյնը սև :

Ամերիկացի ցեղը Ամերիկայի բնիկները կը սլարունակէ, որոնք թէև շառագոյն կը կոչուին, սակայն իրենց շատ ցեղերը սև, թուխ և պղնձագոյն են, հասակնին նուրբ է, և աչքերոնին ներս մտած :

Մալայեան ցեղը կը գտնուի Ավստրալիայի կղզիներուն մէջ, գոյներնին է թուխ և սև :

Աշխարհիս գրեթէ ամեն կողմի մարդոց սովորական բարձրութիւնն է երկուք ու կէս կանգունէն քիչ մը աւելի . բայց շատ ցուրտ երկիրներու մէջ, ինչպէս է Ղարմախ, ուր գրեթէ միշտ ձմեռ է, մարդիկ հազիւ երկու կանգուն բարձրութիւն ունին :

Սակայն աշխարհիս ամեն կողմը կարգէ դուրս հասակաւ մարդիկ կը գտնուին . կան այնպիսի մարդիկ, որոնք երեք ու կէս կանգունէն աւելի բարձրութիւն ունին և հսկայ կը կոչուին . ասոնց հակառակ՝ մէկ ու կէս կանգուն կամ աւելի կարճ մարդիկ իսկ կը գտնուին, որոնք թզուկ կ'ըսուին :

ԻՆՍ Ժ .

Քոչոր աշխարհի մէջ ութ հարիւր վաթսուս լեզուներ կան, բայց այս լեզուներէն զանազան ճիւղեր ելած են, որոնք մինչև հինգ հազար կը համրուին :

Աշխարհիս մէջ գլխաւորաբար չորս կրօնք կայ, այսինքն՝ քրիստոնէութիւն, մահմետականութիւն, հրէութիւն և կոապաշտութիւն :

Աշխարհիս բնակչաց կէսէն աւելին դեռ կոապաշտ են, երեք հարիւր միլիոնը քրիստոնեայ և հարիւր միլիոնի չափ մահմետական և հրէայ :

Քրիստոնեաներն ալ այսպէս կը բաժնուին . հարիւր քառասուն միլիոն Պատական, հարիւր միլիոն Քողորական, յիսուն միլիոն Յունադաւան, հինգ միլիոն Ղուսաւորչական, ևն :

Աշխարհիս մէջ շատ ժողովուրդներ կան, որոնք իրենց կենաց սրահպանութեանը համար ամենեւին նախաստորաստութիւն մը չեն ըներ, ո՛չ կրօնք կը ճանչնան և ոչ ազգութիւն, այլ քարայրներու, ճեղքուած ժայռերու և կամ քարերով ու ծառերու ուտերով շինուած խրճիթներու մէջ կը բնակին, և երբ անօթութիւնը զիրենք ստիպէ, այն ատեն կերակուր փնտռելու կ'ել-

լին : Այս ժողովուրդները վայրենի կ'ըստին , և կը գանուին Ասիոյ հիւսիսային կողմերը : Ավկիանիայի մէջ , Ափրիկէի հարաւային կողմերը և Ամերիկայի քանի մը մասերուն մէջ :


Բայց այն ժողովուրդները , որոնք քաղաքներու և դիւղերու մէջ միաբանութեամբ կը բնակին , օրէնքով կը կառավարուին , երկրացործութեան և աղու և ստից կը սրբապալին , քաղաքակրթեաց կը կոչուին :

ԴԱՍ ԺԱ .

ԵՒՐՈՊԱ

Երկիրս հինգ մասի կը բաժնուի ըսինք . Եւրոպա , Ասիա , Ափրիկէ , Ամերիկա և Ավկիանիա : Ասոնց իւրաքանչիւրին մէջ ալ զանազան տէրութիւններ և ազգեր կը գանուին :

Եւրոպան , որ միւս մասերուն ամենէն փոքրը , բայց ամենէն ծաղիկաւն ու բազմամարդն է , սասն և մեց զլիաւոր մասերու կամ տէրութիւններու կը բաժնուի :



ԼՈՆՏՈՆ


Ա . Բրիտանիա կամ Անգլիական միապետութիւն , որ ըսան

ու. Եօթմ միլիոն բնակիչ ունի. մայրաքաղաքն է Լոնստոն, որ վաճառակաճու թեւան մասին աշխարհիս ամենէն երևելի քաղաքն է, և դրեթի երկուք ու կէս միլիոն բնակիչ ունի: Երևելի քաղաքներն են Մէնչլաթըրը, Լիսիբոնը, Քիլմենսիէմ, Կոխանյուր և Տրալիսն:

Ը. Տանիմարդս, որուն բնակիչն է երկուք ու կէս միլիոն և մայրաքաղաքը՝ Քոբէնհաղ:

Գ. Էստոն ու Կորվեկիա. բնակիչս չորս միլիոն և մայրաքաղաքը՝ Սթոկոլմ:

Դ. Ռուսաստան, որուն բնակիչն է վաթսուե միլիոն, մայրաքաղաքը՝ Քեթրպուրի և գլխաւոր քաղաքները՝ Մոսկուա և Օւստրա:



ԲԱՐՒՁ

Ե. Գաղղիա, որ երեսուն ու մեց միլիոնի մօտ բնակիչ ունի. մայրաքաղաքն է Բարիզ, որ աշխարհիս երևելի քաղաքներէն մէկն է և մէկ ու կէս միլիոնէն աւելի բնակիչ կը պարունակէ:

Այս քաղաքիս մէջ մեռաւ Հայոց զերջին թագաւորը Լեւոն Զ :
Գաղղղոյ երեւելի քաղաքներն են Լիոն , Մարտիլիա , Պորտո ,
Սթրաղպուրի :

Ձ . Պէլճիա , որուն բնակիչն է չորս ու կէս միլիոն և մայրաքաղաքը՝ Պրիւսէլ :

Է . Հոլանտա , որուն բնակիչն է երեք միլիոն և մայրաքաղաքաւ Լա-Հէ :

Ը . Չուիցերի , որ քսան ու երկու նահանգի բաժնուած է , և երեք միլիոնի մօտ բնակիչ ունի . զլիսաւոր քաղաքներն են Պալ , Պեռնա , Ճինսերա և Յուրիս :

Թ . Գերմանիա , որ երեսուն և ութը դաշնակից տէրութիւններու կը բաժնուի , և քսաասուն ու հինգ միլիոն բնակիչ ունի . զլիսաւոր քաղաքներն են Միւնիխ , Կուրինպէրկ , Տրէզարն , Աննուլէր , Սթիւթկարտ :


Ժ . Աւստրիա , որուն բնակիչն է երեսուն միլիոն , եւ մայրաքաղաքը՝ Վեննա :

ԺԱ . Բրաւսիա , որուն բնակիչն է երեսուն երկու միլիոն և մայրաքաղաքը՝ Պէռլին :

ԺԲ . Բորթուկալ , որուն բնակիչն է երեք ու կէս միլիոն և մայրաքաղաքը Լիսպոնա :

ԺԳ . Սպանիա , որուն բնակիչն է տասն ու չորս միլիոն և մայրաքաղաքը Մատրիա :

ԺԴ . Իտալիա , ուր առաջ տասնի չափ տէրութիւններ կային , բայց հիմա մեծ մասը միացած են և զլիսաւոր քաղաքներն են Թուրին , Միլան , Հռոմ , Նաբոլի : Բոլոր Իտալոյ բնակիչն է քսան ու մէկ միլիոն :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԺԵ. Եւրոպայի Տաճկաստան, որուն բնակիչն է տասն և հինգ
ու կէս միլիոն և մայրաքաղաքը Կոստանդնուպօլիս, որ մէկ միլի-
ոնէն աւելի բնակիչ տնի :

ԺԶ. Յունաստան, որուն բնակիչն է ինը հարիւր հազար և
մայրաքաղաքը Աթէնք :

ԳԸՍ ԺԲ.

ԱՍԻԱ

Ասիան տասն և մէկ գլխաւոր մասերու կը բաժնուի :

Ա. Ասիոյ Ռուսաստան, բնակիչը հինգ միլիոն, գլխաւոր քա-
ղաքները Թուպուք և Տիբիս կամ Թիֆլիզ, որուն մօտ է Սուրբ
Էջմիածին :

Բ. Ասիոյ Տաճկաստան, բնակիչը տասն ու մէկ միլիոն, գլխ-

խառք քաղաքները Ջմուռնիա, Պուրսա, Գամասիա, Պաղատա և Երուսաղէմ :

Գ. Հայաստան . բնակիչը գրեթէ հինգ միլիոն , գլխաւոր քաղաքները Կարին կամ Երզրում , Տիգրանակերտ և Վան :

Գ. Արարիա . բնակիչը տասն ու երկու միլիոն , գլխաւոր քաղաքը Մէքքէ :

Ե. Պարսկաստան . բնակիչը ինը միլիոն , մայրաքաղաքը Գեհրան և գլխաւոր քաղաքները Սասանան և Շիրազ :

Զ. Աֆղանիստան . մայրաքաղաքը Գապուլ :

Է. Պէրսիաստան . գլխաւոր քաղաքը Քէլաթ :

Ը. Թուրքաստան . գլխաւոր քաղաքներն են Պուխարա և Սըմերղանա :

Թ. Հնդկաստան . բնակիչը հարիւր յիսուն միլիոն , մայրաքաղաքը Կալկաթա :

Ժ. Չինաստան . բնակիչը երեք հարիւր վաթսուն երեք միլիոն , մայրաքաղաքը Քեքին , որ երկու միլիոն բնակիչ կը պարունակէ :


ԺԱ. Չարոն . բնակիչը քառասուն միլիոն , մայրաքաղաքը Կոստոք միլիոն մը բնակիչ ա՛նի :

ԴԱՍ ԺԳ .

ԱՓԲԿԵ

Ափրիկէն տասն եւ ութը գլխաւոր մասերու կը բաժնուի : Եգիպտոս . բնակիչը չորս միլիոն , մայրաքաղաքը Գահիլէ կամ Մըքքէ , գլխաւոր քաղաքը Ադեքսանդրիա :





ԹՈՒՆՈՒՉ

Պէրսիւրիտան , բնակիչը տանն եւ ա թ միլիոն , գլխաւոր քաղաքները Թուհուզ , Մարոք , Շէղայիր :

Մահարա , որ բնագարձակ անապատ մ'է եւ մէկ միլիոն բնակիչ ունի գրեթէ բոլորն ալ վայրենի :

Ափրիկէի միւս մասերուն անուններն են Սենեկամպիա , Հիւսիսային Առինէա , Նիկիտիա , Նուպիա , Նիթուպիա , Ատէլ , Այան , Հարաւային Առինէա , Օթէնթայուոյ երկիրը , Գլուխ Բարեյուսոյ , Գափրասան , Մոնումաթափա , Մոլանպիր , Չանկիւրար եւ անձանօթ երկիրը :

Ամերիկան տանն եւ հինգ գլխաւոր մասերու կը բաժնուի , վեցն հիւսիսային կողմն են :

Ա . Ամերիկայի Առաւստան , որուն հիւսիսային կողմը գրեթէ անձանօթ է , բնակիչը միայն յիսուն հազար , գլխաւոր քաղաքը Նոր Արլանկէլ :

Բ. Կրօնականաբան . գրեթէ սառնասրտու է եւ բնակիչը հաղիւտասր հաղար :

Գ. Նոր բրիտանիա . բնակիչը երկուք ու կէս միլիոն , գլխաւոր քաղաքը Քէպէք :

Միացեալ Նահանգք . բնակիչը քսան երեք միլիոն , գլխաւոր քաղաքներն են , Նիւ-Եօրք , Փիլատէլիա , Նոր Օրլէան , Պոսթըն , Պալմիրա եւ Ուոշինգթըն :

Ե. Մեքսիկո . բնակիչը ութ միլիոն :

Զ. Կուսթեմարա . բնակիչը երկու միլիոն :

Էնր Հարաւայիններն են :

Գոլոմալիա , որ երեք հասարակապետութեանց բաժնուած է . բնակիչը չորս ու կէս միլիոն , գլխաւոր քաղաքները Սանթա-Ֆելտէ Պոկոթա , Քուիթօ Գարագաս :

Կույանա , որուն մէկ մասը Անդղիացւոց ձեռքն է , մէկ մասը Հոլանտացւոց եւ միւսը Գաղղիացւոց , բնակիչը երկու հարիւր քսան հաղար :

Պրաղիլ . բնակիչը հինգ միլիոն , մայրաքաղաքը Ռիօ-Ժանէյրօ :

Բէրու , բնակիչը մէկ ու կէս միլիոն , մայրաքաղաքը Լիմա :

Իսկ Պոլիւայի , Պարակուայի , Ռիօ ռէլա Բլաթայի , Քիլիի հասարակապետութեանց եւ Բաթանիայի երկիրներուն մէջ հինգ միլիոն բնակիչ կայ :

ՈՎԿԻԱՆԻԱ

Ովկիանիան երեք մեծ մասերու կը բաժնուի . բնակիչը քսան ու չորս միլիոն , շատը սեւ , վայրենի եւ սրակասամիտ :

Ա. Մալէզիա , որուն գլխաւոր մասերն են Պորնէօ , Ճաւա եւ Սումատրա . Ճաւայի գլխաւոր քաղաքը Պաթարիա :

Բ. Աւսթրալիա , որուն գլխաւոր կողմներն են Նոր Հոլանտա , Վանաթակն , Նոր Կուինէա :

Գ. Բոլոնէզիա , որուն մէջն են Նոր Զելանտա , Մարիանեան , Գաուլիանեան եւ Սէանտիյ կղզիները :

ՎԵՐՁ





